«Պրոակտիվ հասարակություն»
իրավապաշտպան ՀԿ

Հելսինկյան
քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

# «Զորակոչի գործընթացի մոնիթորինգ» ծրագրի արդյունքներ

# ԱՄՓՈՓՈՂ ԶԵԿՈՒՅՑ

Ծրագիրն իրագործվել է Հայաստանի «Զինվորի մայր», Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից՝ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

*Հետազոտության մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետներին:*

**ISBN 978-92-9235-851-8**

# Զ Ե Կ Ու Յ Ց

## ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱԲԿԻՐ, ՆՈՐ ՆՈՐՔ ԵՎ ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ, ՃԱՄԲԱՐԱԿՈՒՄ, ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ, ԳՈՐԻՍՈՒՄ, ԿԱՊԱՆՈՒՄ 2009 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Զեկույցը պատրաստվել է հաշվետվությունների պատրաստման, ինչպես պետական (միջպետական), այնպես էլ ոչ կառավարական իրավապաշտպան ինստիտուտների համընդհանուր միջազգային փորձի հիման վրա, որը ենթադրում է բազմաթիվ դեպքերում տեղեկատվության անմիջական աղբյուրների չհրապարակում:**

Ծրագրի ղեկավար՝ Գրետա Միրզոյան
Ծրագրի մասնագետ՝ Անահիտ Հովնանյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Մոնիթորինգի նկարագրությունը և նպատակը ....5

2. Զորակոչիկների ոչ բավարար իրազեկումը ....7

3. Քաղաքացիների իրավունքների խախտումները բժշկական զննման (հետազոտության) ընթացքում ....9

4. Զորակոչի ժամկետների խախտումներ և անօրինական կանչեր զինկոմիսարիատներ ....12

5. Շահառուների գնահատականների վերլուծությունը զորակոչի ընթացքում ....13

6. Զեկույցի ամփոփում ....15

7. Հետևություններ և առաջարկներ ....16

## 1. Մոնիթորինգի նկարագրությունը և նպատակը

Ներկայիս հայ հասարակության համար մարդու իրավունքների խնդիրը զորակոչի ընթացքում շարունակում է մնալ արդիական: ՀՀ Սահմանադրությունը Հայրենիքի պաշտպանությունը հռչակում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու պարտականություն, ինչպես նաև նշում է, որ ՀՀ քաղաքացին օրենքով սահմանված կարգով պարտավոր է մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը (գլ. 2, հ. 46):

Տվյալ սահմանադրական նորմը նշանակում է, որ և զորակոչի կազմակերպումը, և զինվորական ծառայությունը պետք է ընթանան օրենքով սահմանված կարգին համապատասխան: Տվյալ կարգից շեղումը, այդ թվում՝ զորակոչի ընթացքում, դառնում է մարդու իրավունքների խախտման պատճառ, որը անհամատեղելի է զինծառայողի՝ որպես Հայրենիքի պաշտպանի բարձր կարգավիճակի հետ:

Առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի, ինչպես նաև տարկետման կամ ազատման իրավունք ունեցող քաղաքացիների զորակոչը, զորակոչիկների մարդկային արժանապատվության, նրանց իրավունքների և ազատությունների խախտումը ապակայունացնում են ինչպես հասարակությունը, այնպես էլ բանակը:

2009 թ. փետրվարի 1-ից նոյեմբերի 30-ը «Զինվորի մայր» ՀԿ-ն անցկացրել է մոնիթորինգ՝ զորակոչի ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտման բացահայտման ուղղությամբ:

Մոնիթորինգը, որի արդյունքները ներկայացված են այս զեկույցում, անցկացվել է Երևանի Արաբկիր, Նոր Նորք և Էրեբունի համայնքներում, ինչպես նաև Ճամբարակում, Մարտունիում, Գորիսում և Ղափանում:

Անհրաժեշտ է նշել, որ օրենսդրության պահպանման նկատմամբ պատասխանատվությունը առաջին հերթին կրում են պետական մարմինները: Ազգային բանակի ժողովրդավարացման շրջանակներում իրականացվող բարեփոխումների արդյունքում հնարավոր դարձավ հստակ սահմանել զինվորական գերատեսչությունների և հասարակական ինստիտուտների պատասխանատվության աստիճանը բանակում տեղի ունեցող իրավախախտումների բացահայտման գործում: Այս գործընթացում նկատելի է նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ցուցաբերված էական հետաքրքրությունը անցկացվող մոնիթորինգի նկատմամբ, որը հանգեցրեց հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը: Շահագրգիռ զինվորական գերատեսչության ներկայացուցիչ մայոր Թորգոմ Նալբանդյանի անմիջական մասնակցությունը ծրագրի ընթացքին հեշտացրեց հարցումների անցկացումը, մոբիլիզացրեց զինկոմիսարիատների կազմակերպչական հնարավորություններն ու պատասխանատվությունը:

Հաշվետվության համար տեղեկատվության աղբյուր են հանդիսացել հետևյալ խմբերի 3600 շահառուների՝ զորակոչիկների, զինվորների մայրերի, զորացրվածների, զինկոմիսարիատների, դպրոցների, հիվանդանոցների/ պոլիկլինիկաների և պետական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ անցկացրած հարցումները:

Հաշվի են առնվել նաև 300-ից ավելի զորակոչիկների, նրանց ընտանիքների անդամների դիմումները քաղաքացիների իրավունքների՝ նշված ժամանակահատվածում տեղ գտած խախտման փաստերի վերաբերյալ:

Ինչպես հայտնի է, նույնիսկ իրավական բարձր ցուցանիշ ունեցող երկրներում հնարավոր չէ խուսափել օրինախախտման դեպքերից, սակայն անհրաժեշտ է մշակել համընդհանուր և ընդունելի երաշխիքներ և մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն մարդու և քաղաքացու առաջնահերթ իրավունքների պաշտպանությանը: **Այդպիսի մեխանիզմներից է հասարակական վերահսկողության ինստիտուտը, տվյալ դեպքում՝ զինկոմիսարիատների և զորակոչային հանձնաժողովների գործունեության նկատմամբ:** Հասարակության համար պետք է թափանցիկ լինեն պետական գործունեության բոլոր ոլորտները, բացառությամբ պետական կամ օրենքով պաշտպանվող գաղտնիք համարվող տեղեկությունները: Առաջին հերթին դա վերաբերում է պետական ինստիտուտներին, որոնք իրենց գործունեությամբ ուղղակիորեն շոշափում են մարդու իրավունքներն ու ազատությունները, այդ թվում նաև այն մարմինների, որոնք զբաղվում են զորակոչով:

Մոնիթորինգի հիմնական նպատակն է հարցման արդյունքների վերլուծությունը, նմանատիպ մոնիթորինգների անցկացման մեթոդոլոգիայի հիմունքների մշակումը և ներկայացումը շահագրգիռ պետական և զինվորական գերատեսչություններին՝ մարդու և քաղաքացու իրավունքների խախտումների բացահայտման վերաբերյալ իրական արձագանք ստանալու և հետագայում այդ դեպքերը կանխարգելելու և բացառելու համար:

Միաժամանակ, զեկույցի նպատակն է իշխանական մարմինների ուշադրությունը հրավիրել ոչ միայն իրավախախտումների եզակի օրինակներին, այլև համակարգային խախտումներին, որոնք տեղ են գտել ազգային բանակի զորակոչի ընթացքում: **Զեկույցի նպատակն է ներկայացնել քաղաքացիների հարցման վերլուծության արդյունքում հայտնաբերված հիմնախնդիրներն ու հարցերը:**

«Զինվորի մայր» ՀԿ-ն ելնում է այն դրույթից, որ ազգային բանակում զինծառայության հեղինակության բարձրացման, ինչպես նաև դրա և զիվորական ծառայության նկատմամբ ողջ հասարակության վերաբերմունքի փոփոխման կարևոր պայման է զիվորական կոմիսարիատների և զորակոչային հանձնաժողովների աշխատակիցների կողմից զորակոչի ընթացքում օրենսդրական նորմերի, քաղաքացու իրավունքների և ազատությունների անվերապահ պահպանումը, այսինքն՝ նրանց աշխատանքային պրակտիկայի վերանայումը:

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տվել, որ առանց բացառության բոլոր համայնքներում, որտեղ կատարվել է հետազոտությունը, զինկոմիսարիատների և զորակոչային հանձնաժողովի աշխատանքները ընթացել են խախտումներով, որոնք առանձին դեպքերում կրել են կոպիտ բնույթ: Գրանցվել է քաղաքացիների սահմանադրական իրավունքների խախտումների մի ամբողջ շարք՝ սկսած դատական պաշտպանություն ստանալու իրավունքից, մինչև առողջության պաշտպանության և կրթության իրավունք:

Հարցաթերթիկների ողջ ծավալի վերլուծությունը թույլ է տվել վեր հանել զորակոչիկների իրավունքների խախտումների վիճակագրությունը:

Հարցումն անցկացվել է Երևանի 3 շրջաններում և ՀՀ մարզերի 4 քաղաքներում: Մարզերի շահառուների մեջ հարցման մասնակիցների 58.2 %-ը քաղաքաբնակ է: Շահառուների ողջ թվի (1800 մարդ) միայն 8.4 %-ը (զորակոչիկներ) պատասխանել է, որ կրթություն չունի: Միջնակարգ կրթություն միջինում ունի 17.5 %-ը, միջին մասնագիտական կրթություն՝ 21.1 %-ը, թերի բարձրագույն՝ 11.4 %-ը, գիտական աստիճան՝ 0.6 %-ը (5 մարդ):

Գարնանային և աշնանային զորակոչի համեմատական պատկերը տարբերվում է որակական ցուցանիշներով: Ներկայացված աղյուսակից երևում է, որ աշնանային զորակոչի ժամանակ նվազել է կրթական մակարդակը գրեթե բոլոր ցուցանիշներով: Հարցման մասնակիցների 9,2 %-ը (զորակոչիկների թվից) չունի կրթության բավարար աստիճան: Միջնակարգ կրթություն ստացել է 21,8 %-ը, միջնակարգ մասնագիտական՝ 19,8 %-ը, բարձրագույն կրթություն ունի հարցման մասնակիցների 16,2 %-ը (թիվը ներառում է նաև մինչև 35 տարեկան բժիշկներին), թերի բարձրագույն կրթություն ունի 8.9 %-ը, ասպիրանտ են 5.1 %-ը, 2 մարդ (0,4 %) ունի գիտական աստիճան: Հատկանշական է, որ կրթություն չունեցող զորակոչիկների մեծ մասը Ճամբարակից և Մարտունուց է՝ 61,1 %-ը:




Պատկեր 1. Հարցման մասնակիցների կրթական մակարդակի համեմատությունը ըստ զորակոչերի:

Ընդհանուր խախտումների քանակից առավել զանգվածային բնույթ են կրում բժշկական հետազոտության ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը (46.2%):

Այլ տիպի խախտումներ հանդիպել են հետևյալ հաճախականությամբ`

- զորահավաքի ժամանակ զորակոչիկներին իրենց իրավունքների և ընթացակարգի մասին ոչ բավարար իրազեկում` 27.57 %,
- զինկոմիսարիատներ կանչելու սահմանված կարգի խախտումներ` 11.66 %,
- ներկայացվող փաստաթղթերի ընդունումից հրաժարվելու հետ կապված խախտումներ` 6.24 %:




Պատկեր 2. Հիմնական խախտումները զորակոչի ընթացքում:

## 2. Զորակոչիկների ոչ բավարար իրազեկումը

Զորակոչիկների իրավունքների խախտումների հիմնական պատճառներից մեկը զորակոչիկների և նրանց ընտանիքի անդամների ցածր իրավական մշակույթը և իրավագիտակցությունն է:

Հարցման մասնակից զորակոչիկների միայն 9.7 %-ն է նշել, որ զորակոչի կարգի վերաբերյալ տեղեկատվությունը ստացել են դպրոցում, սակայն զինկոմիսարիատի պատասխանատուների պատասխանները վկայում են այն մասին, որ զորակոչի կարգի վերաբերյալ բացատրական աշխատանքներ դպրոցում տարվում են «Իրավունքի հիմունքներ» (42.8 %) և «Զինվորական պատրաստություն» (35.7 %) առարկաների դասերի ժամանակ:

Զինվորների մայրերի 63,2 %-ը կարծում է, որ տեղյակ է, թե որ դեպքերում զորակոչիկը կարող է օգտվել բնակավայրին մոտիկ ծառայելու, զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու կամ այլընտրանքային ծառայություն անցնելու իրավունքից, սակայն 36.38 %-ն այդ տեղեկություններին չի տիրապետում: Հարցումների տվյալներից երևում է, որ առավել տեղեկացված են Երևանի Արաբկիրի շրջանի, Գորիսի և Կապանի մայրերը` 82.8 %, մինչդեռ Մարտունու մայրերի միայն 32.1 %-ն է տեղյակ այդ իրավունքների մասին:

Այս հարցի վերաբերյալ տեղեկացված լինելու ցուցանիշը մոտ 2 %-ով բարձր է զորակոչիկների մոտ` 65.4 %: Սակայն երբ դիտարկվում են մյուս հարցերի պատասխանները, որոնք ուղղակիորեն վերաբերում են տարկետումների, արտոնությունների հանգամանքներին, պարզվում է, որ այս դեպքում տեղեկացված զորակոչիկների թիվը զգալիորեն նվազում է` մինչև 45-46 % : Տեղեկատվության պակասը առավել ցայտուն է Ճամբարակում և Մարտունիում, որտեղ ցուցանիշը նվազում է մինչև 28,9 %:




Պատկեր 3. Իրավունքների վերաբերյալ տեղեկացվածությունը ըստ շջանների:

Վերը նշված հանգամանքն ավելի է բարդանում, երբ զորակոչիկներից թաքցվում է նրանց իրավունքների մասին տեղեկատվությունը, և նույնիսկ մատուցվում է ուղղակի ապատեղեկատվություն՝ հաճախ նպատակ ունենալով համոզել զորակոչիկին իրադրության անելանելիության մեջ, թեև առկա են հարցի լուծման իրավական եղանակներ:

Այսպես, քաղաքացիների մեծամասնությունը չի տարբերում **զորակոչային հանձնաժողով** և **զինկոմիսարիատ** հասկացությունները: Այն հարցին, թե ինչպես է իրականանում զորահավաքը զինկոմիսարիատներում, քաղաքացիների մեծամասնությունը առաջվա պես պատասխանում է, որ զորակոչում է զինկոմիսարիատը, մասնավորապես զինկոմիսարը: Այն, որ զորակոչային հանձնաժողովը համարվում է քաղաքացիական մարմին և պետք է կազմված լինի մի քանի անդամներից (այդ թվում՝ ժողովրդական կրթության, ներքին գործերի բաժնի ներկայացուցիչներից և այլն), զորակոչիկներից շատ քչերն են լսել:

Հարցման մասնակիցների 52.8 %-ը գտնում է, որ զորակոչիկին կարելի է կանչել հեռախոսազանգի միջոցով, իսկ զորահավաքի ծանուցագիրը տալ ծնողներին կամ հարևաններին՝ հետագայում այն զորակոչիկին փոխանցելու համար:

Պարզ է, որ նման անգրագիտության պատճառները բազմաթիվ են, որոնցից մեկը զորակոչիկների իրավունքների մասին բավարար ծավալի տեղեկատվության բացակայությունն է:

Ինչպես նշել է հարցման մասնակիցների մեծամասնությունը (54.6 %) զինկոմիսարիատներում փակցված են պաստառներ և հայտարարություններ՝ հիմնականում զորակոչիկների պարտականությունների և զինծառայությունից խուսափելու համար նախատեսված պատասխանատվության մասին օրեսդրական մեջբերումներով, բայց ոչ նրանց իրավունքների մասին:

Հնարավոր է, որ զորակոչիկների ապատեղեկատվացման հարցում որոշակի դեր են խաղում զանգվածային լրատվամիջոցները: Այսպես, «Սահմանված կարգի խախտմամբ ժամկետային զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո կազմակերպություն սկսեցին հաճախել ծառայության տարիքի հասած երեխաների բարեկամները՝ հետաքրքրվելով տույժի գումարի չափով, որը վճարելով՝ զորակոչիկը «փրկագնով ազատվում է բանակից»: Նրանք հենվում էին մամուլում հրատարակված հոդվածների վրա, որոնց հեղինակները բավարար չափով ծանոթ չեն եղել օրենքի տեքստին և իրենց հոդվածներում չեն հիշատակել այն անձանց տարիքը, որոնք կարող են օգտվել օրենքից: Երբեմն հրապարակված տեղեկություններում ուշադրություն չեն դարձնում օրենքի ընդունման ժամկետների վրա՝ ընթերցողների մոտ առաջացնելով մոլորություն:

Կազմակերպության մոնիթորների կողմից հարցում անցկացնելու ժամանակ նշվել է, որ առանձին նորմատիվ ակտեր, մասնավորապես ռազմաբժշկական փորձաքննության Կարգը, զինկոմիսարիատների աշխատակիցները ներկայացնում են որպես «ծառայական օգտագործման», «գաղտնի» տեղեկատվություն, որը ոչ մի դեպքում կողմնակի անձանց չի կարելի տրամադրել:

Կազմակերպությունը դեռ 2001 թ. «Մեր որդին և ազգային բանակը» գրքում տեղադրել է հիվանդությունների ցուցակը, ըստ որի որոշվում է զորակոչիկների պիտանիության աստիճանը: Բազմաթիվ զորակոչիկներ, ովքեր առողջության հետ կապված խնդիրներ ունեն, կարող են օգտվել այդ տվյալներից:

Մոնիթորինգի արդյունքում պարզ դարձավ, որ զորակոչիկները և նրանց ծնողները շատ քիչ են օգտվում զորակոչային հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրենց իրավունքներից: Այն հարցին, թե ներկայացվել են արդյոք բողոքներ զորակոչի ընթացքի վերաբերյալ որևէ պատկան մարմին, մայրերի միայն 4.6 %-ն է պատասխանել դրական և 3.1 %-ը՝ բացասական: Զորացրվածներն այդ հարցին պատասխանել են ձևական, իսկ 59.8 %-ը հրաժարվել է պատասխանելուց: Բողոքների պասիվության պատճառներին վերաբերող 5 հարցին ընդհանուր առմամբ պատասխանել է մի քանի մարդ՝ 0.3 %:

Արձանագրվել են զորակոչիկների կողմից բողոքի դեպքեր՝ իրենց անձնական գործերից փաստաթղթերի անհետացման կապակցությամբ: Յնարավոր է, որ որոշ փաստաթղթեր կարող են անհետանալ կամ սխալ տեղում գտնվել զինկոմիսարիատի աշխատակիցների զբաղվածության և փաստաթղթերի մեծ ծավալի պատճառով, սակայն որոշ դեպքերում առկա է զինակոչիկի անձնական գործից զորակոչը խոչընդոտող փաստաթղթերի դիտավորյալ առգրավման հավանականություն: Այսպես, զորակոչիկ N-ի սխալ զորակոչի և մահվան դեպքի քննության ընթացքում հաստատվել են զինկոմիսարիատից զորակոչիկի անձնական գործից հիվանդության մասին վկայող փաստաթղթերի բացակայության փաստերը:

Կազմակերպության՝ տարիների աշխատանքը զորակոչի ընթացքում տեղ գտած իրավախախտումների հայտնաբերման ուղղությամբ ցույց է տալիս, որ այդ ոլորտում կան դրական տեղաշարժեր, որոնք պայմանավորված են զինկոմիսարիատի աշխատանքային ոճի փոփոխությամբ, զորահավաքի ընթացքի նկատմամբ վերահսկողության ուժեղացմամբ, վերահսկողություն իրականացնող ՅԿ-ների ներգրավմամբ: Սակայն իրավիճակը դեռ հեռու է իդեալականից: Պատճառներից մեկը ապացույցների հավաքման և, որպես հետևանք, օրինախախտումների այդ խմբի նկատմամբ պատժամիջոցների կիրառման դժվարությունն է, քանի որ օրենքը շրջանցող զինկոմիսարիատների աշխատակիցները գործում են զգուշությամբ, իրենց պահանջները ձևակերպելով բանավոր, ոչ մի տեղ չգրանցված խոսակցությունների ժամանակ:

Այս տեսանկյունից, զորակոչիկների և նրանց ընտանիքների իրավական տեղեկացումն ու ուսուցումը կտրուկ նվազեցնում են ապակողմնորոշման ռիսկերը զորակոչի գործընթացի ժամանակ: Նման կարգի տեղեկատվության տարածումը պետք է կազմակերպվի նաև զինվորական գերատեսչությունների մասնակցությամբ: Օրինակ՝ զինկոմիսարիատներում տեղադրված տեղեկատվական վահանակների վրա ավելի մեծ տեղ հատկացվի զորակոչիկի իրավունքների պաշտպանության մեխանիզմների պարզաբանմանը:

### 3. Քաղաքացիների իրավունքների խախտումները բժշկական զննման (հետազոտության) ընթացքում

Բժշկական զննումը զորակոչիկի ֆիզիկական զարգացվածության, առողջական վիճակի ուսումնասիրումը և գնահատումն է՝ զինվորական ծառայության համար նրա պիտանիության որոշման նպատակով:

Բժշկական զննման ընթացքում եթե հնարավոր չի լինում տալ բժշկական եզրահանգում քաղաքացու՝ զինվորական ծառայության համար պիտանիության վերաբերյալ, օրենքով նախատեսված է հնարավորություն զորակոչիկին ուղեգրելու ստացիոնար կամ ամբուլատոր հետազոտության մեկ այլ բժշկական հաստատություն:

Քաղաքացիների իրավունքների խախտումները բժշկական զննման ընթացքում ամենատարածվածն են և հղի են բացասական հետևանքներով: Ինչպես արդեն նշվել է սույն զեկույցի ներածությունում, նման խախտումները, որոնց համար քաղաքացիները դիմում են իրավապաշտպան կազմակերպությունների օգնությանը, առավել զանգվածային են և կազմում են բոլոր խախտումների մոտ կեսը՝ 46.2 %:

Մոնիթորինգը հերթական անգամ ապացուցեց, որ չնայած զորակոչիկներին իրենց իրավունքների մասին իրազեկման ուղղությամբ կազմակերպության կողմից հանրապետության ողջ տարածքում իրականացված հսկայական աշխատանքներին (սեմինարներ, հանդիպումներ, օրենքների տեքստերի և սեփական տեղեկատվական հրատարակումների տարածում և այլն)՝ քաղաքացիները տեղեկացված չեն բժշկական հիմունքներով տարկետման իրենց իրավունքների մասին, չգիտեն, թե որ փաստաթղթում է այն ամրագրված, ինչպես կարելի է ծանոթանալ այդ փաստաթղթին: Բացի այդ, ընտանիքներում հաճախ առկա են լիարժեք հետազոտության և բուժման համար ֆինանսական խնդիրներ: Ոչ պակաս դեր են խաղում նաև գյուղերում բժշկական հաստատությունների բացակայությունը և հիվանդանոցների՝ բնակավայրերից հեռու տեղակայված լինելը և ամենաէականը՝ երեխաների առողջության մասին հոգալու մշակույթի պակասը և ծնողների միամիտ հավատը առ այն, որ զինկոմիսարիատում բժշկական զննումն ի հայտ կբերի բոլոր հիվանդությունները, և հիվանդ երիտասարդը կազատվի զորակոչից:

Վերջին տարիներին, սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված, նկատվում է զորակոչային տարիքի երեխաների առողջության վատթարացում: Միաժամանակ, անտեսվում են զորակոչիկի առողջական վիճակի մասին գանգատները:

Ինչպես հայտնաբերվել է մոնիթորինգ իրականացված գրեթե բոլոր մարզերում, բժշկական չափորոշիչներով զինծառայության համար պիտանիության կատեգորիաների որոշումը հաճախ կատարվում է առանց անհրաժեշտ մանրամասնության, առանց զորակոչիկի առողջական վիճակն արտացոլող բժշկական փաստաթղթերի:

Ըստ հարցման՝ զորակոչի ընթացքում անհրաժեշտ բժշկական քննում անցել է շուրջ 72.8 % զորակոչիկ, 7.4 %-ը չի անցել տեխնիկական միջոցների բացակայության պատճառով, 3.7 %-ը նշել է, որ համապատասխան հետազոտություն չի անցել բժիշկների անփույթ վերաբերմունքի պատճառով, զորակոչիկների 4.6 %-ը համարում է, որ իրենց չեն ուղարկել թանկարժեք հետազոտության՝ չնայած բժիշկների խորհուրդներին:




Պատկեր 4. Զորակոչի ժամանակ մասնագիտացված հետազոտում անցնելը.

A. չեն ուզել անցնել,
B. չեն անցել տեխնիկական միջոցների բացակայության պատճառով,
C. չեն անցել բժիշկների անփութության պատճառով
D. չեն անցել թանկարժեք հետազոտությունների ուղեգիր չունենալու պատճառով:

Այս ամենի հետ մեկտեղ, 2009 թ. գարնանը և աշնանը զորացրվածների 8.5 %-ը նշում է, որ հիվանդություններ են ձեռք բերել զինվորական ծառայության ընթացքում, իսկ 14.2 %-ը հիվանդ են եղել մինչ զորակոչը և իրենց հիվանդության մասին տեղեկացրել են զորակոչային հանձնաժողովին:

45.7 %-ը հնարավորություն են ունեցել բժշկական զննման ժամանակ ներկայացնել առողջական վիճակի մասին իրենց փաստաթղթերը կամ գանգատները, սակայն պարզվել է, որ փաստաթղթերի 20.5 %-ը վստահություն չի ներշնչել, իսկ զորակոչիկների 10.2 %-ի փաստաթղթերը դիտարկվել են ոչ հիմնավորված, 23.3 % զորակոչիկներ պարզապես այդ հարցին չեն պատասխանել: Զինվորների մայրերի շրջանում անցկացված հարցումներն այլ պատկեր են տվել: Հարցումներին մասնակցած մայրերի 42.8 %-ը համարում է, որ նախկինում ներկա-

յացրել են համապատասխան բժշկական փաստաթղթեր իրենց տղաների առողջական վիճակի վերաբերյալ կամ իրենց գանգատները, 22 % -ը պատասխանել է, որ ներկայացված փաստաթղթերը ուշադրության չեն արժանացել, իսկ 31.8 %-ն այս հարցին չի պատասխանել:




Պատկեր 5. Ունեցած բժշկական փաստաթղթերի ներկայացումը զինկոմիսարիատ.
A - հնարավորություն են ունեցել ներկայացնելու փաստաթղթերը,
B - փաստաթղթերը «հավատ չեն ներշնչել»,
C - փաստաթղթերը անհիմն են,
D - չեն պատասխանել:

Առողջական վիճակի հետ կապված գանգատների առկայությամբ 39.2 % զորակոչիկներ ուղղարկվել են կրկնակի բժշկական զննման, 7.4 %-ն ստացել են տարկետում, իսկ 14 %-ին անհիմն մերժել են: Հարցման մասնակիցների 34.5 %-ն այդ հարցին չի պատասխանել:

Զինակոչիկների մայրերի 80.2 %-ի բժշկական քննման արդյունքները գանգատվելու հիմքեր չեն ունեցել, մայրերի 2.8 %-ը բողոքարկման չի դիմել՝ համարելով, որ չի հասնի համապատասխան արդյունքի: 2.8 %-ի դիմումները դրական լուծում են ստացել:

«Ձեր կարծիքով, ի՞նչն է պատճառը, որ հիվանդ և զինծառայության համար ոչ պիտանի զորակոչիկները հայտնվում են բանակում» հարցին հարցման մասնակիցների 4 խմբերը, ում հարցաթերթիկներում զետեղված էր այդ հարցը, պատասխանել են հետևյալ կերպ (աղյուսակում նշված են տոկոսները).

| Հարցի պատասխանի տարբերակը | Դպր. | Հիվ/պոլ. | Զ/կ | ՏԻՄ |
|---|---|---|---|---|
| Հիվանդության քողարկված վիճակը | 24.5 | 42,5 | 23.1 | 32.5 |
| Բժիշկների անուշադրությունը, անփութությունը | 29.5 | 21,0 | 13.0 | 34.9 |
| Զորակոչիկի կողմից գանգատների քողարկումը՝ հիվանդոտ չքվալու համար | 18.5 | 22,5 | 45.0 | 22.5 |
| Զորակոչիկի կողմից գանգատների քողարկումը՝ ամոթի զգացումից ելնելով | 12.6 | 20,0 | 51.1 | 17.5 |
| Զորակոչիկի կողմից գանգատների քողարկումը՝ այլ պատճառով | 9.8 | 18.8 | 36.2 | 7.5 |
| Կոռուպցիան | 35.0 | 28.1 | 11.2 | 45.0 |
| Զինկոմիսարիատների ոչ բավարար տեղեկացվածությունը զորակոչիկի ընտանեկան դրության, առողջական վիճակի վերաբերյալ | 7.0 | | 21.8 | 13.7 |
| Դպրոցների, մարզպետարանների, այլ իրավասու մարմինների աշխատանքում առկա թերությունները, ինչի արդյունքում զորակոչիկի մասին ամբողջական տեղեկատվությունը ժամանակին չի հայտնվում զինկոմիսարիատում | 6.5 | | 8.0 | 8.7 |

Երկու զորակոչի մոնիթորինգի արդյունքում ստացված այս բնագավառի տվյալները շատ քիչ են տարբերվում իրարից: Աղյուսակից հստակ երևում է, որ **զինկոմիսարիատների աշխատակիցները** առաջնային են համարել այն տարբերակները, որոնք պայմանավորված չեն իրենց աշխատանքի թերություններով, այլ բխում են զորակոչիկի կողմից ոչ ստույգ տվյալներ տրամադրելու, թաքցնելու փաստից` միջինը 48 %: Սակայն անհասկանալի է մնում այն պատասխանների բարձր տոկոսը, որի պատճառն է «զինկոմիսարիատների ոչ բավարար տեղեկացվածությունը զորակոչիկի ընտանեկան դրության, առողջական վիճակի վերաբերյալ», քանի որ թե' զինկոմիսարիատի աշխատակիցները, թե' պոլիկլինիկաների բժիշկները **պարտավոր են իրազեկ լինել զորակոչիկի և նրա ընտանիքի վերաբերյալ ողջ տեղեկատվությանը**: Այս խմբի հարցման մասնակիցների միայն 13%-ն է նշել կոռուպցիան` որպես պատճառ: Դա այս աղյուսակի ամենացածր ցուցանիշն է:

Մոնիթորինգի արդյունքում հայտնաբերվել են նաև այնպիսի խախտումներ, որոնք վերաբերում են բժշկական զննման ընթացակարգին, ինչպիսին բժշկական հաստատություն կլինիկական հետազոտման ուղեգրված զորակոչիկին լրիվ կամ մասնակի գումարային համալրում տալը կամ չտալն է: Զորակոչիկների 40.1 %-ը ոչ մի փոխհատուցում չի ստացել, և ճանապարհածախսը, օրական ծախսերը կատարվել են ընտանիքի միջոցներից: 4.6 %-ին օգնել են բարեկամները և ծանոթները, և միայն 9.3 % զորակոչիկներ են ստացել դրամական համալրումներ` հիվանդանոց հասնելու կամ քաղաքում գիշերելու համար: Հիվանդ զորակոչիկին ուղեկցող բարեկամների ծախսերը փոխհատուցելու համար շահառուներից ոչ մեկը գումարային համալրում չի ստացել: 77.1 % մայրեր վերը նշված հարցին չեն պատասխանել:

Ընդհանուր առմամբ, զորակոչիկներին հատուկ սահմանված բժշկական հաստատություններ հետազոտման ուղղարկելու պրակտիկան վերանայման կարիք ունի:

Բուժհիմնարկները, տարեցտարի մասնակցելով զորակոչային միջոցառումներին, ձևավորում են կայուն կապեր զինկոմիսարիատի հետ և հետաքրքրված են հետազոտություն անցկացնելու համար բյուջեից գումարներ ստանալու մեջ, որի առնչությամբ կարելի է ենթադրել, որ այդ շահագրգռվածությունը կարող է ազդել նրանց եզրահանգումների վրա: Ի հավաստումն ասվածի` տարի առ տարի ավելանում են իրավապաշտպան կազմակերպություններին ուղղված այն դիմումների քանակը, որոնք վերաբերում են անկախ բուժհաստատությունների և զինակոչիկներին զինկոմիսարիատից ուղեգրած բուժհաստատությունների կողմից տրված ախտորոշումների զգալի տարբերությանը:

Նշված խնդիրներն ի վերջո հանգեցնում են նրան, որ շատ դեպքերում զինվորական ծառայության են զորակոչում քաղաքացիների, որոնք առողջական վիճակի պատճառով փաստացի պիտանի չեն ծառայությանը կամ պիտանի են սահմանափակ չափով: Զինված ուժերը համալրվում են այնպիսի զինծառայողներով, որոնք ի վիճակի չեն լիարժեք կատարելու զինվորական ծառայության պարտականությունները: Զինակոչիկների` արդեն ունեցած հիվանդությունը երբեմն հասնում է այն աստիճանի, որ կարող է առաջանալ հաշմանդամություն: Հետագայում այդ զինծառայողները չեն կարող լինել հասարակության լիարժեք անդամ:

## 4. Զորակոչի ժամկետների խախտումներ և անօրինական կանչեր զինկոմիսարիատներ

Զինվորական պարտականությունների ոլորտի հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական ակտը «Զինապարտության մասին» ՀՀ օրենքն է: Այն նշում է զորակոչի հետևյալ ժամկետները` ամեն տարվա ապրիլից հունիս և հոկտեմբերից դեկտեմբեր (հ. 11, կ. 3): Զորակոչների միջև ընկած ժամանակահատվածում քաղաքացիները կարող են կանչվել զինկոմիսարիատ զինվորական հաշվառման հարցերով, բայց ոչ` զորակոչի: Չնայած դրան` մոնիթորները արձանագրել են փաստեր, երբ զորակոչիկն անցել է համապատասխան հետազոտություններ մինչ պաշտոնական զորակոչը (բժշկական զննում, ընտանեկան պայմանների ճշտում և այլն):

Հարցման ընթացքում հայտնաբերվել են նաև այլ բնույթի խախտումներ: Այսպես, զորակոչիկների 49.5 %-ը և մայրերի 31.4 % նշել են, որ իրենց զինկոմիսարիատ են կանչել հեռա-

խոսով կամ բանավոր զրույցի կարգով, այդ պատճառով էլ նրանք տեղյակ չեն եղել ծանուցագրի բովանդակությանը, այնտեղ ստորագրության կամ կնիքի առկայությանը:

Մարզերի հետազոտություններից պարզ դարձավ, որ զորակոչիկների 16.8 %-ը դեռ անչափահաս է եղել, երբ ստացել է ծանուցագիր կամ հրավիրվել զինկոմիսարիատ: Միայն Արաբկիրի շրջանում բոլոր զորակոչիկները հրավերը ստացել են 18 տարին լրանալուց հետո: Ծանուցագիրը ստանալիս ստորագրել է միայն զորակոչիկների 76.6 %-ը: Զորակոչիկների հետ կապված բոլոր այդ միջոցառումների խումբը հիշեցնում է փակ շրջան, որտեղ զորակոչիկները՝ չիմանալով սեփական իրավունքները, ինչպես նաև վախենալով զինկոմիսարիատների աշխատակիցներից, հաճախ ուշադրություն չեն դարձնում իրենց իրավունքների այնպիսի «աննշան» խախտումների վրա, ինչպիսին ծանուցման կարգի խախտումն է, իսկ զինկոմիսարիատների աշխատակիցներն իրենց հերթին, անպատիժ մնալով, կոպտորեն խախտում են օրենսդրությամբ սահմանված ընթացակարգը:

### 5. Շահառուների գնահատականների վերլուծությունը զորակոչի ընթացքում

Առաջարկված հարցաթերթիկներում ներառված էին հարցեր՝ գնահատելու զորակոչի ընթացքը ըստ շահառուների: Այն հարցին, թե կային արդյոք գանգատներ կամ դժգոհություններ զորակոչի ժամանակ, «ոչ» են պատասխանել զորակոչիկների 80.3 %-ը, մայրերի 66.4 %-ը և զորացրվածների 74.4 %-ը: Միաժամանակ «այո» են պատասխանել զորակոչիկների 12.1 %-ը, մայրերի 13.6 %-ը և զորացրվածների 23.6 %-ը: Զորակոչիկների 7.4 %-ը վերը նշված հարցին չի պատասխանել:

Այն հարցին, թե զորակոչի ընթացքում ինչպիսի խախտումներ են ավելի շատ հանդիպում, զորակոչիկները տվել են հետևյալ պատասխանները.

- Կոռուպցիայի միջոցով բանակից ազատվելը - 49.9 %:
- Կոռուպցիայի միջոցով բանակից տարկետումը - 33.2 %:
- Բժիշկների կամայականությունը - 27.2 %:
- Բժիշկների անփութությունը - 22.4 %:
- Օրենքի չիմացության պատճառով զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը - 38.4 %:
- Օրենքի չիմացության պատճառով զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը - 22.8 %:
- Զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը՝ որպես կամայականության արտահայտություն - 8.4 %:
- Զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը՝ որպես կամայականության արտահայտություն - 6.1 %:
- Զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը՝ ելնելով օրենքի թերություններից - 12.8 %:
- Զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը՝ ելնելով օրենքի թերություններից – 24 %:

Նույն հարցին զորացրվածների պատասխաններն ունեցան հետևյալ պատկերը.

- Կոռուպցիայի միջոցով բանակից ազատվելը - 39.2 %:
- Կոռուպցիայի միջոցով բանակից տարկետումը - 20.8 %:
- Բժիշկների կամայականությունը - 10.4 %:
- Բժիշկների անփութությունը - 20.8 %:
- Օրենքի չիմացության պատճառով զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը - 44.5 %:
- Օրենքի չիմացության պատճառով զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը - 39.6 %:
- Զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը՝ որպես կամայականության արտահայտություն - 6.4 %:

- Զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը՝ որպես կամայականության արտահայտություն - 3.6 %:
- Զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը՝ ելնելով օրենքի թերություններից – 10 %:
- Զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը՝ ելնելով օրենքի թերություններից - 6.4 %:

Ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները գտնում էին.

- Կոռուպցիայի միջոցով բանակից ազատվելը - 53.7 %:
- Կոռուպցիայի միջոցով բանակից տարկետումը - 21.2 %:
- Բժիշկների կամայականությունը - 21.2 %:
- Բժիշկների անփութությունը - 18.75 %:
- Օրենքի չիմացության պատճառով զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը - 18.8 %:
- Օրենքի չիմացության պատճառով զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը – 25 %:
- Զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը՝ որպես կամայականության արտահայտություն - 8.7 %:
- Զորակոչիկի ազատման իրավունքի խախտելը՝ որպես կամայականության արտահայտություն 13.7%
- Զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը՝ ելնելով օրենքի թերություններից - 12.5 %:
- Զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը՝ ելնելով օրենքի թերություններից - 7.5 %:

Բժիշկները գտնում էին՝

- Կոռուպցիայի միջոցով բանակից ազատվելը - 12.7 %:
- Կոռուպցիայի միջոցով բանակից տարկետումը - 9 %:
- Բժիշկների կամայականությունը - 6.3 %:
- Բժիշկների անփութությունը - 10.9 %:
- Օրենքի չիմացության պատճառով զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը - 8.1 %:
- Օրենքի չիմացության պատճառով զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը – 9 %:
- Զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը՝ որպես կամայականության արտահայտություն - 3.6 %:
- Զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը՝ որպես կամայականության արտահայտություն - 4.5 %:
- Զորակոչիկի տարկետման իրավունքը խախտելը՝ ելնելով օրենքի թերություններից -10 %:
- Զորակոչիկի ազատման իրավունքը խախտելը՝ ելնելով օրենքի թերություններից - 10.9 %:

Ինչպես տեսնում ենք, յուրաքանչյուր խումբ հարցերին պատասխանել է յուրովի: Հատկանշական է, որ հարցման բոլոր մասնակիցների մոտ խախտումների ամենամեծ տոկոսն է կազմում կոռուպցիայի միջոցով զինվորական ծառայությունից ազատվելը (նույնիսկ այդպես են պատասխանել զինկոմիսարիատի աշխատակիցները):




Պատկեր 6. Զորակոչի ժամանակ առավել հաճախ տեղի ունեցող խախտումների գնահատումը հարցման մասնակիցների կողմից.

A. կոռուպցիայի պատճառով զինծառայությունից ազատումը,
B. կոռուպցիայի պատճառով զորակոչից տարկետումը,
C. բժիշկների կամայականությունը,
D. բժիշկների անփութությունը,
E. զորակոչից տարկետման հիմքերի չկիրառումը՝ օգտվելով զորակոչիկների անտեղյակությունից,
F. ազատման հիմքերի չկիրառումը՝ օգտվելով զորակոչիկների անտեղյակությունից,
G. զորակոչից տարկետման հիմքերի չկիրառումը՝ կամայականություն դրսևորելով,
H. ազատման հիմքերի չկիրառումը՝ կամայականություն դրսևորելով,
I. զորակոչից տարկետման հիմքերի չկիրառումը՝ օգտվելով օրենքի անկատարությունից/ոչ հստակությունից,
J. ազատման հիմքերի չկիրառումը՝ օգտվելով օրենքի անկատարությունից/ոչ հստակությունից:

## 6. Զեկույցի ամփոփում

Ներկայացված զեկույցը հիմնված է մոնիթորինգի երկու մասերի վերլուծության վրա, որն արտացոլում է 2009 թ. գարնանային և աշնանային զորակոչի արդյունքները: Հարցումներին մասնակցել է 3600 շահառու:

Մոնիթորինգի ընթացքում առաջարկվել և իրականացվել են վերահսկում և տվյալների հավաքում՝ ըստ նոր մեթոդաբանության:

**Նոր մեթոդաբանության** առավելությունն այն է, որ նույն տարածաշրջանում տարբեր թիրախային խմբերի հետ միաժամանակ անց է կացվում համակցված հարցում, որի նպատակն է նյութի բազմակողմանի ուսումնասիրությունը, նույն երևույթի մասին տարբեր խմբերի ներկայացուցիչների (տվյալ դեպքում՝ 7 սոցիալական խմբերի) կարծիքի և վերաբերմունքի համեմատական գնահատումը: Ակնհայտ է, որ այդ մեթոդի կիրառումը տալիս է առավել օբյեկտիվ պատկեր: Վերլուծության ժամանակ շատ կարևոր էր զորակոչիկների և զինվորների մայրերի՝ հանգուցային հարցերի վերաբերյալ պատասխանների համընկնումը: Որպես օրի-

նակ կարող ենք բերել հետևյալ պատկերը, որը հաստատում է հարցման և հետազոտության օբյեկտիվությունը:




Պատկեր 7. Զորակոչիկների և մայրերի տեղեկացվածության աստիճանի համեմատությունը՝ ըստ տարածաշրջանների:

### 7. Հետևություններ և առաջարկներ

Իրականացված մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ զինվորական ծառայության զորակոչի ոլորտում քաղաքացիների իրավունքների խախտման հիմնական պատճառը մի կողմից՝ իշխանության մարմինների պաշտոնատար անձանց կողմից իրավական նորմերի խախտումն է, մյուս կողմից՝ քաղաքացիական բնակչության անտեղյակությունը, իրավական անպատրաստությունն ու անտարբերությունը:

Մոնիթորինգի ընթացքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ՊՆ համակարգը օգտագործում է իր ներուժը՝ զորակոչային գործընթացի վերահսկողությունը բարելավելու ուղղությամբ: Այս առումով պետք է նշել «թեժ գծի» ստեղծումը, դիտողական քարոզչության ձևերի կիրառումը, միջազգային և շահագրգիռ ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացումը:

Սակայն ծրագրի իրագործման ժամանակահատվածում կատարված հարցումները ցույց տվեցին, որ առավել հաճախ տեղի ունեցող իրավախախտումները դիտարկվում են զորակոչիկների բուժզննման, ուղեգրված բժշկական հետազոտության և զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանի որոշման ժամանակ՝ 46.2 %: Մեր դիտարկումները թույլ են տալիս այս խնդրի հիմքում տեսնել **պատճառները** և անել **եզրահագումներ**.

1. Բուժզննման համար սահմանված կարգի համաձայն զորակոչիկն իր հիվանդությունը հիմնավորելու համար չի կարող օգտվել տարիների ընթացքում իր առողջական վիճակին հետևող բուժող բժշկի, ինչպես նաև այդ բնագավառում հեղինակություն վայելող բժիշկների մասնագիտական եզրակացությունից և կանխորոշումները: Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում կատարել համապատասխան կանոնակարգային փոփոխություններ և սահմանել ռազմաբժշկական հանձնաժողովների համար օրինական հիմքեր՝ զորակոչիկի հիվանդության վերաբերյալ այլընտրանքային հիմնավորված բժշկական եզրակացությունը քննության առնելու համար:
2. Ռազմաբժշկական հանձնաժողովների բժիշկները հետաքրքրված չեն զորակոչիկի հիվանդության հետագա ընթացքը և զարգացումները զինվորական ծառայության ընթացքում կանխորոշելու հարցում, քանի որ պատասխանատվություն չեն կրում հիվանդ զորակոչիկի հետագա առողջական վիճակի համար: Նպատակահարմար ենք գտնում մշակել հստակ համակարգ՝ վարչական և նյութական պատասխանատվության ենթարկելու պարտականությունների մեջ թերացած բժիշկներին:
3. 18 տարեկան զորակոչիկները, ի տարբերություն բարձրագույն կրթություն ստացած 21-22 տարեկան զորակոչիկների, ունեն ցածր կրթական մակարդակ, ինչի հետևանքով նրանք չունեն համապատասխան իրավական պատրաստվածություն՝ չարաշահումներին դիմակայելու համար: Բացի այդ, զորակոչիկներն ու նրանց ընտանիքները բավա-

րար չափով իրազեկված չեն իրենց իրավունքների վերաբերյալ: Այդ կապակցությամբ նպատակահարմար ենք գտնում ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանումների և ՀԿ-ների համատեղ ջանքերով մշակել երկարաժամկետ գործողությունների պլան՝ զորակոչի ոլորտում բնակչության իրազեկման և տեղեկատվության ապահովման մակարդակը բարձրացնելու նպատակով: Զինկոմիսարիատներում, պոլիկլինիկաներում, ՏԻՄ մարմինների գրասենյակներում հարկավոր է կազմակերպել զորակոչիկների և նրանց ընտանիքների իրազեկմանն ու տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը նպաստող միջոցառումներ՝ օգտագործելով քարոզչության համապատասխան միջոցներ (պաստառներ, տեղեկատու թերթիկներ, հայտարարություններ և այլն):

# Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

## ԼՈՌՈՒ, ՇԻՐԱԿԻ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

## 2009 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ

## ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ծրագրի ղեկավար՝ Արթուր Սաքունց
Ծրագրի մասնագետ՝ Արմինե Սադիկյան
Հասարակայնության հետ կապերի մասնագետ՝ Անժելա Հարությունյան

**ՎԱՆԱՁՈՐ 2009**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .......... 20

ԲԱԺԻՆ 1. Մոնիթորինգի իրականացման և արդյունքների վերլուծության սկզբունքները .......... 21

ԲԱԺԻՆ 2. Հարցազրույցների մասնակից զորակոչիկների ընդհանուր բնութագիրը .......... 21

ԲԱԺԻՆ 3. Հարցազրույցների արդյունքների վերլուծություն .......... 22

*Օրենսդրության վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածության մակարդակի վերլուծությունը* .......... 22

*3.1. Բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի մասին իրազեկվածության մակարդակը* .......... 25

*3.2. Տարկետման հիմքերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը* .......... 26

*3.3. Կցագրման աշխատանքների իրականացման գործընթացի վերլուծությունը* .......... 28

*3.4. Զորակոչի ծանուցման գործընթացի վերլուծությունը* .......... 30

*Բուժզննության կազմակերպման ընթացքում զորակոչիկների խնդիրների վերլուծությունը* .......... 35

ԲԱԺԻՆ 4. Զորակոչի կազմակերպման ընթացքում առաջացած խնդիրների, բողոքների, պատճառների վերլուծությունը .......... 42

*4.1. Զինծառայության համար պիտանիության և ոչ պիտանիության վերաբերյալ որոշումների վերլուծությունը* .......... 42

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .......... 48

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2009 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվեց Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում գարնանային և աշնանային զորակոչի մոնիթորինգ:

Մոնիթորինգի իրականացմանը մասնակցել են Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբի և Բերդի «Կաղնի» հասարակական կազմակերպության աշխատակիցները, ինչպես նաև անհատ քաղաքացիներ:

Մինչ ուսումնասիրությունների իրականացումը ՀՀ պաշտպանության նախարարությունը նախատեսվող մոնիթորինգի մասին ծանուցել էր զինվորական կոմիսարիատներին: Գարնանային զորակոչի մոնիթորինգի ընթացքում իրազեկված չէր միայն Ախուրյանի զինկոմը:

Մոնիթորինգի իրականացման գործիքները մշակվել են «Զինվորի մայր» և «Պրոկատիվ հասարակություն» հասարակական կազմակերպությունների հետ միասին: Մինչ այս, 2008 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, Բաց հասարակության ինստիտուտի Հայաստանի և Բուդապեշտի գրասենյակների համատեղ ֆինանսավորմամբ, արդեն իրականացրել էր Լոռու մարզում գարնանային և աշնանային զորակոչերի մոնիթորինգ: Լոռու մարզում իրականացված մոնիթորինգի համար մշակվել և կիրառվել են զորակոչիկների և նրանց հարազատների հետ հարցազրույցների անցկացման գործիքներ:

ՀՀ հյուսիսային երեք մարզերում մոնիթորինգի ընթացքում կիրառվել է 7 գործիք, որոնցով հարցազրույցներ են անցկացվել ոչ միայն զորակոչիկների և նրանց ծնողների, այլև զորացրվածների, տեղական ինքնակառավարման մարմինների, հանրակրթական դպրոցների, առողջապահական հիմնարկների և զինկոմիսարիատի աշխատակիցների հետ:




*Մոնիթորների ուսուցում Վանաձորում:*



*Աշխատանքային քննարկում Տավուշի մարզում:*

Մինչ մոնիթորինգի իրականացումը մոնիթորներին ուսուցանվել են մոնիթորինգի իրականացման գործիքները, մշակվել են մոնիթորինգի իրականացման պլանը, ընթացիկ հաշվետվության ներկայացման ժամանակացույցը:

Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ Իջևանում, Գյումրիում և Վանաձորում:




*Աշխատանքային քննարկում Շիրակի մարզում:*



*Մոնիթորների ուսուցում Տավուշի մարզում:*

## ԲԱԺԻՆ 1.
## Մոնիթորինգի իրականացման և արդյունքների վերլուծության սկզբունքները

Երեք մարզերում մոնիթորինգն իրականացվել է 30-34 հոգու կողմից և ընդգրկել է այդ մարզերում գործող բոլոր 14 զինկոմիսարիատների սպասարկման տարածքները:

Հարցման մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 2842, որից 1428 հոգին՝ գարնանային զորակոչի ընթացքում, 1414-ը՝ աշնանային:

Մոնիթորինգի ընթացում հարցազրույցի մասնակիցների թիվը և կազմը ներկայացված են ստորև տրված աղյուսակում:

Աղյուսակ 1.1.

| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
|---|---|---|
| Զորակոչիկներ | 583 | 592 |
| Զորացրվածներ | 611 | 565 |
| Զորակոչիկի հարազատներ | 115 | 134 |
| Զինկոմիսարիատի աշխատակիցներ | 13 | 14 |
| ՏԻՄ | 26 | 26 |
| Դպրոցի աշխատակիցներ | 32 | 33 |
| Բուժաշխատողներ | 48 | 50 |
| **Ընդամենը** | **1428** | **1414** |

Հարցազրույցների արդյունքները վերլուծվել են և՛ ըստ թիրախային խմբերի, և՛ ըստ թեմաների: Օրինակ՝ զորակոչի վերաբերյալ օրենսդրության մասին իրազեկվածության մակարդակի վիճակը բնութագրվել է և՛ զորակոչիկների, և՛ նրանց ծնողների ու հարազատների հետ հարցազրույցների արդյունքների հիման վրա: Մյուս կողմից՝ ներկայացվել են օրենսդրության մասին տեղեկացվածության վերաբերյալ դպրոցների ներկայացուցիչների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, բժիշկների, զինկոմիսարիատի աշխատակիցների հետ իրականացված հարցազրույցների տվյալները:

## ԲԱԺԻՆ 2.
## Հարցազրույցների մասնակից զորակոչիկների ընդհանուր բնութագիրը

***Ըստ տարիքի***

Աղյուսակ 2.1.

| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
|---|---|---|
| Մինչև 18 տարեկան | 6 | 0 |
| 18 տարեկան լրացածներ | 401 | 516 |
| 18-ից բարձր | 176 | 76 |
| **Ընդամենը** | **583** | **592** |

***Ըստ բնակության վայրի***

Աղյուսակ 2.2.

| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
|---|---|---|
| Քաղաքաբնակ | 421 | 411 |
| Գյուղաբնակ | 162 | 181 |
| **Ընդամենը** | **583** | **592** |

***Ըստ կրթության***

Աղյուսակ 2.3.

| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
|---|---|---|
| Կրթություն չունեն | 12 | 15 |
| Միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական | 380 | 418 |
| Բարձրագույն, թերի բարձրագույն | 187 | 159 |
| Գիտական աստիճան, գիտական աստիճանի հավակնորդ | 4 | 0 |
| **Ընդամենը** | 583 | 592 |

***Ըստ ընտանեկան դրության***

Աղյուսակ 2.4.

| Ձեր ընտանեկան դրությունը | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
|---|---|---|
| Բնակվում եմ ծնողիս/ծնողներիս և քրոջս/եղբորս հետ | 536 | 542 |
| Ծնողներ չունեմ | 7 | 0 |
| Ծնողիս/ծնողներիս միակ որդին եմ | 13 | 20 |
| Միայնակ մորս/հորս` ՀՀ քաղաքացի հանդիսացող և զինված ուժերում չծառայող միակ զավակն եմ | 7 | 16 |
| 5 տարուց ավելի ամուսնալուծված ծնողիս միակ զավակն եմ | 6 | 6 |
| 5 տարուց պակաս ամուսնալուծված ծնողիս միակ զավակն եմ | 2 | 4 |
| Ծնողներիս` ՀՀ քաղաքացի հանդիսացող և զինված ուժերում չծառայող միակ աշխատունակ զավակն եմ | 2 | 0 |
| Ունեմ այս պահին զինված ուժերում ծառայող կամ զորակոչված եղբայր | 25 | 27 |
| Բնակվում եմ կնոջս և երեխայիս հետ | 5 | 0 |
| Բնակվում եմ մենակ | 1 | 0 |
| Բնակվում եմ տատիկիս և պապիկիս հետ | 0 | 3 |
| Բնակվում եմ հորաքրոջս հետ, բայց ծնողներ ունեմ | 0 | 1 |
| **Ընդամենը** | 604 | 619 |

***Ըստ ամուսնական կարգավիճակի***

Աղյուսակ 2.5.

| Ձեր ամուսնական կարգավիճակը | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
|---|---|---|
| Ամուրի | 564 | 583 |
| Փաստացի ամուսնացած | 11 | 3 |
| Պաշտոնապես ամուսնացած | 8 | 6 |
| **Ընդամենը** | 583 | 592 |

Փաստորեն, 11 հոգի ունի երեխա գարնանային զորակոչի ժամանակ (7 հոգին ունի մեկ երեխա, 3 հոգին` 2 երեխա), իսկ աշնանային զորակոչի ժամանակ 5 հոգի ունի մեկական երեխա:

Գարնանային զորակոչի ժամանակ 7 հոգի պատասխանել է, որ կինը հղի է, ընդ որում` 6 ամսից քիչ ժամանակով` 4 հոգի: Աշնանային զորակոչի ժամանակ կնոջ հղիության մասին ոչ ոք չի հայտնել:

Գարնանային զորակոչի ժամանակ հարցման 583 մասնակիցներից 209-ը եղել են ուսանող, իսկ աշնանային զորակոչի ժամանակ` 592-ից 205 հոգին: Գարնանային զորակոչի ժամանակ ՀՀ քաղաքացի չէր հանդիսանում միայն մեկ հոգի:

Գարնանային զորակոչի ժամանակ 20 զորակոչիկ հայտնել է, որ իրենց նկատմամբ ձևակերպված է խնամակալություն, և նրանցից որպես խնամակալ հանդիսանում են 9 -ը:

Աշնանային զորակոչի ժամանակ ձևակերպված էր խնամակալություն 2 հոգու նկատմամբ, իսկ մեկ հոգի հանդիսանում էր խնամակալ:

Գարնանային զորակոչի ժամանակ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ուներ 20 հոգի, 3-րդ խմբի հաշմանդամ ծնող` 24 հոգի: Աշնանային զորակոչի ժամանակ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ուներ 20 հոգի, 3-րդ խմբի հաշմանդամ ծնող` 36 հոգի:

# Բաժին 3.
# Հարցազրույցների արդյունքների վերլուծություն

***Օրենսդրության վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածության մակարդակի վերլուծությունը***

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու, զորակոչից տարկետում ստանալու հիմքերի, այլընտրանքային ծառայության անցնելու իրավունքների վերաբերյալ իրազեկված է համարել զորակոչիկների մոտ 2/3-ը (տե՛ս աղյուսակ 3.1.):

Աղյուսակ 3.1.

| Դուք գիտե՞ք, թե որ դեպքերում կարող եք օգտվել Ձեր բնակավայրին մոտ ծառայելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ զորակոչից տարկետում ստանալու կամ այլընտրանքային զինծառայություն անցնելու իրավունքներից | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 62.9% | 64.9% | 81.1% | 92.8% | 79.3% | 65.5% |
| Ոչ | 37.1% | 35.1% | 18.9% | 7.2% | 20.7% | 34.5% |
| Ընդամենը | 100% | **100%** | 100% | **100%** | 100% | **100%** |

Ի տարբերություն զորակոչիկների՝ նրանց ծնողների իրազեկվածության մակարդակն անհամեմատ բարձր է (տե՛ս աղյուսակ 3.2.) և՛ ընդհանուր առմամբ, և՛ ըստ մարզերի:

Աղյուսակ 3.2.,

| Դուք գիտե՞ք, թե որ դեպքերում զորակոչիկը կարող է օգտվել իր բնակավայրին մոտ ծառայելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ զորակոչից տարկետում ստանալու կամ այլընտրանքային զինծառայություն անցնելու իրավունքներից | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 76.7% | 80% | 87.5% | 90.3% | 84.4% | 78.1% |
| Ոչ | 23.3% | 20% | 12.5% | 9.7% | 15.6% | 21.9% |
| Ընդամենը | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Լոռու մարզում ծնողների և հարազատների շրջանում իրազեկման մակարդակը ցածր է: Նշված օրինաչափությունը առկա է նաև զորացրվածների պատասխաններում (տե՛ս աղյուսակ 3.3.):

Աղյուսակ 3.3.

| Բանակ զորակոչվելիս Դուք գիտեի՞ք, թե որ դեպքերում կարող էիք օգտվել Ձեր բնակավայրին մոտ ծառայելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ զորակոչից տարկետում ստանալու կամ այլընտրանքային ծառայություն անցնելու իրավունքներից | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 64.6 | 66.2 | 87.1 | 91.3 | 74.7 | 73.6 |
| Ոչ | 35.4 | 33.8 | 12.9 | 8.7 | 25.3 | 26.4 |
| Ընդամենը | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Հետաքրքիր է, որ բոլոր մարզերում դպրոցների ներկայացուցիչները հայտնում են, որ բացատրական աշխատանքներ են իրականացնում 16-18 տարեկանների շրջանում: Ընդ որում, դա արվում է «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման, «Զինպատրաստվածություն» դասի ժամանակ, «Աշխատանք ծնողների հետ» ծրագրի շրջանակներում: Միևնույն ժամանակ, հենց դպրոցի ներկայա-

ցուցիչները գտնում են, որ դպրոցում մատուցված գիտելիքները, այնուամենայնիվ, ամբողջովին բավարար չեն զորակոչից տարկետում ստանալու, զինծառայությունից ազատվելու և այլ իրավունքների մասին բավարար իրազեկման համար:

Ըստ էության, դպրոցների կապը զինկոմիսարիատների հետ պայմանավորված է կցագրման նպատակով նախազորակոչիկների մասին տեղեկությունների հաղորդմամբ: Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից զորակոչիկների և նրանց հարազատների՝ զորակոչի վերաբերյալ նրանց իրավունքների իրազեկմանը, ապա հարցման տվյալները, ի տարբերություն դպրոցների, մի փոքր այլ են:

ՏԻՄ ներկայացուցիչների պատասխանները բաժանվել են 2 հստակ խմբի: Մի մասը պատասխանել է, որ իրականացնում են նման աշխատանքներ, մյուս մասը տվել է բացասական պատասխան: Նույնպիսի տարանջատում գոյություն ունի զինկոմիսարիատների հետ տեղական ինքնակառավարման մարմինների կապի վերաբերյալ պատասխաններում (տե՛ս աղյուսակ 3.4.):

Աղյուսակ 3.4

| **Ինչպե՞ս է իրականացվում Ձեր կապը զինկոմիսարիատի հետ** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Որևէ հստակ կանոնակարգում առկա չէ | 2 | 3 | 3 | 0 | 2 | 10 |
| Կցագրումից 1 ամիս առաջ նախազորակոչիկների մասին տեղեկությունները հաղորդում ենք զինկոմիսարիատ | 1 | 2 | 2 | 5 | 3 | 2 |
| Զորակոչից 1 ամիս առաջ զորակոչիկների մասին տեղեկությունները հաղորդում ենք զինկոմիսարիատ | 0 | 1 | 1 | 2 | 3 | 2 |
| Զորակոչի ժամանակ զորակոչիկների մասին տեղեկությունները վերջիններիս կամ նրանց ծնողների միջոցով հաղորդում ենք զինկոմիսարիատ | 0 | 1 | 0 | 0 | 2 | 3 |
| Անձամբ զրուցում ենք զինկոմի հետ | 3 | 3 | 4 | 2 | 6 | 2 |
| Ես միայն առնչվել եմ որպես զորակոչիկների հայր | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Զորակոչիկի հայտնաբերելու խնդիր եթե լինում է, այդ ժամանակ | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Հանձնաժողովի անդամ եմ | 1 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Երեխայի 16 տարին լրանալուց հետո նրա բնութագիրը մենք ենք ուղարկում զինկոմիսարիատ, եթե երեխան դպրոց չի գնում | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Յուրաքանչյուր տարվա սկզբին նախազորակոչիկների մասին տեղեկություններ ենք ներկայացնում զինկոմիսարիատ | 1 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Պատրաստում ենք պաշտոնական դիմում | 1 | 1 | 1 | 2 | 1 | 0 |
| Գրություն ենք ստանում ներկայանալու զինկոմիսարիատ՝ մասնակցելու զինկոմիսարիատի աշխատանքներին | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Մշտական կապի մեջ ենք | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 12 | 14 | 11 | 12 | 17 | 19 |

ՏԻՄ ներկայացուցիչները գտնում են, որ դպրոցներում տրված գիտելիքները, այնուամենայնիվ, անբավարար են զորակոչիկների և նրանց ծնողների իրազեկվածության մակարդակի ապահովման համար: Զինկոմիսարիատի աշխատակիցները պնդում են նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց շրջանում՝ նրանց իրավունքների իրազեկման աշխատանքների իրականացման մասին: Զինկոմիսարիատի աշխատակիցների կարծիքով դպրոցում մատուցված գիտելիքները բավարար չեն զորակոչի վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածության անհրաժեշտ մակարդակի բավարարման համար:

Միևնույն ժամանակ, նման աշխատանքներ կատարվում են հենց զինկոմիսարիատներում, երբ զորակոչիկները կամ նրանց հարազատները այցելում են այնտեղ: Դպրոցների հետ զինկոմիսարիատների կապի վերաբերյալ հարցի պատասխանները ցույց են տալիս, որ դպրոցների հետ համագործակցությունն իրականացվում է «Ռազմական գործ» առարկայի ուսուցիչների հետ «մշտական կապի» միջոցով (տե՛ս աղյուսակ 3.5.):

Աղյուսակ 3.5.

| Ինչպե՞ս է իրականացվում Ձեր կապը դպրոցի հետ | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Մշտական կապի մեջ ենք գտնվում զինղեկի հետ | 4 | 4 | 1 | 5 | 4 | 2 |
| Կցագրումից 1 ամիս առաջ նախազորակոչիկների մասին տեղեկությունները ստանալու համար պաշտոնապես հարցում ենք կատարում նշված դպրոց | 1 | 2 | 2 | 4 | 3 | 4 |
| Զորակոչից 1 ամիս առաջ զորակոչիկների մասին տեղեկությունները ստանալու համար պաշտոնապես հարցում ենք կատարում դպրոց | 1 | 0 | 2 | 1 | 2 | 1 |
| Զորակոչից 1 ամիս առաջ դպրոցից պահանջում ենք զորակոչիկի անձնական գործը | 1 | 1 | 2 | 2 | 0 | 2 |
| Զորակոչի ժամանակ զորակոչիկների մասին տեղեկությունները դպրոցից զորակոչիկների կամ նրանց ծնողների միջոցով հաղորդվում են զինկոմիսարիատ | 1 | 0 | 1 | 1 | 0 | 0 |
| Կազմակերպում ենք միջոցառումներ, հրաձգություններ | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Դաշտային պարապմունքներ ենք կազմակերպում | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Անցկացվում է ՆԶՊ-ի եռօրյա դասընթաց | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Ամենամսյա այցելություն դպրոց | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 8 | 8 | 9 | 14 | 10 | 9 |

Միջոցառումների կամ պարապմունքների կազմակերպմանը, ըստ էության, աննշան ուշադրություն է դարձվում: Չնայած նախազորակոչային տարիքի երիտասարդների վերաբերյալ տեղեկությունների հիմնական աղբյուրը զինկոմիսարիատների համար հանդիսանում են դպրոցները, այնուամենայնիվ, դպրոցների հետ կապի արդյունավետությունը զինկոմիսարիատների աշխատակիցները համարում են միջին կամ բավարար:

### *3.1. Բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի մասին իրազեկվածության մակարդակը*

Օրենսդրության առանձին նորմերի վերաբերյալ հարցման մասնակիցների իրազեկվածության մակարդակը շատ ցածր է: Ընտանիքի միակ զավակի և 3-րդ խմբի հաշմանդամ ծնող ունենալու կարգավիճակի դեպքում բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի մասին տեղեկացվածությունը մարզերում խիստ տարբեր է (տե՛ս աղյուսակ 3.6) :

Աղյուսակ 3.6

| Դուք տեղյա՞կ եք, որ կարող եք օգտվել Ձեր բնակավայրին մոտ ծառայելու իրավունքից, եթե ընտանիքի միակ զավակն եք և ունեք 3-րդ խմբի հաշմանդամ ծնող | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 29.5 | 40.4 | 62.8 | 60.5 | 42.1 | 34.5 |
| Ոչ | 70.5 | 59.6 | 37.2 | 39.5 | 57.9 | 65.5 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Առավել բարձր է իրազեկվածությունը Շիրակի մարզում, որը գուցե պայմանավորված է երկրաշարժի հետևանքով բնակչության շրջանում հաշմանդամության մեծ ծավալի առկայության պայմաններում արտոնությունների մասին իմացությամբ: Նույն օրինաչափությունը պահպանվում է նաև ծնողների և հարազատների պատասխաններում: Ընդ որում՝ զորակոչիկներն առավել իրազեկ են, քան նրանց ծնողները:

Բոլոր մարզերում թե՛ զորակոչիկները, թե՛ նրանց հարազատները առավել իրազեկված են բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի հիմքերի վերաբերյալ (տե՛ս համապատասխանաբար աղյուսակ 3.7. և 3.8.):

Աղյուսակ 3.7.

| Դուք տեղյա՞կ եք, որ կարող եք օգտվել Ձեր բնակավայրին մոտ ծառայելու իրավունքից, եթե միակողմանի ծնողազուրկ եք | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 68.7 | 82.5 | 79.6 | 89.1 | 83.6 | 64.4 |
| Ոչ | 31.3 | 17.5 | 20.4 | 10.9 | 16.4 | 25.6 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Աղյուսակ 3.8.

| Դուք տեղյա՞կ եք, որ զորակոչիկը կարող է օգտվել իր բնակավայրին մոտ ծառայելու իրավունքից, եթե միակողմանի ծնողազուրկ է | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 38 | 33 | 34 | 57 | 28 | 25 |
| Ոչ | 5 | 7 | 6 | 5 | 4 | 7 |
| **Ընդամենը** | 43 | 40 | 40 | 62 | 32 | 32 |

Ամուսնացած լինելու և 1 երեխա ունենալու հիմքով բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի մասին իրազեկված է զորակոչիկների մոտ կեսը (տե՛ս աղյուսակ 3.9.):

Աղյուսակ 3.9.

| Դուք տեղյա՞կ եք, որ կարող եք օգտվել Ձեր բնակավայրին մոտ ծառայելու իրավունքից, եթե ամուսնացած եք և ունեք 1 երեխա | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 43.8 | 52.4 | 48.8 | 64.8 | 61.6 | 48.8 |
| Ոչ | 56.2 | 47.6 | 51.2 | 35.2 | 38.4 | 51.2 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Այս իրավունքի վերաբերյալ ծնողների և հարազատների իրազեկվածության մակարդակն ավելի բարձր է, քան զորակոչիկների մակարդակը:

### *3.2. Տարկետման հիմքերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը*

Հաշմանդամության տարբեր խմբերի դեպքում տարկետման իրավունքի վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածությունն առավել բարձր է Շիրակի մարզում (տե՛ս աղյուսակներ 3.10. և 3.11.):

Աղյուսակ 3.10.

| Դուք տեղյա՞կ եք, որ կարող եք օգտվել զորակոչից տարկետման իրավունքից, եթե ունեք 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ կին | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 15.4 | 35.6 | 47 | 44.8 | 34 | 24.1 |
| Ոչ | 84.6 | 64.4 | 53 | 55.2 | 66 | 75.9 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Աղյուսակ 3.11.

| Դուք տեղյա՞կ եք, որ կարող եք օգտվել զորակոչից տարկետման իրավունքից, եթե հանդիսանում եք Ձեր հաշմանդամ կամ 18 տարին չլրացած քրոջ /եղբոր հետ համատեղ բնակվող ընտանիքի միակ անդամը | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 19.7 | 35.1 | 58.8 | 52.8 | 32.1 | 24.1 |
| Ոչ | 80.3 | 64.9 | 41.2 | 47.2 | 67.9 | 75.9 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Առանց մոր մեծացող երեխա ունենալու դեպքում տարկետման իրավունքի մասին բոլոր մարզերում զորակոչիկների իրազեկվածության մակարդակը ցածր է: Նշված իրավունքի վերաբերյալ ծնողների իրազեկվածությունը համեմատաբար բարձր է զորակոչիկներից (տե՛ս աղյուսակ 3.12):

Աղյուսակ 3.12.

| Դուք տեղյա՞կ եք, որ կարող եք օգտվել զորակոչից տարկետման իրավունքից, եթե ունեք առանց մոր մեծացող երեխա | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 22.6 | 33.6 | 49.8 | 43.3 | 42.8 | 31.1 |
| Ոչ | 77.4 | 66.4 | 50.2 | 56.7 | 57.2 | 68.9 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Զույգ երեխաներով 6-ամսյա հղիության վիճակում գտնվող կին ունենալու հիմքով տարկետման իրավունքի մասին առավել իրազեկված են Շիրակի մարզի զորակոչիկները (տե՛ս աղյուսակ 3.13.):

Աղյուսակ 3.13.

| Դուք տեղյա՞կ եք, որ կարող եք օգտվել զորակոչից տարկետման իրավունքից, եթե Ձեր կինը հղի է զույգ երեխաներով և գտնվում է 6-ամսյա հղիության վիճակում | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 26.4 | 47.6 | 62.3 | 73.8 | 47.8 | 31.1 |
| Ոչ | 73.6 | 52.4 | 37.7 | 26.2 | 52.2 | 68.9 |
| **Ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |

Ծնողների իրազեկվածությունն այս առումով ավելի բարձր է, քան զորակոչիկներինը:

Տարկետման, բնակավայրին մոտ ծառայելու և ծառայությունից ազատվելու հիմքերի վերաբերյալ բոլոր մարզերում զորակոչիկների իրազեկվածության մակարդակը ծնողների համեմատ ցածր է:

Իրավունքների վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրը զորակոչիկների համար հանդիսանում են ծանոթները, ընկերները, հարազատները (տե'ս աղյուսակ 3.14.):

Աղյուսակ 3.14.

| Եթե այո, ապա ինչպես եք տեղեկացել դրանց մասին | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Օրենքներն եմ կարդացել | 11 | 12 | 39 | 31 | 26 | 6 |
| Ծանոթներս, ընկերներս, հարազատներս են տեղեկացրել | 96 | 97 | 93 | 150 | 94 | 92 |
| Ծնողներս են տեղեկացրել | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Դպրոցում դասերից մեկի ժամանակ եմ իմացել | 43 | 52 | 31 | 40 | 11 | 23 |
| Զինկոմիսարիատում են տեղեկացրել | 43 | 45 | 50 | 26 | 33 | 32 |
| Ռադիոյով, հեռուստատեսությամբ եմ լսել | 8 | 6 | 17 | 12 | 25 | 8 |
| Այլ եղանակով եմ տեղեկացել | 9 | 7 | 9 | 68 | 5 | 3 |
| Ծնողներս են բացատրել | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդհանուրը** | 211 | 219 | 240 | 327 | 194 | 164 |

Միևնույն ժամանակ, նկատելի է, որ օրենքները կարդալու միջոցով իրավունքների մասին իրազեկվածների թիվը առավել մեծ է Շիրակի և Տավուշի մարզերում:

Զորացրվածները, ինչպես նաև ծնողները և հարազատները, զորակոչիկների իրավունքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր համարում են ծանոթներին ու ընկերներին:

Ե՛վ զորակոչիկների, և' ծնողների ու հարազատների համար զինկոմիսարիատները համեմատաբար քիչ դեր ունեն զորակոչի վերաբերյալ իրավունքների, օրենսդրական նորմերի՝ որպես տեղեկատվության ստացման աղբյուր:

***Այսպիսով,***

***1. իրենց իրավունքների վերաբերյալ զորակոչիկների իրազեկվածության մակարդակը առավել ցածր է Լոռու մարզում, միևնույն ժամանակ, դրանց վերաբերյալ բոլոր զորակոչիկների համար իրազեկման հիմնական աղբյուր բոլոր մարզերում հանդիսանում են ծանոթները, ընկերներն ու հարազատները,***

***2. և' զորակոչիկների, և' ծնողների ու հարազատների համար որպես զորակոչի վերաբերյալ իրավունքների, օրենսդրական նորմերի տեղեկատվության ստացման աղբյուր՝ զինկոմիսարիատները ավելի քիչ դեր ունեն:***

### *3.3. Կցագրման աշխատանքների իրականացման գործընթացի վերլուծությունը*

*Կցագրումը զինվորական ծառայության անցնելու նախապատրաստական փուլն է: Այն էական նշանակություն ունի ապագա զորակոչիկների իրավական պատրաստվածության հարցում:*

Աղյուսակ 3.15.

| Ո՞վ է Ձեզ առաջին անգամ հայտնել կցագրման/ հաշվառման վերցվելու մասին | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Դպրոցի տնօրենը | 43 | 15 | 38 | 34 | 23 | 7 |
| Դպրոցի «Ռազմական գործ» առարկան դասավանդող ուսուցիչը | 156 | 172 | 139 | 159 | 68 | 97 |
| Ուսումնական հաստատության ղեկավարությունը | 10 | 7 | 8 | 9 | 21 | 21 |
| Աշխատավայրի ղեկավարությունը | 0 | 0 | 2 | 1 | 2 | 1 |
| ՏԻՄ ներկայացուցիչը | 10 | 6 | 9 | 9 | 13 | 10 |
| Զինկոմիսարիատից զանգել են | 1 | 0 | 0 | 0 | 2 | 1 |
| Հայրս | 0 | 0 | 1 | 0 | 2 | 0 |
| Բնակության վայրի զինկոմիսարիատի աշխատակիցը | 0 | 1 | 2 | 2 | 16 | 21 |
| Հարևանը | 0 | 1 | 1 | 0 | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ինքս եմ գնացել | 0 | 1 | 9 | 0 | 0 | 0 |
| Եղբայրս/բարեկամս | 1 | 1 | 0 | 1 | 0 | 0 |
| Չեմ հիշում | 0 | 4 | 0 | 0 | 0 | 0 |
| Դասղեկը | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Ընկերներս | 0 | 2 | 0 | 0 | 0 | 3 |
| Չեմ կցագրվել | 0 | 1 | 0 | 0 | 0 | 12 |
| **Ընդամենը** | **221** | **212** | **209** | **215** | **147** | **173** |

Զորակոչիկների մեծ մասը հայտնում է, որ իրենց բացատրվել է կցագրման նպատակը (տե՛ս աղյուսակ 3.16.):

Միևնույն ժամանակ, կցագրման ընթացքում իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը համեմատաբար ցածր է (տե՛ս աղյուսակ 3.17.): Այսինքն, արդեն իսկ կցագրման փուլում անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում ապագա զորակոչիկների իրավական պատրաստվածության հարցերին: Կցագրման ժամանակ որպես իրավունքների իրազեկողների զորակոչիկները նշում են դպրոցի «Ռազմական գործ» առարկան դասավանդող ուսուցչին և զինկոմիսարիատի աշխատակցին (տե՛ս աղյուսակ 3.18.):

Աղյուսակ 3.16.

| **Կցագրման/հաշվառման ժամանակ Ձեզ բացատրե՞լ են կցագրման նպատակը** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Այո | 162 | 167 | 141 | 148 | 94 | 84 |
| Ոչ | 46 | 40 | 74 | 62 | 55 | 78 |
| **Ընդամենը** | **208** | **207** | **215** | **210** | **149** | **162** |

Աղյուսակ 3.17.

| **Կցագրման/հաշվառման ժամանակ Ձեզ բացատրե՞լ են թե որ դեպքերում եք օգտվում Ձեր բնակավայրին մոտ ծառայելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատ-վելու կամ զորակոչից տարկետում ստանալու իրավունքներից** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Այո | 88 | 88 | 103 | 101 | 52 | 41 |
| Ոչ | 120 | 119 | 111 | 109 | 97 | 121 |
| **Ընդամենը** | **208** | **207** | **214** | **210** | **149** | **162** |

Աղյուսակ 3.18.

| **Եթե այո, ո՞վ է դա Ձեզ բացատրել** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Դպրոցի «Ռազմական գործ» դասավանդող ուսուցիչը | 60 | 73 | 57 | 70 | 24 | 44 |
| Բարձր դասարանի աշակերտները | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Զինկոմիսարիատի աշխատակիցը | 31 | 26 | 50 | 46 | 37 | 10 |
| Դպրոցի տնօրենը | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Հայրը | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Մայրը | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ընկերները | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Բարեկամը | 0 | 0 | 1 | 4 | 0 | 0 |
| **Ընդամենը** | **94** | **100** | **111** | **120** | **62** | **54** |

Կցագրման փուլում իրավունքների իրազեկման առումով հասկանալի է, որ զինկոմիսարիատները որևէ գործառույթ չեն կարող ունենալ դպրոցներում: Մյուս կողմից, «Նախնական զինվորական պատրաստություն», «Ռազմագիտություն» առարկաների ծրագրերում բացակայում են զորակոչի ընթացքում քաղաքացիների իրավունքների վերաբերյալ թեմաները: Այսինքն, ռազմագիտության ուսուցիչներն իրենց գործառույթների շրջանակում նույնպես չունեն նախազորակոչային տարիքի երեխաներին իրավունքների վերաբերյալ ուսուցման պարտականությունը:

Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ խիստ ցածր է զորակոչիկների իրազեկման մակարդակը զինկոմիսարիատ չներկայանալու դեպքում պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ (տե'ս աղյուսակ 3.19.):

Աղյուսակ 3.19.

| Ծանուցագիրն արդյո՞ք ներառում էր | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Զինկոմիսարիատի անվանումը, հասցեն | 144 | 143 | 203 | 178 | 146 | 72 |
| Զինկոմիսարիատ ներկայանալու նպատակը և ժամկետները | 144 | 121 | 198 | 181 | 143 | 73 |
| Լիազոր մարմնի ստորագրությունը և կնիքը | 137 | 117 | 181 | 147 | 137 | 70 |
| Պատասխանատվությունը չներկայանալու դեպքում | 69 | 54 | 144 | 138 | 98 | 29 |
| Չեմ հիշում | 0 | 10 | 0 | 0 | 0 | 0 |
| Չեմ նայել | 0 | 10 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 494 | 455 | 726 | 644 | 524 | 244 |

Թե' զորակոչիկները, թե' նրանց ծնողները/հարազատները մեծամասամբ «բարեհամբույր և հոգատար» են գնահատում զինկոմիսարիատի աշխատակցի վերաբերմունքը ծանուցման ժամանակ:

### *3.4. Զորակոչի ծանուցման գործընթացի վերլուծություն*

Զորակոչի նպատակով զինկոմիսարիատների կողմից քաղաքացիների ծանուցումն ունի մի քանի կարևոր նպատակ.

1. զորակոչի գործընթացի արդյունավետ կազմակերպում՝ զինկոմիսարիատներում զորակոչիկների կուտակումների բացառման համար,
2. զորակոչիկների իրազեկում «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի դրույթների վերաբերյալ:

Հարցմանը մասնակցած զորակոչիկների հաղորդած տվյալները ցույց են տալիս, որ դեռևս զգալի է զորակոչի բանավոր ծանուցումը (տե՛ս աղյուսակ 3.20.): (Ծանուցագրերի տրամադրումը առավել պարտաճանաչ կերպով իրականացվում է Շիրակի մարզում):

Աղյուսակ 3.20.

| Եթե այո, ո՞վ է դա Ձեզ բացատրել | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| ծանուցագրով | 153 | 140 | 195 | 201 | 102 | 66 |
| բանավոր հաղորդել են | 6 | 15 | 17 | 6 | 29 | 48 |
| Քանի որ 18 տարին լրացած է եղել, սեփական նախաձեռնությամբ է ներկայացել | 1 | 3 | 0 | 1 | 0 | 0 |
| Զանգել են | 11 | 29 | 2 | 0 | 28 | 56 |
| Սեփական նախաձեռնությամբ եմ դիմել | 2 | 0 | 2 | 0 | 0 | 0 |
| Զանգել, կանչել են զինկոմիսարիատ և այնտեղ տվել ծանուցագիրը | 0 | 18 | 0 | 2 | 0 | 4 |
| Հարևան / ծանոթներից բանավոր | 0 | 3 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 173 | 208 | 216 | 210 | 159 | 174 |

Մոնիթորինգի ընթացքում պարզվեց, որ ծանուցագրեր նաև տրվում են 18 տարին չլրացած երիտասարդներին:

Աղյուսակ 3.21.

| Ծանուցագիրը ստանալիս Ձեր 18 տարին լրացա՞ծ է եղել, թե՞ ոչ | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 165 | 150 | 184 | 183 | 139 | 109 |
| Ոչ | 42 | 58 | 32 | 27 | 19 | 65 |
| **Ընդամենը** | 207 | 208 | 216 | 210 | 158 | 174 |

Կարելի է ենթադրել, որ զորակոչի կազմակերպման ընթացքում իրականացվում են նաև կցագրման աշխատանքներ: Այլապես չի կարող հիմնավոր լինել 18 տարեկանը չլրացած անձին զորակոչի վերաբերյալ ծանուցագրի հանձնումը:

Աղյուսակ 3.22.

| Ի՞նչ փաստաթղթեր են Ձեզանից պահանջել զորակոչի նպատակով զինկոմիսարիատ ներկայանալու ժամանակ | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Անձնագիր | 177 | 165 | 208 | 196 | 142 | 145 |
| Ծննդյան վկայական | 11 | 6 | 16 | 0 | 8 | 3 |
| Ծնողի մահվան վկայական | 5 | 3 | 2 | 0 | 0 | 1 |
| Ծնողի հաշմանդամության փաստաթուղթ | 0 | 0 | 1 | 0 | 0 | 1 |
| Տեղեկանք բնակբաժնից | 1 | 1 | 3 | 0 | 0 | 0 |
| Բնութագիր քաղաքապետարանից | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տեղեկանք առողջական վիճակի մասին | 48 | 47 | 61 | 91 | 23 | 29 |
| Տեղեկանք ուսումնական հաստատությունից | 7 | 19 | 3 | 3 | 0 | 9 |
| Ամուսնության վկայական | 0 | 2 | 7 | 1 | 2 | 0 |
| Նկար | 8 | 24 | 9 | 0 | 0 | 0 |
| Ծնողների ամուսնալուծության վկայական | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Ոչ մի փաստաթուղթ | 15 | 27 | 4 | 12 | 3 | 7 |
| Դիպլոմ | 1 | 0 | 0 | 0 | 2 | 1 |
| Խնամակալության փաստաթղթեր | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Երեխայի ծննդյան վկայականը | 0 | 0 | 3 | 0 | 0 | 0 |
| Ատեստատ/ատեստատի պատճենը | 7 | 2 | 0 | 0 | 7 | 0 |
| Սոցիալական քարտ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2 |
| **Ընդամենը** | 281 | 296 | 319 | 303 | 187 | 198 |

Զորակոչի ենթարկվող քաղաքացիներից պահանջվող փաստաթղթերի թիվը հասնում է 17-ի: Իհարկե, յուրաքանչյուր զորակոչիկ չի ներկայացնում նշված թվով փաստաթղթեր (հիմնականում պահանջվում է անձնագիրը), սակայն փաստաթղթերի նման քանակը նույնպես որևէ կերպ հասկանալի չէ:

Ի դեպ նշենք, որ առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանքները պահանջվում են ոչ բոլոր զորակոչիկներից (յուրաքանչյուր մեկը՝ վեցից Լոռու մարզում, հինգից՝ Շիրակի մարզում և ութից՝ Տավուշի մարզում), չնայած հայտնի է, որ առողջական վիճակի վերաբերյալ այս տեղեկանքները, որպես կանոն, հաշվի չեն առնվում ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից:

Զորակոչի գործընթացին մասնակցելու (զինկոմիսարիատ ներկայանալու, բուժզննություն անցնելու, փաստաթղթեր ներկայացնելու և այլն) համար կարևոր խնդիր է տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը: Այս հարցը հատկապես սուր է դրված գյուղաբնակ զորակոչիկների համար: Խնդիրն ավելի է կարևորվում հանրապետական բուժզննություն անցնելու համար: Չնայած դեռևս 2008 թ-ին ՀՀ պաշտպանության նախարարությունից (տե՛ս ՀՀ պաշտպանության նախարարի ավագ օգնական-վարչական ապարատի ղեկավարի կողմից ստացված նամակի պատճենը) հայտնել են, որ տրանսպորտային ծախսերի փոխհատուցման գումարն ավելացվել է, սակայն 2009 թ. զորակոչի մոնիթորինգը ցույց տվեց, որ խնդիրը մնում է չկարգավորված (տե՛ս աղյուսակ 3.23.):

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց,
Ի պատասխան Ձեր 23.10.08թ. N ԵՊ 394՝ Լոռու մարզում զորակոչի հետ կապված սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերաբերյալ գրությանը՝ հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարականով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի դրույթները հրապարակային դարձնելու նպատակով տարածքային զինվորական կոմիսարիատները հրահանգավորվել են զինկոմիսարիատների շենքերի տեսանելի հատվածում ցուցադրական վահանակներ փակցնելու, ինչպես նաև «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն զորակոչիկների իրավունքների և պարտականությունների մասին տեղական լրատվամիջոցներով զորակոչի նախօրեին և ընթացքում պարզաբանումներ տալու վերաբերյալ:
ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարականի համաձայն փոփոխության է ենթարկվել ՀՀ ՊՆ 378-2006 թ. ռազմաբժշկական փորձաքննության կարգի վերաբերյալ հրամանը, որը հնարավորություն կտա ավելի հստակեցնելու պատանիների բուժվերազննման աշխատանքները:
Պետության կողմից երբևիցե նախադեպը չունեցող ֆինանսական միջոցներ են տրամադրվել բուժվերազննման աշխատանքներին, որոնց մեջ է մտնում նաև զորակոչիկներին բժշկական հետազոտության ուղարկելու ճանապարհածախսը, որը գտնվում է ՀՀ պաշտպանության և առողջապահության նախարարությունների ամենօրյա ուշադրության կենտրոնում:
Ինչ վերաբերում է փոխհամագործակցությանը, ապա ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումները լրատվական միջոցների և հասարակական կազմակերպությունների հետ կարող են համագործակցել միայն ՀՀ պաշտպանության նախարարի կողմից սահմանված կարգի համաձայն:
Ձեր կողմից անցկացված սոցիոլոգիական հարցումների ժամանակ պատանիների (զորակոչիկների) անտեղյակությունը և չիմացությունը՝ դա հասարակության զարգացվածության աստիճանի գրավական է, և մեր բոլորիս խնդիրն է դաստիարակել բանիմաց, հայրենիքի պաշտպանությանը պատրաստակամ, հայրենասեր և առողջ պատանիներ:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՎԱԳ ՕԳՆԱԿԱՆ -ՎԱՐՉԱԿԱՆ
ԱՊԱՐԱՏԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Աղյուսակ 3.23.

| **Ձեզ փոխհատուցվե՞լ են զինկոմիսարիատ ներկայանալու համար տրանսպորտային ծախսերը, եթե դրա կարիքը եղել է** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Այո | 14 | 9 | 29 | 27 | 10 | 2 |
| Ոչ | 166 | 98 | 184 | 135 | 113 | 116 |
| Ոչ, կարիք չի եղել | 28 | 101 | 3 | 47 | 33 | 56 |
| **Ընդամենը** | 208 | 208 | 216 | 209 | 156 | 174 |

Լոռու և Տավուշի մարզերում դեռևս անբավարար է զորակոչիկների՝ տարկետում ստանալու, զինծառայությունից ազատվելու և բնակավայրին մոտ ծառայելու հիմքերով իրավունքների բացատրությունը զինկոմիսարիատների կողմից: Բացառություն է կազմում Շիրակի մարզը (տե՛ս աղյուսակ 3.24., 3.25. և 3.26.):

Աղյուսակ 3.24.

| **Զինկոմիսարիատում, որպես զորակոչիկ, բացատրվե՞լ են զորակոչից տարկետում ստանալու հիմքերը** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 63 | 75 | 130 | 118 | 61 | 35 |
| Ոչ | 144 | 133 | 85 | 92 | 98 | 139 |
| **Ընդամենը** | 207 | 208 | 215 | 210 | 159 | 174 |

Աղյուսակ 3.25.

| **Զինկոմիսարիատում, որպես զորակոչիկ, բացատրվե՞լ են զինծառայությունից ազատման հիմքերը** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 60 | 66 | 126 | 97 | 62 | 34 |
| Ոչ | 147 | 142 | 89 | 113 | 97 | 140 |
| **Ընդամենը** | 207 | 208 | 215 | 210 | 159 | 174 |

Աղյուսակ 3.26.

| **Զինկոմիսարիատում, որպես զորակոչիկ, բացատրվե՞լ են բնակավայրին մոտ ծառայելու հիմքերը** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 67 | 71 | 133 | 114 | 69 | 38 |
| Ոչ | 139 | 137 | 83 | 96 | 90 | 136 |
| **Ընդամենը** | 206 | 208 | 216 | 210 | 159 | 174 |

Նույն պատկերը նկատվում է նաև զինկոմիսարիատներում զինծառայողների իրավունքների ու պարտականությունների բացատրման առումով:

Չնայած «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի առկայությանը՝ զինկոմիսարիատներում անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում այլընտրանքային ծառայության անցնելու հիմքերի ծանուցմանը զորակոչիկներին (հինգից մեկն է հայտնում, որ բացատրվել են այլընտրանքային ծառայության հիմքերը): Այս առումով առավել անպարտաճանաչ են Տավուշի մարզի զինկոմիսարիատները:

Հարցազրույցների մասնակից զորակոչիկներից 6-ը (5-ը Շիրակի մարզից, 1-ը Տավուշի մարզից) գարնանային զորակոչի և 7-ը (բոլորն էլ Շիրակի մարզից) աշնանային զորակոչի ժամանակ դիմել են այլընտրանքային ծառայության անցնելու համար:

Այլընտրանքային ծառայության անցնելու ընթացքում զորակոչիկները հայտնում են անբարյացակամ վերաբերմունքի, ընթացակարգային դժվարությունների մասին: Ի դեպ, նշենք, որ զինկոմիսարիատի աշխատակիցների հետ հարցազրույցների ընթացքում որևէ մեկը չի նշել այլընտրանքային ծառայության անցնելու որևէ փաստի մասին:

Զինկոմիսարիատներում փաստաթղթեր ներկայացնելիս զորակոչիկները և նրանց հարազատները հանդիպում են դժվարությունների և խոչընդոտների (նշել են յուրաքանչյուր տասից մեկը) (տե՛ս աղյուսակ 3.27.):

Աղյուսակ 3.27.

| Զինկոմիսարիատ Ձեր շահերից բխող փաստաթղթեր ներկայացնելիս հանդիպե՞լ եք խոչընդոտների | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 9 | 2 | 23 | 10 | 4 | 0 |
| Ոչ | 199 | 194 | 191 | 198 | 155 | 174 |
| Կարիք չի եղել | 0 | 12 | 0 | 2 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 208 | 208 | 214 | 210 | 159 | 174 |

Որպես խոչընդոտ զորակոչիկները նշում են ներկայացվող փաստաթղթերի իսկությունը կասկածի տակ դնելը: Նշվում են դեպքեր, երբ զինկոմիսարիատում կորցրել են ներկայացվող փաստաթղթերը (երեք հոգի՝ Շիրակի մարզից, մեկը՝ Տավուշի մարզից գարնանային զորակոչի ժամանակ):

Զորակոչիկները հայտնում են նաև զորակոչի վերաբերյալ զինկոմիսարիատներից տեղեկություն ստանալու կամ փաստաթղթերին ծանոթանալու ընթացքում հանդիպող խոչընդոտների մասին (10-ից մեկի պնդմամբ): Խոչընդոտների հանդիպած զորակոչիկներին (42 զորակոչիկից 13-ին՝ գարնանային զորակոչի ժամանակ, 42-ից 16-ին՝ աշնանային զորակոչի ժամանակ) ընդհանրապես մերժել են տրամադրել տեղեկատվություն: Զորակոչիկներն ու հարազատները հայտնում են, որ տեղեկատվության տրամադրման ժամանակ վերաբերմունքը զինկոմիսարիատում լինում է անբարյացակամ:

Այնուամենայնիվ, զորակոչիկների ու նրանց հարազատների գերակշիռ մասը զինկոմիսարիատների աշխատակիցների վերաբերմունքը գնահատում է բարեհամբույր և հոգատար (տե՛ս աղյուսակ 3.28.):

Աղյուսակ 3.28.

| Ինչպիսի՞ն է եղել վերաբերմունքը զինկոմիսարիատում Ձեր նկատմամբ | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Բարեհամբույր | 123 | 118 | 76 | 64 | 87 | 80 |
| Հոգատար | 44 | 70 | 28 | 24 | 33 | 58 |
| Անտարբեր | 37 | 15 | 98 | 108 | 30 | 35 |
| Անբարյացակամ | 1 | 2 | 13 | 8 | 3 | 1 |
| **Ընդամենը** | 205 | 205 | 215 | 204 | 153 | 174 |

Զորակոչի կազմակերպման արդյունավետությունը, զորակոչի նկատմամբ զորակոչիկների և նրանց հարազատների վստահությունը մեծապես կախված է զինկոմիսարիատում զորակոչիկների գտնվելու ժամանակի տևողությունից: Այս առումով առավել կազմակերպված աշխատել են Տավուշի զինկոմիսարիատները թե՛ գարնանային, թե՛ աշնանային զորակոչի ժամանակ (տե՛ս աղյուսակ 3.29.):

Աղյուսակ 3.29.

| Որքա՞ն ժամանակ եք սպասել, մինչև Ձեզ ընդունել են | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Գրեթե չեմ սպասել | 122 | 121 | 45 | 54 | 115 | 133 |
| 1 ժամ | 60 | 68 | 73 | 55 | 28 | 33 |
| 2-4 ժամ | 22 | 15 | 75 | 61 | 9 | 7 |
| 4 ժամից ավելի | 3 | 3 | 22 | 40 | 7 | 1 |
| **Ընդամենը** | 207 | 207 | 215 | 210 | 159 | 174 |

Կարևոր ցուցանիշ է հանդիսանում նաև առանց իրական անհրաժեշտության զորակոչիկների լրացուցիչ ներկայանալը զինկոմիսարիատներ: Թե՛ գարնանային, թե՛ աշնանային զորակոչի ընթացքում զորակոչիկների մոտ 16 տոկոսը երկու և ավելի անգամ կանչվել է զինկոմիսարիատ (տե՛ս աղյուսակ 3.30.):

Աղյուսակ 3.30.

| **Զինկոմիսարիատ ներկայանալուց հետո քանի՞ անգամ եք, առանց իրական անհրաժեշտության, կանչվել զինկոմիսարիատ** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Ոչ մի | 149 | 162 | 130 | 172 | 137 | 112 |
| Մեկ | 27 | 21 | 50 | 32 | 11 | 34 |
| Երկու | 24 | 18 | 28 | 6 | 5 | 17 |
| Երեք և ավելի | 8 | 7 | 8 | 0 | 4 | 11 |
| **Ընդամենը** | 208 | 208 | 216 | 210 | 157 | 174 |

***Բուժզննության կազմակերպման ընթացքում զորակոչիկների խնդիրների վերլուծությունը***

*Զինվորական **բուժզննությունը** զորակոչի կազմակերպման կարևոր փուլն է: Զորակոչիկի առողջական վիճակի մասին բժշկական եզրակացության հիման վրա են որոշվում նրա՝ զինվորական ծառայության, շարային կամ ոչ շարային ծառայության համար պիտանիության, առողջական վիճակի հիմքով տարկետում ստանալու հարցերը: Բացի բուն բժշկական զննությունից՝ ուշադրություն է դարձվել առողջական վիճակի վերաբերյալ զորակոչիկների կողմից լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման հետ կապված հարցերին, հանրապետական բուժզննություն անցնելու նպատակով տրանսպորտային խնդիրներին, առողջական վիճակի վերաբերյալ բողոքների ընթացքին:*

Մոնիթորինգում ընդգրկված զորակոչիկների գերակշիռ մասը մինչ զորակոչվելը քաղաքացիական բուժհաստատություններում անցել է բժշկական զննություն (տե՛ս աղյուսակ 3.31.):

Աղյուսակ 3.31.

| **Մինչ բանակ զորակոչվելը բժշկական զննություն անցե՞լ եք** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Այո | 134 | 139 | 195 | 181 | 138 | 157 |
| Ոչ | 72 | 69 | 21 | 29 | 20 | 17 |
| **Ընդամենը** | 206 | 208 | 216 | 210 | 158 | 174 |

Այնուամենայնիվ, Լոռու մարզում յուրաքանչյուր երեք երիտասարդից մեկը մինչ զորակոչվելը քաղաքացիական բուժհաստատություններում չի անցել բուժզննություն: Կարելի է եզրակացնել, որ ապագա զորակոչիկների (մինչև 16 տարեկան երիտասարդների) առողջական վիճակի պահպանությունը՝ որպես զինծառայության նախապատրաստման խնդիր, լուրջ ուշադրության չի արժանանում (տե՛ս աղյուսակ 3.32.):

Աղյուսակ 3.32.

| **Եթե այո, ապա ո՞ր տարիքում** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Մինչև 12 | 36 | 26 | 4 | 25 | 1 | 2 |
| 12-16 | 37 | 49 | 42 | 74 | 29 | 35 |
| 16-18 | 60 | 73 | 152 | 81 | 126 | 139 |
| 18-ից բարձր | 2 | 0 | 15 | 2 | 16 | 0 |
| **Ընդամենը** | 135 | 148 | 213 | 182 | 172 | 176 |

Սրա մասին է վկայում այն, որ առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերի առկայության մասին նշում է հարցազրույցին մասնակցած զորակոչիկների կեսից պակասը (տե՛ս աղյուսակ 3.33.)

Աղյուսակ 3.33.

| Ունե՞ք համապատասխան փաստաթղթեր առողջության հետ կապված խնդիրների վերաբերյալ | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 82 | 75 | 73 | 116 | 63 | 65 |
| Ոչ | 113 | 133 | 142 | 94 | 96 | 109 |
| **Ընդամենը** | 195 | 208 | 215 | 210 | 159 | 174 |

Հարցազրույցին մասնակցած բոլոր զորակոչիկները, բացառությամբ մեկ-երկու դեպքերի, որպես կանոն, անցնում են զինվորական բուժզննություն (տե՛ս աղյուսակ 3.34.):

Աղյուսակ 3.34.

| Զորակոչի ընթացքում անցե՞լ եք բժշկական քննություն և հետազոտում | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 207 | 207 | 213 | 210 | 157 | 174 |
| Ոչ | 1 | 1 | 3 | 0 | 2 | 0 |
| **Ընդամենը** | 208 | 208 | 216 | 210 | 159 | 174 |

Բժշկական հետազոտումն իրականացվում է ռազմաբժշկական հանձնաժողովի բժիշկների կողմից, զինկոմիսարիատի ուղեգրով որոշված բժշկական հիմնարկի կողմից և կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից:

*2009 թ. Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովում բուժզննություն անցածների մասին*

| Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| 6-ից մեկը | 10-ից մեկը | 4-ից մեկը | 6-ից մեկը | 15-ից մեկը | 11-ից մեկը |

Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովում զննություն անցնում են առավել քիչ թվով զորակոչիկներ Տավուշի մարզից: Այս հանգամանքը պետք է բացատրել կա՛մ Տավուշի մարզի զորակոչիկների առավել բարվոք առողջական վիճակով, կա՛մ առողջապահական համակարգի հնարավորություններով, որը չի համապատասխանում իրականությանը, կա՛մ մարզի զորակոչիկների համար մայրաքաղաքում բժշկական հանձնաժողովին դիմելու սահմանափակ հնարավորություններով:

Բժշկական զննության ընթացքում հիմնականում իրականացվում են հետևյալ հետազոտությունները՝ սոնոգրաֆիա, էխոսրտագրություն, էլեկտրասրտագրաֆիա, արյան անալիզ (տե՛ս աղյուսակ 3.35.):

Աղյուսակ 3.35.

| Ի՞նչ հետազոտություններ են կատարվել բժշկական քննության ընթացքում | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Սոնոգրաֆիա | 201 | 197 | 177 | 188 | 148 | 168 |
| Էխոսրտագրություն | 151 | 130 | 130 | 135 | 131 | 132 |
| Էլեկտրասրտագրաֆիա | 163 | 191 | 162 | 191 | 151 | 161 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Արյան անալիզ | 203 | 194 | 193 | 206 | 159 | 169 |
| Նյարդային համակարգի | 6 | 65 | 5 | 0 | 7 | 5 |
| Տեսողության | 23 | 51 | 7 | 0 | 6 | 5 |
| Ատամների | 6 | 37 | 1 | 0 | 2 | 3 |
| Թոքերի | 4 | 7 | 5 | 2 | 0 | 1 |
| Ձեռքեր | 8 | 8 | 1 | 0 | 0 | 1 |
| Քիթ-կոկորդի | 23 | 24 | 1 | 1 | 0 | 2 |
| Լսողության | 12 | 29 | 2 | 8 | 0 | 1 |
| Մաշկի | 10 | 7 | 2 | 2 | 0 | 1 |
| Չի հիշում | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ճնշումն են չափել | 0 | 0 | 6 | 0 | 0 | 0 |
| Ռենտգեն | 0 | 6 | 2 | 0 | 0 | 0 |
| Ընդհանուր ստուգել են | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գաստրոսկոպիա | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 811 | 953 | 694 | 733 | 604 | 649 |

Հատկապես Շիրակի և Տավուշի մարզերում զորակոչիկները, որպես կանոն, չեն անցնում նյարդային համակարգի, տեսողության, ատամների, թոքերի, քիթ-կոկորդի, լսողության հետազոտություններ: Կարելի է ենթադրել, որ կա՛մ այս հետազոտությունների անցկացման տեխնիկական և մասնագիտական ռեսուրսներն են բացակայում, կա՛մ նշված հետազոտությունները իրականացվում են միայն գանգատների ու բողոքների դեպքում: Այսինքն՝ զորակոչիկների առողջական վիճակի հետազոտությունները ողջ ծավալով չեն իրականացվում:

Միևնույն ժամանակ, զորակոչիկների գերակշիռ մասը գտնում է, որ կատարվել են բոլոր անհրաժեշտ ուսումնասիրությունները՝ իրենց առողջական խնդիրները բացահայտելու համար (տե՛ս աղյուսակ 3.36.):

Աղյուսակ 3.36.

| **Ձեր կարծիքով, Ձեզ մոտ առկա հիվանդության բացահայտման համար անհրաժեշտ բոլոր հետազոտությունները կատարվե՞լ են** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Այո | 186 | 185 | 155 | 172 | 136 | 143 |
| Ոչ, տեխնիկական հնարավորությունները թույլ չտվեցին | 3 | 2 | 16 | 11 | 10 | 22 |
| Ոչ, չցանկացան անհրաժեշտ ուսումնասիրություններ կատարել | 8 | 6 | 4 | 1 | 3 | 5 |
| Ոչ, անփութորեն մոտեցան հետազոտմանը | 8 | 8 | 6 | 3 | 4 | 4 |
| Ոչ, չցանկացան թանկարժեք հետազոտման ուղարկել | 2 | 2 | 1 | 1 | 5 | 2 |
| Ոչ, թեև նշեցին, որ լրացուցիչ ստուգման կարիք կա, բայց հետազոտման բարձր գնի պատճառով չուղարկեցին | 1 | 0 | 2 | 0 | 0 | 0 |
| Ոչ, այլ պատճառով | 1 | 0 | 2 | 0 | 2 | 1 |
| Առողջական խնդիր չեմ ունեցել | 0 | 12 | 31 | 22 | 0 | 0 |
| Հիվանդությունս բնածին է, հետևաբար կարիքը չկար | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 209 | 216 | 217 | 210 | 160 | 177 |

Նկատենք, որ բժշկական հաստատությունների անձնակազմը գտնում է, որ չունեն բոլոր անհրաժեշտ հետազոտությունների հնարավորությունը (տե՛ս աղյուսակ 3.37.):

Աղյուսակ 3.37.

| Ձեր հաստատությունում իրականացվում են արդյոք բոլոր անհրաժեշտ հետազոտությունները, որոնք հնարավորություն կտան հստակ պատկերացում կազմել յուրաքանչյուր զորակոչիկի առողջական վիճակի մասին | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 10 | 8 | 7 | 6 | 8 | 7 |
| Ոչ | 8 | 10 | 8 | 11 | 7 | 8 |
| **Ընդամենը** | 18 | 18 | 15 | 17 | 15 | 15 |

Բժշկական մասնագետները նշում են, որ բացակայում են հետազոտման համար անհրաժեշտ գործիքներ և նյութեր:

Հարցմանը մասնակցել են այն բուժհաստատությունների ներկայացուցիչները, որոնք իրականացնում են զորակոչիկների առողջական վիճակի բուժզննություն՝ ըստ զինկոմիսարիատի ուղեգրերի:

Բուժզննության ընթացքում զորակոչիկների գերակշիռ մասը ներկայացնում է իրենց առողջական վիճակի մասին գանգատները (տե՛ս աղյուսակ 3.38.):

Աղյուսակ 3.38.

| Բժշկական քննության ժամանակ նշե՞լ եք արդյոք Ձեզ մոտ առկա բոլոր գանգատները | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 157 | 164 | 150 | 163 | 121 | 137 |
| Ոչ, չգիտեի, թե ինչ ասեի | 8 | 3 | 11 | 4 | 7 | 6 |
| Ոչ, ամաչում էի | 4 | 0 | 1 | 3 | 2 | 1 |
| Ոչ, չէի ցանկանում հիվանդի տպավորություն թողնել | 3 | 1 | 7 | 2 | 9 | 5 |
| Ոչ, այլ պատճառով | 4 | 1 | 1 | 0 | 1 | 1 |
| Գանգատ չունեմ | 32 | 38 | 43 | 38 | 18 | 24 |
| Ոչ | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Ոչ, անիմաստ է | 0 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 208 | 208 | 215 | 210 | 158 | 174 |

Չգանգատվողները պատճառների թվում նշում են՝ «ամաչում էի», «չէի ցանկանում հիվանդի տպավորություն թողնել», «չգիտեմ, թե ինչ ասեմ»: Զորակոչիկների գերակշիռ մասը նշում է, որ հանձնաժողովների անդամները հետաքրքրվում և հարցեր էին տալիս հնարավոր գանգատների մասին: Այսինքն՝ բժշկական զննության ժամանակ նրանց մեծ մասը որևէ խանգարող հանգամանքի չի հանդիպել:

Փոքր թվով զորակոչիկներ և նրանց հարազատները հայտնում են, որ բժշկական զննության ժամանակ ներկա են եղել կողմնակի անձինք, որը գնահատվել է որպես խանգարող հանգամանք:

Բժշկական զննության նկատմամբ զորակոչիկների, նրանց հարազատների վստահության կարևոր ցուցանիշներից են գանգատներին, բողոքներին արձագանքները, առողջական վիճակի մասին լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման հնարավորությունը և բուժհանձնաժողովի անդամների վերաբերմունքը զորակոչիկների նկատմամբ:

Զորակոչիկների գերակշիռ մասը հայտնում է, որ հնարավորություն է ունեցել հանձնաժողովին ներկայացնելու առողջական խնդիրների վերաբերյալ փաստաթղթեր և բողոքներ (տե՛ս աղյուսակ 3.39.):

Աղյուսակ 3.39.

| Հնարավորություն ունեցե՞լ եք արդյոք հանձնաժողովին ներկայացնելու Ձեր առողջական վիճակի մասին այլ փաստաթղթեր կամ բողոքներ | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 98 | 84 | 109 | 108 | 76 | 59 |
| Ոչ, ուշադրություն չդարձրին | 11 | 1 | 5 | 1 | 3 | 0 |
| Ոչ, կարիք չի եղել | 72 | 101 | 46 | 76 | 41 | 103 |
| Ոչ, հավաստի չհամարեցին | 4 | 0 | 11 | 22 | 6 | 1 |
| Ոչ | 16 | 2 | 40 | 0 | 31 | 8 |
| Ոչ, փաստաթուղթ չեմ ունեցել | 5 | 20 | 4 | 3 | 0 | 3 |
| **Ընդամենը** | **206** | **208** | **215** | **210** | **157** | **174** |

Ընդ որում, երկուսից կամ երեքից մեկը, ըստ առանձին մարզերի, հայտնում է, որ ներկայացված բողոքները հաշվի են առնվել, և ինքն ուղարկվել է լրացուցիչ հետազոտման:

Աղյուսակ 3.40.

| Ձեր բողոքները առողջական վիճակի վերաբերյալ հաշվի՞ են առնվել հանձնաժողովի կողմից | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո, ուղարկել են հետազոտման | 63 | 62 | 89 | 82 | 39 | 43 |
| Այո, տարկետում են տվել | 13 | 10 | 36 | 28 | 3 | 2 |
| Այո, ազատել են զինվորական ծառայությունից | 1 | 1 | 18 | 1 | 0 | 0 |
| Ոչ, կամայականորեն ընթացք չեն տվել | 3 | 1 | 2 | 0 | 2 | 0 |
| Ոչ, բավարար լուրջ չեն համարվել | 29 | 16 | 21 | 42 | 16 | 18 |
| Բողոք չեմ ունեցել | 37 | 119 | 79 | 78 | 42 | 111 |
| Ոչ, փաստաթղթեր չեն եղել | 0 | 0 | 0 | 0 | 3 | 0 |
| Ոչ | 0 | 0 | 4 | 0 | 3 | 1 |
| Այո, բուժում են նշանակել | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | **146** | **210** | **249** | **231** | **108** | **175** |

Միևնույն ժամանակ, նկատենք, որ տասից մեկը հայտնում է, որ այդ գանգատները հաշվի չեն առնվել: Բժշկական զննության արդյունավետության մասին հետաքրքիր տվյալներ են հաղորդում զորացրվածների շրջանում անցկացված հարցումները:
Զորացրվածների մոտ 30-40 տոկոսը, ըստ մարզերի, նշում է, որ ծառայության ընթացքում կարիք է ունեցել հիվանդանոցային բուժման (տե՛ս աղյուսակ 3.41.):

Աղյուսակ 3.41.

| Զինվորական ծառայության ընթացքում հիվանդանոցային բուժման կարիք զգացե՞լ եք | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 89 | 95 | 100 | 60 | 51 | 47 |
| Ոչ | 117 | 115 | 129 | 136 | 119 | 112 |
| **Ընդամենը** | **206** | **210** | **229** | **196** | **170** | **159** |

Ընդ որում, առողջության հետ կապված խնդիրները ծագում են ծառայության առաջին վեց ամսվա ընթացքում (տե՛ս աղյուսակ 3.42.):

Աղյուսակ 3. 42.

| **Եթե այո, ապա զորակոչվելուց որքա՞ն ժամանակ անց եք նման կարիք զգացել** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| 1ամիս անց | 11 | 14 | 52 | 13 | 5 | 1 |
| 2-6 ամիս անց | 31 | 32 | 28 | 22 | 11 | 20 |
| 6-12 ամիս անց | 31 | 35 | 17 | 16 | 22 | 18 |
| 12-24 ամիս անց | 18 | 15 | 2 | 10 | 13 | 10 |
| 1 ամսում | 2 | 0 | 0 | 0 | 0 | 1 |
| **Ընդամենը** | 93 | 96 | 99 | 61 | 51 | 50 |

Զորացրվածների մոտ 1/3-ը գտնում են, որ ծառայության ընթացքում հոսպիտալացման պատճառ են հանդիսացել մինչ զորակոչվելն ունեցած հիվանդությունները (տես աղյուսակ 3.43.):

Աղյուսակ 3.43.

| **Հոսպիտալացման պատճառը Ձեզ մոտ նո՞ր ծագած, թե՞ մինչ զորակոչվելը եղած հիվանդությունն էր** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Նոր ծագած | 80 | 76 | 50 | 42 | 40 | 37 |
| Մինչ զորակոչվելը դրսևորված | 13 | 20 | 49 | 19 | 11 | 12 |
| **Ընդամենը** | 93 | 96 | 99 | 61 | 51 | 49 |

Հետաքրքիր է, որ զորակոչային հանձնաժողովը տեղյակ է եղել այդ հիվանդությունների մասին, բայց զորացրվածները գտնում են, որ հիվանդությունը զննության ժամանակ սրված չէր (տե՛ս աղյուսակ 3.44.): Այսինքն՝ բուժզննության ընթացքում ուշադրություն է դարձվում միայն տվյալ պահին հիվանդության առկայությունը, բայց հաշվի չի առնվում, թե գոյություն ունեցող առողջական խնդիրները ծառայության ընթացքում ինչ բարդություններ կարող են առաջացնել:

Այսպիսով, զորակոչի նպատակով բուժզննությունը զորակոչիկի առողջական վիճակի մասին համալիր և ամբողջական եզրակացություն չի ձևավորում, քանի որ չի ներառում զինծառայության ընթացքում զորակոչիկի առողջական վիճակի պահպանման համար բուժումների նշանակումը:

Աղյուսակ 3.44.

| **Եթե պատճառը մինչ զորակոչը եղած հիվանդությունն էր, ապա զորակոչի հանձնաժողովը տեղյա՞կ էր դրա մասին** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Լոռի** | | **Շիրակ** | | **Տավուշ** | |
| | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** | **Գարնանային զորակոչ** | **Աշնանային զորակոչ** |
| Այո, բայց հիվանդությունը սրված չէր | 6 | 14 | 31 | 15 | 6 | 4 |
| Այո, բայց ուշադրություն չդարձրին | 6 | 4 | 8 | 2 | 2 | 4 |
| Ոչ, ես չներկայացրի հիվանդության գանգատներ, չցանկացա հիվանդոտ երևալ | 1 | 1 | 2 | 1 | 2 | 3 |
| Ոչ, ես չներկայացրի հիվանդության գանգատներ, ամաչեցի բժշկից | 0 | 0 | 1 | 0 | 1 | 0 |
| Ոչ, ես չներկայացրի հիվանդության գանգատները այլ պատճառով | 0 | 1 | 1 | 0 | 1 | 1 |
| Այո | 0 | 0 | 5 | | 0 | 0 |
| **Ընդամենը** | 13 | 20 | 48 | 18 | 12 | 12 |

Հետաքրքիր է, որ 1176 զորացրվածներից 59-ը, որոնք ծառայության ընթացքում բուժում են ստացել, մինչ զորակոչվելը առողջական հիմքով ստացել էին տարկետում:
Չնայած և' զորակոչիկները, և' նրանց ծնողներն ու հարազատները հիմնականում հայտնում են, որ բուժզննությունը և հետազոտումը հիմնականում իրականացվել են անվճար, այնուամենայնիվ փոքրաթիվ դեպքերում հայտնում են բարձրարժեք հետազոտությունների համար վճարման մասին (տե՛ս աղյուսակ 3.45.):

Աղյուսակ 3.45.

| Զորակոչի ընթացքում բժշկական զննությունը և հետազոտումը ստացել եք անվճա՞ր | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 204 | 207 | 210 | 209 | 155 | 174 |
| Ոչ | 4 | 1 | 5 | 1 | 4 | 0 |
| **Ընդամենը** | 208 | 208 | 215 | 210 | 159 | 174 |

*Հանրապետական բուժզննության անցնելու հիմնական դժվարությունը պայմանավորված է տրանսպորտային ծախսերով՝ հատկապես Երևանից հեռու գտնվող մարզերի բնակիչների համար: Երկրորդ դժվարությունը պայմանավորված է հանրապետական բուժզննության անցնելու ընթացքում օթևանի և սննդի հետ կապված խնդիրներով:*

Հարցազրույցների մասնակցած զորակոչիկների մոտ կեսը անցել է հանրապետական բժշկական զննություն և հետազոտում:

Հանրապետական բուժզննություն անցած զորակոչիկների գերակշիռ մասը հայտնում է, որ ճանապարհածախսը հոգացել է պետությունը, բայց մասամբ (տե՛ս աղյուսակ 3.46.):

Աղյուսակ 3.46.

| Եթե անցել եք հանրապետական բժշկական զննություն և հետազոտում, ապա ո՞վ է հոգացել Ձեր ճանապարհածախսը | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Պետությունը, բայց մասամբ | 64 | 68 | 73 | 62 | 32 | 39 |
| Պետությունը ամբողջությամբ | 2 | 1 | 8 | 0 | 2 | 6 |
| Ես | 5 | 1 | 41 | 13 | 10 | 12 |
| Հարազատներս | 9 | 0 | 7 | 5 | 7 | 2 |
| Ծանոթներս | 0 | 1 | 1 | 0 | 2 | 0 |
| **Ընդամենը** | 80 | 71 | 130 | 80 | 53 | 59 |

Տրանսպորտային ծախսերի խնդրին անդրադարձել ենք նաև վերևում: Այստեղ նշենք, որ հանրապետական բուժզննություն անցնելու հարցում զորակոչիկներին հիմնականում աջակցում են նրանց հարազատները (տե՛ս աղյուսակ 3.47.), որոնք հոգում են գիշերելու և սննդի ծախսերը:

Աղյուսակ 3.47.

| Եթե անցել եք հանրապետական բժշկական զննություն և հետազոտում, և կարիք է եղել մնալու Ձեր բնակավայրից դուրս, ապա ո՞վ է հոգացել Ձեր այդ ծախսը | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Պետությունը, բայց մասամբ | 14 | 10 | 10 | 9 | 12 | 8 |
| Պետությունը ամբողջությամբ | 2 | 0 | 4 | 1 | 1 | 0 |
| Ես | 38 | 33 | 65 | 23 | 20 | 23 |
| Հարազատներս | 24 | 21 | 38 | 44 | 15 | 27 |
| Ծանոթներս | 2 | 2 | 4 | 0 | 1 | 0 |
| Մնալու կարիք չի եղել | 0 | 4 | 6 | 3 | 0 | 1 |
| **Ընդամենը** | 80 | 70 | 127 | 80 | 49 | 59 |

Հանրապետական բժշկական հանձնաժողովների վերաբերմունքը զորակոչիկները հիմնականում գնահատում են որպես բարեհամբույր և հոգատար (տե՛ս աղյուսակ 3.48.):

Աղյուսակ 3.48.

| Բժշկական հանձնաժողովի անդամները ի՞նչպես են Ձեզ վերաբերվել | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Բարեհամբույր | 127 | 114 | 96 | 97 | 87 | 93 |
| Անտարբեր | 37 | 14 | 74 | 83 | 23 | 17 |
| Անբարյացակամ | 4 | 1 | 5 | 2 | 1 | 0 |
| Արհամարհական | 2 | 0 | 7 | 0 | 5 | 0 |
| Ծաղրելով | 2 | 2 | 4 | 0 | 0 | 0 |
| Հոգատար | 59 | 78 | 35 | 28 | 61 | 67 |
| **Ընդամենը** | 231 | 209 | 221 | 210 | 177 | 177 |

Առավել շատ դժգոհություն հայտնում են Շիրակի մարզի զորակոչիկները:

# ԲԱԺԻՆ 4. Զորակոչի կազմակերպման ընթացքում առաջացած խնդիրների, բողոքների պատճառների վերլուծություն

## *4.1. Զինծառայության համար պիտանիության և ոչ պիտանիության վերաբերյալ որոշումների վերլուծությունը*

Հարցազրույցին մասնակցած զորակոչիկների՝ միջին հաշվով երեքից մեկը գարնանային զորակոչի և հինգից մեկը աշնանային զորակոչի ժամանակ (տե՛ս աղյուսակ 4.1.) արդեն ստացած է եղել տարկետում, հիմնականում առողջական վիճակի պատճառով և ուսումը շարունակելու համար (տե՛ս աղյուսակ 4.2.):

Աղյուսակ 4.1.

| Մինչ այժմ զորակոչից տարկետում ստացե՞լ եք | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 37 | 33 | 68 | 55 | 30 | 15 |
| Ոչ | 167 | 175 | 148 | 155 | 128 | 159 |
| **Ընդամենը** | 204 | 208 | 216 | 210 | 158 | 174 |

Աղյուսակ 4.2.

| Եթե այո, ի՞նչ հիմքով | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Ընտանեկան դրության բերումով | 0 | 0 | 7 | 3 | 1 | 0 |
| Ուսումը շարունակելու համար | 14 | 11 | 24 | 21 | 23 | 8 |
| Առողջական վիճակի բերումով | 20 | 21 | 36 | 28 | 5 | 5 |
| Այստեղ՝ ՀՀ-ում, չեմ եղել | 0 | 0 | 3 | 0 | 1 | 0 |
| **Ընդամենը** | 34 | 32 | 70 | 52 | 30 | 13 |

Տարկետում տրամադրվել է տարբեր ժամկետներով՝ առանձին դեպքերում մինչև հինգ տարի: Սակայն հիմնականում տրամադրվել է մինչև մեկ և երեք տարի: Տարկետում ստացածների մոտ 80 տոկոսը մեկ անգամ է այն ստացել:

Տարբեր հիմքերով տարկետման տրամադրման վիճակի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են հայտնում զորացրվածները: Այսպես, հարցման մասնակից յուրաքանչյուր 3 զորացրվածներից մեկը գտնում է, որ հիմքեր ուներ բնակավայրին մոտ ծառայելու կամ զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու իրավունքներից օգտվելու համար:

Աղյուսակ 4.3.

| Եթե այո, ապա կարողացա՞ք օգտվել դրանցից | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո, տարկետում ստացա | 10 | 12 | 63 | 27 | 8 | 8 |
| Այո, ազատվեցի | 0 | 0 | 11 | 1 | 0 | 0 |
| Այո, այլընտրանքային ծառայության անցա | 0 | 1 | 4 | 3 | 2 | 0 |
| Այո, ծառայության անցա բնակության վայրին մոտ | 7 | 29 | 23 | 24 | 18 | 9 |
| Ոչ, գումար պահանջեցին, որը ես չունեի | 1 | 0 | 11 | 5 | 1 | 1 |
| Ոչ, բժիշկները կամայականություն դրսևորեցին | 4 | 2 | 1 | 0 | 2 | 1 |
| Ոչ, բժիշկներն անփույթ գտնվեցին | 1 | 2 | 7 | 0 | 3 | 0 |
| Ոչ, օգտվեցին իմ անտեղյակությունից | 3 | 3 | 8 | 1 | 3 | 3 |
| Ոչ, զինկոմիսարիատում կամայականություն դրսևորեցին | 2 | 0 | 1 | 0 | 0 | 2 |
| Ոչ, օգտվեցին օրենքի բացերից/ոչ հստակությունից | 2 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ոչ, շարային զինծառայության անցա | 3 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ոչ, բայց ես ինքս հրաժարվեցի ու գնացի բանակ | 1 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Ոչ, հրաժարվեցի այլընտրանքային ծառայությունից | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Հիմքերը բավարար լուրջ չեն համարվել | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | 34 | 50 | 129 | 62 | 38 | 24 |

Տարկետման հիմքեր ունենալու վերաբերյալ կարծիք ունեցող զորացրվածների 40 տոկոսը հայտնում է, որ ստացել է տարկետում (տե՛ս աղյուսակ 4.3.):

Որոշ զորացրվածներ հայտնում են (337 հոգուց 19-ը), որ պահանջվող գումարի չվճարման պատճառով հնարավորություն չեն ունեցել օգտվելու իրենց իրավունքներից:

Նկատենք, որ կոռուպցիոն ռիսկերի, կաշառքների վերաբերյալ կարծիքների բացահայտումը զորակոչիկների ու նրանց հարազատների շրջանում բավականին դժվար էր, քանի որ, ինչպես հայտնում էին առանձին դեպքերում, խուսափում են հնարավոր բարդություններից:

Եթե դիտարկենք զորակոչի ընթացքում դժգոհությունների և բողոքների պատճառները, ապա կտեսնենք, որ գերակշիռ մասը հայտնում է, որ որևէ դժգոհություն չունի (տե՛ս աղյուսակ 4.4.):

Աղյուսակ 4.4.

| Ունեցե՞լ եք արդյոք դժգոհություններ կամ բողոքներ զորակոչի ընթացքում | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 14 | 3 | 23 | 3 | 11 | 3 |
| Ոչ | 184 | 187 | 159 | 168 | 137 | 162 |
| Այո, շատ սպասեցրին | 1 | 1 | 1 | 6 | 2 | 0 |
| Այո, բժշկական եզրակացության վերաբերյալ են դժգոհություններս | 2 | 1 | 2 | 0 | 0 | 5 |
| Այո, շատ են ձգձգում, ոչ բուժումն է արդյունք տալիս, ոչ էլ ազատում են ծառայությունից | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Այո, ոչինչ նորմալ/ուշադիր չէ | 1 | 4 | 2 | 4 | 0 | 0 |
| Այո, բժիշկները նորմալ չեն ստուգում | 2 | 0 | 4 | 0 | 1 | 0 |
| Այո, բուժզննության ժամանակ գումար են պահանջել, որ ազատեն | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այո, բժիշկների կոպտությունը | 1 | 3 | 1 | 3 | 1 | 0 |
| Այո, քաշքշուքը շատ էր | 0 | 2 | 7 | 12 | 1 | 3 |
| Այո, բոլորի վերաբերմունքից եմ դժգոհում | 0 | 0 | 3 | 0 | 0 | 0 |
| Այո, զինկոմիսարիատի աշխատակիցներից եմ դժգոհում | 0 | 0 | 2 | 2 | 0 | 0 |
| Այո, անտարբերությունը շատ է | 0 | 1 | 4 | 3 | 0 | 0 |
| Աայո, անկազմակերպ են | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Այո, բժիշկների վերաբերմունքից եմ դժգոհում | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Այո, նորմալ հետազոտման համար անհրաժեշտ սարքավորումներ չկան | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Այո, հաշվի չի առնվել եղբորս ծառայությունը և ոտքիս կտրվածքը0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Այո, հիվանդանոցում տվյալները, տեղեկությունները սխալ են գրել | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Այո, բողոքները հաշվի չեն առնվել բժիշկների կողմից | 0 | 1 | 0 | 1 | 0 | 0 |
| Այո, աշխատակիցները շատ կոպիտ են | 0 | 0 | 0 | 3 | 0 | 0 |
| Այո, գումար էին պահանջել | 1 | 0 | 0 | 2 | 0 | 0 |
| Այո, զորակոչիկներին չեն իրազեկում իրենց իրավունքների մասին | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Ծնողներս ինձ լքել են, բայց փաստաթղթեր չունեմ, որ տատիս ու պապիս միակ չափահաս խնամողն եմ | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| Այո, հանրապետական բուժզննման գնալու սնունդը և ճանապարհածախսը չեն տրամադրում | 0 | 4 | 0 | 4 | 0 | 1 |
| Այո, բուժզննման ժամանակ կողմնակի անձինք կային | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| **Ընդամենը** | **208** | **208** | **214** | **213** | **153** | **174** |

Առավել շատ դժգոհությունների մասին հայտնում են Շիրակի մարզի զորակոչիկները: Ուշադրություն դարձնենք, որ դժգոհությունների, գանգատների հիման վրա որևէ մարմնին բողոք ներկայացածների թիվը անհամեմատ քիչ է:

Ծնողները, հարազատները, զորացրվածները և զորակոչիկները հայտնում են, որ բողոքներ չեն ներկայացնում, քանի որ «անիմաստ էր, ոչ-ոք ուշադրություն չէր դարձնի»:

Ավելի քիչ է բողոքների թիվը, որոնք ստացել են դրական լուծում (18-ից 6-ը):

Աղյուսակ 4.5.

| | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Բողոք, գանգատ ունեցողների թիվը | 23 | 21 | 55 | 42 | 16 | 12 |
| որևէ մարմնին բողոքներ ներկայացածների թիվը | 4 | 4 | 1 | 3 | 3 | 0 |
| դրական լուծում ստացած դիմումների թիվը | 3 | 1 | 2 | 1 | 0 | 1 |
| **Ընդամենը** | 30 | 26 | 58 | 46 | 19 | 13 |

Զորակոչի ընթացքում խախտումների մասին առավել հիմնավոր կարծիքներ ստացվում են զորացրվածների շրջանում իրականացված հարցումների միջոցով:

Աղյուսակ 4.6.

| **Որո՞նք են ըստ Ձեզ , զորակոչի ընթացքում ամենից հաճախ տեղ գտնող խախտումները** | **Ըստ մարզերի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Կոռուպցիայի պատճառով զինծառա-յությունից ազատումը/զորակոչից տարկետումը | 216 | 212 | 182 | 177 | 82 | 79 |
| Բժիշկների կամայականությունը, անփութությունը | 116 | 84 | 137 | 95 | 52 | 39 |
| Զորակոչից տարկետման/ ազատման հիմքերի չկիրառումը՝ օգտվելով զորակոչիկների անտեղյակությունից | 57 | 101 | 70 | 43 | 36 | 51 |
| Զորակոչից տարկետման/ ազատման հիմքերի չկիրառումը՝ կամայականություն դրսևորելով | 36 | 20 | 13 | 9 | 11 | 9 |
| Զորակոչից տարկետման/ազատման հիմքերի չկիրառումը՝ օգտվելով օրենքի բացերից/ ոչ հստակությունից | 25 | 26 | 23 | 19 | 31 | 38 |
| Հանրապետական բուժզննության ժամանակ ֆինանսապես բարծիթողի վիճակը | 1 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| Խտրական վերաբերմունք զինվորների նկատմամբ | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Չգիտեմ | 5 | 4 | 0 | 0 | 10 | 28 |
| Զորակոչիկի բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի խախտումը | 0 | 0 | 3 | 0 | 0 | 0 |
| Խախտումներ չկան | 0 | 15 | 0 | 7 | 0 | 18 |
| Իրավունքների ոտնահարումը | 0 | 1 | 0 | 0 | 0 | 2 |
| **Ընդամենը** | **457** | **465** | **428** | **350** | **222** | **264** |

Նրանց մոտ կեսը նշում է զինծառայությունից կոռուպցիոն ճանապարհով տարկետում ստանալու կամ ազատվելու մասին:

Զորացրվածները զորակոչի ընթացքում առավել հաճախ տեղ գտնող խախտումների պատճառների թվում նշում են բժիշկների կամայականությունն ու անփութությունը, զորակոչիկների անտեղյակությունը: Նույն օրինաչափություններն արտահայտված են նաև զորակոչիկների ծնողների ու հարազատների պատասխաններում:

Զորակոչիկների ծնողներն ու հարազատները հայտնում են, որ իմացել են դեպքերի մասին, երբ զորակոչիկը տարկետման կամ զինծառայությունից ազատման հիմքեր չի ունեցել, բայց օգտվել է այդ իրավունքից (տե՛ս աղյուսակ 4.7):

Աղյուսակ 4.7.

| Այս ընթացքում անձամբ Դուք տեղեկացե՞լ եք դեպքերի, երբ եղել են անձինք, ովքեր չունեին զինծառայությունից ազատման հիմքեր կամ տարկետում ստանալու հիմքեր, բայց որոնք օգտվել են դրանից | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Այո | 22 | 16 | 26 | 24 | 10 | 11 |
| Ոչ | 21 | 24 | 13 | 38 | 22 | 21 |
| **Ընդամենը** | 43 | 40 | 39 | 62 | 32 | 32 |

Զորակոչի ընթացքում խախտումների թվում կոռուպցիան որպես գլխավոր գործոն համարում են նաև դպրոցների ներկայացուցիչները:

Հետաքրքիր է, որ բժիշկները խախտումների թվում նշում են ոչ միայն կոռուպցիան, այլև զորակոչիկների անտեղյակության հետևանքով տարկետման/ազատման հիմքերի չկիրառումը:

Մոնիթորինգի ընթացքում հարցազրույց է անցկացվել նաև զինկոմիսարիատների ներկայացուցիչների հետ (13-ը գարնանային և 14-ը աշնանային զորակոչի ժամանակ):

Զինկոմիսարիատի աշխատակիցները գտնում են, որ զորակոչիկների իրավունքների խախտման հիմնական պատճառ է հանդիսանում զորակոչիկների առողջական վիճակի ոչ բավարար հետազոտումը, որը կարող է արտահայտվել զորակոչիկների կողմից գանգատների քողարկմամբ:

Զորակոչի ընթացքում գոյություն ունեցող խախտումների վերացման ուղիների վերաբերյալ կարծիքները բազմազան են: Մասնավորապես, զորակոչիկները որպես ադպիսի ճանապարհ տեսնում են ֆինանսական միջոցների տրամադրումը (1/3-ի կարծիքով), բժիշկների ուշադրության բարձրացումը կամ անփութության բացառումը (10-ից մեկի կարծիքով) և շատ քչերի կարծիքով՝ (6-7 տոկոս) իրենց իրավունքների մասին իրազեկման մակարդակի բարձրացումը: Ի տարբերություն զորակոչիկների՝ զորացրվածները զորակոչի գործընթացի բարելավման հիմնական ուղիները տեսնում են.

1. զորակոչիկների իրազեկման մակարդակի բարձրացումը իրենց իրավունքների մասին,
2. օրենքների բարելավումը,
3. զինկոմիսարիատների աշխատանքի կանոնակարգումն ու բարելավումը (տե՛ս աղյուսակ 4.8.):

Աղյուսակ 4.8.

| Ի՞նչը կառաջարկեին փոփոխել զորացրվածները՝ զորակոչի գործընթացում վիճակը բարելավելու համար | Ըստ մարզերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Լոռի | | Շիրակ | | Տավուշ | |
| | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ | Գարնանային զորակոչ | Աշնանային զորակոչ |
| Բարելավել օրենքները | 109 | 83 | 130 | 91 | 93 | 100 |
| բարելավել/ կանոնակարգել զինկոմիսարիատի աշխատանքը/ փոխել զինկոմիսարիատների աշխատակիցներին, բարձրացնել զինկոմիսարիատների աշխատակիցների և բժշկական հանձնաժողովների անդամների աշխատավարձը, փոխել զորակոչիկների հանդեպ զինկոմիսարիատների աշխատակիցների վերաբերմունքը/ | 57 | 93 | 60 | 70 | 45 | 43 |
| Բարձրացնել զորակոչիկների իրազեկվածությունը իրենց իրավունքների մասին /նախապես, մինչ զինկոմիսարիատ կանչելը, զորակոչիկներին տեղեկացնել զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման հիմքերի մասին, զինկոմիսարիատներում զորակոչիկներին տեղեկացնել զորակոչից տարկետման և այլ իրավունքների մասին | 152 | 136 | 224 | 191 | 116 | 104 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Սպաների կողմից վերաբերմունքը ավելի դրական դարձնելը, գիտակցեն զինվորի արժեքը | 3 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ուժեղացնել վերահսկողությունը /պաշտպանության նախարարության կողմից վերահսկողություն, գաղտնի վերահսկողություն լինի, հետևողական լինել զինկոմիսարիատի աշխատակիցների նկատմամբ/ | 5 | 1 | 0 | 2 | 1 | 1 |
| Վերացնեն կաշառակերությունը | 3 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Զորակոչի ընթացքում միանվագ գումար տրամադրվեր պետության կողմից | 1 | 0 | 0 | 0 | 3 | 0 |
| Արդարացի իրականացնել բժշկական հետազոտությունը | 4 | 3 | 1 | 0 | 2 | 0 |
| Զինծառայությունը դառնա պայմանագրային | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Թուլակազմ զորակոչիկներին (թեկուզ և առողջ) ուղարկել այլընտրանքային ծառայության | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Վերանա պարտադիր զինծառայությունը | 3 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Զինծառայողին վճարվող գումարը ավելի բարձր լինի | 2 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Ղարաբաղում ծառայելը չլինի | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բանակում աշխատող բժիշկները լինեն ավելի հոգատար զինվորների նկատմամբ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| Քաշքշուքը քիչ լինի | 0 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| Բարելավել հիգիենիկ պայմանները | 0 | | 0 | | 1 | |
| Հանրապետական բուժզննումը անցկացվի բնակավայրում | 0 | 2 | 1 | 0 | 0 | 0 |
| Բուհն ավարտած զորակոչիկները ծառայեն համապատասխան ուսումնական զորամասերում | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Հանրապետական բուժզննումը անցկացվի տեղում | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| Ճանապարհածախսը բավարար տրամադրեն | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 |
| Չգիտեմ/առաջարկություն չունեմ | 0 | 26 | 0 | 7 | 0 | 15 |
| Վերանա կոռուպցիան | 0 | 6 | 0 | 0 | 0 | 0 |
| Անցկացնել հոգեբանական դասընթացներ զինկոմիսարիատի աշխատակիցների հետ | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Պատասխանատվության ենթարկել սխալ ախտորոշում տված բժիշկներին, որպեսզի մյուսների համար դաս լինի | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| **Ընդամենը** | **343** | **356** | **418** | **362** | **265** | **263** |

Զինկոմիսարիատի աշխատակիցները զորակոչի բարելավման գլխավոր ճանապարհ համարում են իրենց աշխատավարձերի բարձրացումը (1/3-ի կարծիքով) և օրենքների բարելավումը (1/5-ի կարծիքով):

Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և դպրոցների աշխատակիցները զորակոչի բարելավման հիմնական ուղիները համարում են օրենսդրության բարելավումը, զորակոչիկների՝ իրենց իրավունքների մասին իրազեկման մակարդակի բարձրացումը և զինկոմիսարիատների աշխատանքների բարելավումն ու կանոնակարգումը:

***Զորակոչի գործընթացի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների հիման վրա կարելի է եզրահանգել, որ բոլոր խմբերի ներկայացուցիչների կողմից առաջարկվում են հիմնականում նույն ուղիները՝***

- ***օրենքների բարելավում,***
- ***զորակոչիկների իրազեկման մակարդակի բարձրացում իրենց իրավունքների մասին,***
- ***զինկոմիսարիատի աշխատանքների կանոնակարգում և բարելավում:***

Զորակոչի գործընթացի բարելավման հնարավոր ճանապարհներից է նաև զինկոմիսարիատների, դպրոցների, տեղական ինքնակառավարման մարմինների և առողջապահական հաստատությունների միջև համագործակցության իրավական կարգավորումը:

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, համայնքի ղեկավարն ունի զորակոչին աջակցելու պարտադիր լիազորություն: Սակայն ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները չեն ընդգրկվում մարզային զորակոչային հանձնաժողովների կազմում: ՏԻՄ ներկայացուցիչների պատասխանները ցույց են տալիս, որ զորակոչի գործընթացի բարելավումը նրանք տեսնում են ՏԻՄ մարմինների իրավունքների ընդլայնմամբ (մոտ 40 տոկոս), զինկոմիսարիատի հետ կապի կանոնակարգմամբ (1/3-ի կարծիքով):

Դպրոցների ներկայացուցիչները նույնպես կարևորում են զինկոմիսարիատների հետ համագործակցության կանոնակարգումը:

Առողջապահական հիմնարկների աշխատակիցները նախևառաջ կարևորում են բժիշկների իրավունքների շրջանակի ընդլայնումը:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում 2009 թ. գարնանային և աշնանային զորակոչների մոնիթորինգի արդյունքների հիման վրա բացահայտված խնդիրների լուծման նպատակով առաջարկում ենք հետևյալ լուծումները.*

- դպրոցներում առանձնահատուկ ուշադրություն դարձնել «Ռազմական գործ» առարկայի շրջանակներում զորակոչիկների՝ զորակոչի և զինծառայության ընթացքում իրավունքների և պարտականությունների ուսուցմանը,
- ընդունել իրավական նորմատիվ փաստաթղթեր՝ կարգավորելու համար զինկոմիսարիատներ - ՏԻՄ համագործակցությունը զորակոչի գործընթացում,
- զորակոչիկների առողջական վիճակի հետազոտման և զննության շրջանակներում իրականացնել բոլոր համալիր հետազոտությունները՝ անկախ զորակոչիկների կողմից գանգատների առկայությանը,
- բարձրացնել քաղաքացիական բժիշկների դերը զինվորական բժշկական հանձնաժողովներում,
- մշակել և կիրառել զինկոմիսարիատներում զորակոչիկների կցագրման, զորակոչի գործընթացի անցկացման վերաբերյալ պարզ և թափանցիկ կանոնակարգեր՝ դրանց մասին իրազեկելով բնակչությանը,
- բարձրացնել զորակոչի գործընթացի թափանցիկությունը և ապահովել գործընթացի վերաբերյալ հասարակական իրազեկման բարձր մակարդակը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի և երևույթների կանխարգելման միջոց,
- որպես պարտադիր կանոն՝ բոլոր զորակոչիկներին տրամադրել առողջական վիճակի զննության վերաբերյալ բժշկական հանձնաժողովների եզրակացությունները,
- մեծացնել հեռավոր բնակավայրերից զինկոմիսարիատներ ներկայանալու, կենտրոնական հանձնաժողովի կողմից բուժզննություն անցնելու համար տրանսպորտային վճարների փոխհատուցումը, ապահովել գիշերելու և սննդի համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումները,
- ձևավորել զորակոչի գործընթացի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ինստիտուտ՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներին ներգրավելով զորակոչային հանձնաժողովի աշխատանքներում,
- բարձրացնել մինչև 16 տարեկան երիտասարդների առողջական վիճակի նկատմամբ պարբերաբար հսկողությունը:

# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ 2009 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓՈՂ

# ԶԵԿՈՒՅՑ

Փաստաթուղթն ընդգրկում է «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ-ի ՀՀ Արարատի և Կոտայքի մարզերում 2009 թ. աշնանային և գարնանային զորակոչի մոնիթորինգի, ինչպես նաև այդ գործընթացում զորակոչիկների իրավունքների խախտումները, առկա թերությունները վեր հանելու նպատակով զորակոչիկների, նրանց հարազատների, վերջին 2 տարվա ընթացքում բանակից զորացրվածների, տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների, զինկոմիսարիատների, հիվանդանոցների/պոլիկլինիկաների աշխատակիցների շրջանում անցկացված հարցման արդյունքները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաև զորակոչի վերաբերյալ ՀՀ օրենսդրության վերլուծությանը:

Ծրագրի ղեկավար՝ Աննա Մարգարյան
Ծրագրի մասնագետ՝ Համիկ Սինանյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՍ 1.** ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԸ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....................................51

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչ....................................51

Զորակոչից ազատման և տարկետման հիմքերը....................................55

Օրենսդրական կարգավորման խնդիրները և թերկարգավորումը....................................58

Ամփոփիչ եզրահանգումներ....................................60

**ՄԱՍ 2.** ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ 2009 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ....................................62

Զորակոչիկների, նրանց հարազատների անտեղյակությունը զինծառայությունից տարկետման, ազատման իրենց իրավունքների մասին....................................63

Զորակոչիկների առողջական վիճակին առնչվող խնդիրներ....................................66

Զինկոմիսարիատների և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների, պոլիկլինիկաների միջև համագործակցության թերացումներ՝ զորակոչիկների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության ստացման առումով....................................68

Զորակոչի գործընթացի կազմակերպական բնույթի թերացումներ....................................71

Առաջարկություններ....................................71

## ՄԱՍ 1.
## ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԸ.
## ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն ուսումնասիրության նպատակն է վերլուծության միջոցով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթները, որոնք կարգավորում են ՀՀ զինված ուժերի շարքային կազմի համալրման կազմակերպումը:

Ուսումնասիրության առարկան պարտադիր զինվորական ծառայության զորակոչն է և չի ներառում ընդհանուր զինապարտության մյուս բաղադրիչները՝ զորակոչին նախորդող զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը և զորակոչին հաջորդող զինվորական ծառայությունը և պահեստազորում գտնվելը:

Սույն ուսումնասիրությունը նաև անդրադառնում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչը կարգավորող օրենսդրության առանձնահատկությունների հետ կապված՝ զորակոչիկների իրավունքների առկա և հնարավոր խախտումներին:

Հաշվի առնելով քննարկվող բնագավառում վիճագրական տվյալների սահմանափակ ծավալը և քննարկման առարկայի առանձնահատուկ բնույթը՝ ուսումնասիրության տեսական հիմքում հիմնականում օրենսդրական ակտերի և կիրառվող կանոնակարգերի համապատասխան դրույթների վերլուծությունն է:

### I. <u>Պարտադիր զինվորական ծառայության զորակոչ</u>

#### (A) <u>Զորակոչի կազմակերպման և անցկացման օրենսդրական հիմքերը և սկզբունքները</u>

Հաշվի առնելով, որ պարտադիր զինվորական ծառայության զորակոչը ՀՀ զինված ուժերի համալրման առաջնային և հիմնարար աղբյուրն է, դրա կազմակերպաիրավական կարգավորման հարցը առաջնային կարևորություն ունի:

Զորակոչի անցկացման հիմքերը և սկզբունքները հիմնականում սահմանվում են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով: Զորակոչի հետ այս կամ այն կերպ առնչվող դրույթներ պարունակվում են նաև Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայությունը կարգավորող այլ իրավական ակտերով և ենթաօրենսդրական ակտերով, մասնավորապես՝ «Զինվորական ծառայության անցնելու մասին», «Այլընտրանքային ծառայության մասին», «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքները և այլն:

Զորակոչն անցկացվում է համապարտության սկզբունքով. միաժամանակ նախատեսվում են որոշ բացառություններ՝ անձանց առանձին խմբերի համար:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ «Օրենք») 11-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի զորակոչիկները, ինչպես նաև մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում[1] :

Պարտադիր շարքային կազմի զորակոչը և զորացրումը կատարվում են Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ տարին երկու անգամ՝ ապրիլ-հունիս և հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին[2] : Զորակոչի հայտարարումը ազգաբնակչության շրջանում որպես կանոն կատարվում է ռադիոյի, հեռուստատեսության, մամուլի, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության ինտերնետային կայքի միջոցով[3] :

Զորակոչվել կարող են նաև նախկինում ազատազրկման դատապարտված և ազատազրկման վայրում երեք տարուց պակաս ժամկետով պատիժ կրած անձինք, որոնց պար-

---

[1] Բացառություն են կազմում կրթությունը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած անձինք, որոնք պարտադիր զինվորական ծառայության են կանչվում մինչև 27 տարեկան դառնալը: Եթե նշված անձինք ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, ապա պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան ավարտելուն հաջորդող զորակոչի ընթացքում: Տվյալ դրույթը նախատեսված է Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով:

[2] Օրենքի 11-րդ հոդված, մաս 3

[3] URL: http://www.mil.am

տադիր զինվորական ծառայության զորակոչելու կամ պահեստազորում հաշվառելու կարգը սահմանվում է պաշտպանության նախարարի հրամանով[4], որի համաձայն՝ տվյալ անձանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչը կամ պահեստազորում հաշվառելը կատարվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի որոշմամբ՝ պաշտպանության նախարարության իրավաբանական վարչության կողմից կազմված՝ անձին պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու կամ պահեստազորում հաշվառելու նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանքի հիման վրա: Այդ տեղեկանքը կազմելիս հաշվի են առնվում ազատազրկման վայրում պատիժը կրելու ժամկետը, կատարած հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, անձը բնութագրող տվյալները: Նույն կարգը տարածվում է նաև պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատազրկման դատապարտված և ազատազրկման վայրում պատիժը 3 տարուց պակաս ժամկետով կրած անձանց վրա:

Ընդհանուր առմամբ կարելի է նկատել, որ օրենսդրությամբ ամրագրվում են զորակոչի կազմակերպման և անցկացման հիմնական սկզբունքները և կանոնները, իսկ առավել մանրամասն կարգավորումը նախատեսվում է ենթաօրենսդրական ակտերով և ներքին կարգադրություններով :

**(B) Զինվորական ծառայության զորակոչի անցկացումը**

*1. Զինվորական ծառայության զորակոչն անցկացնող մարմինները*

Զորակոչի կազմակերպմանը մասնակցում են ՀՀ պետական կառավարման մի շարք մարմիններ (օրինակ՝ ՀՀ ԿԱ ոստիկանությունը, ՀՀ առողջապահության, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունները, մարզպետները և Երևանի քաղաքապետը), որոնց ՀՀ կառավարության որոշմամբ զորակոչի նախապատրաստման և անցկացման կազմակերպմանն ուղղված համապատասխան հանձնարարականներ են տրվում:

Միևնույն ժամանակ զորակոչի նախապատրաստման և անցկացման պատասխանատու մարմիններն են զինվորական կոմիսարիատները: Դրանք ըստ էության ՀՀ քաղաքացիների և զինված ուժերի միջև հիմնական կապող օղակ են և պատասխանատու են օրենքով նախատեսված կարգով զորակոչի նախապատրաստման և իրականացման համար:

Օրենքի 17-րդ հոդվածը նախատեսում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչն անցկացնելու համար զորակոչային հանձնաժողովների ստեղծումը: Զորակոչային հանձնաժողովը զորակոչի անցկացման կենտրոնական մարմինն է և օժտված է համապատասխան լիազորություններով և իրավասություններով: Զորակոչային հանձնաժողովները ստեղծվում են կառավարության սահմանած կարգով՝ ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների՝ տեղական, և ըստ մարզերի՝ մարզային: Զորակոչային հանձնաժողովների բարձրագույն մարմինը հանրապետական զորակոչային հանձնաժողովն է, որի բովանդակությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում են Օրենքի 18-րդ -հոդվածով: Հանրապետական զորակոչային հանձնաժողովը ևս ստեղծվում է կառավարության կողմից՝ զորակոչի ժամանակաշրջանում տեղական և մարզային զորակոչային հանձնաժողովների աշխատանքը ղեկավարելու և գործունեությունը վերահսկելու համար:

Տեղական զորակոչային հանձնաժողովների կազմը հաստատում է մարզպետը (Երևանի քաղաքապետը)՝ համապատասխան զինվորական կոմիսարի ներկայացմամբ: Իսկ յուրաքանչյուր հանձնաժողովի նախագահ է համարվում տվյալ տարածքի զինվորական կոմիսարը:

Որպես զորակոչի անցկացման առաջնային օղակ՝ տեղական զորակոչային հանձնաժողովները՝

- կազմակերպում են զորակոչիկների բժշկական քննությունը,
- որոշումներ են ընդունում զորակոչի և զորակոչիկներին՝ ըստ զորատեսակների զինված ուժերում և այլ զորքերում զինվորական ծառայության ուղարկելու մասին, որոշում են ընդունում և մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում զո-

[4] ՀՀ պաշտպանության նախարարի 2008 թ. դեկտեմբերի 9-ի N 1540 հրամանը «Ազատազրկման դատապարտված և ազատազրկման վայրում երեք տարուց պակաս ժամկետով պատիժ կրած անձանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու կամ պահեստազորում հաշվառելու կարգը սահմանելու մասին» :

րակոչիկներին ընտանեկան դրության բերումով և ուսումը շարունակելու համար տարկետում տալու վերաբերյալ փաստաթղթերը,

- նախապատրաստում և մարզային զորակոչային հանձնաժողով են ներկայացնում սույն օրենքով չնախատեսված դեպքերում զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով տարկետում տալու վերաբերյալ փաստաթղթերը,

- նախապատրաստում և կենտրոնական բժշկական հանձնաժողով են ներկայացնում զորակոչիկներին բժշկական քննության արդյունքներով տարկետում տալու և պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ փաստաթղթերը՝ եզրակացության համար,

- քննարկում են ռազմատնտեսական հաստատություններ ընդունելու մասին դիմումները և կայացնում որոշում:

Զորակոչային հանձնաժողովների հիերարխիայի հաջորդ օղակը հանդիսացող մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի նախագահ է համարվում համապատասխան մարզպետը (Երևանի քաղաքապետը):

Մարզային զորակոչային հանձնաժողովները՝

- համակարգում են տեղական զորակոչային հանձնաժողովների գործունեությունը,

- հաստատում են զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով և ուսումը շարունակելու համար տարկետում տալու մասին տեղական զորակոչային հանձնաժողովների որոշումները,

- որոշում են ընդունում զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով սույն օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու վերաբերյալ և դա ներկայացնում հանրապետական զորակոչային հանձնաժողով:

Հանրապետական զորակոչային հանձնաժողովը՝ լինելով զորակոչային հանձնաժողովների բարձրագույն և վերահսկող օղակ՝

- քննարկում է տեղական կամ մարզային զորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ գանգատները,

- որոշում է ընդունում առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, բուժման կամ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության կապակցությամբ տարկետում տալու մասին,

- եզրակացություն է տալիս ընտանեկան դրության բերումով, սույն օրենքով չնախատեսված դեպքերում, տարկետում տալու մասին մարզային զորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ և ներկայացնում պաշտպանության նախարարին:

### 2. *Զինվորական ծառայության զորակոչի ընթացքը*

Զորակոչի գործընթացը համալիր գործունեություն է, որն անցկացնելու համար որոշակի նախապատրաստական և կազմակերպչական հաջորդական գործողություններ են իրականացվում: Զորակոչի անցկացմանն ուղղված գործողությունները կարելի է բաժանել հետևյալ ընդհանուր փուլերի՝ զինվորական հաշվառում, ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից անցկացվող բժշկական քննություն և հետազոտում, զորակոչիկների բաշխում:

Թեև նշված գործողությունները սերտորեն փոխկապակցված են և լրացնում են միմյանց, այնուամենայնիվ, սույն զեկույցի շրջանակներում զինվորական հաշվառմանը չենք անդրադառնա, իսկ ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից անցկացվող բժշկական քննությունը և հետազոտումը կդիտարկվի առավելապես հենց զորակոչի անցկացման ընթացքում իրականացվող գործողությունների մասով:

Նախ յուրաքանչյուր զորակոչիկի ուղարկվում է ծանուցում՝ նշված ժամկետում զինվորական հաշվառման վայրի զինկոմիսարիատ ներկայանալու և զինծառայության զորակոչվելու վերաբերյալ: Նման ծանուցում ստացած բոլոր զորակոչիկները պարտավոր են ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք

հաշվառված են[5] : Ինչպես արդեն նշվեց, զինկոմիսարիատները կազմակերպում և կատարում են զորակոչի անցկացմանն ուղղված հիմնական գործողությունները:

*(i) Ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից բժշկական քննություն և հետազոտում անցկացնելը:*

Բժշկական քննությունը պարտադիր անցկացվում է ոչ միայն զորակոչի, այլև զինապարտների կցագրման, զինվորական ծառայության անցնելու և վարժական հավաքի կանչվելու ժամանակ:

Բժշկական քննությունը անցկացվում է զինվորական կոմիսարիատների հանձնաժողովների բժիշկ մասնագետների կողմից: Այն դեպքերում, երբ տեղում՝ զինվորական կոմիսարիատի պայմաններում, զինվորական ծառայության համար քաղաքացու պիտանիությունը պարզել հնարավոր չէ, տեղական զորակոչային հանձնաժողովը պարտավոր է տվյալ քաղաքացուն ուղեգրել բժշկական հետազոտման՝ համապատասխան մասնագիտացված բժշկական հաստատություն: Նման հաստատությունների ցանկը նախապես հաստատվում է ՀՀ կառավարության որոշմամբ[6] :

*(ii) Զորակոչիկների բաշխումը:*

Զորակոչիկների բաշխումը ըստ զինվորական ստորաբաժանումների զորակոչի ամփոփիչ փուլերից է: Բաշխմանը հետևում է զորակոչիկների տեղակայումը համապատասխան ստորաբաժանումներում, որտեղ նրանք պետք է անցնեն զինվորական ծառայությունը:

Բաշխումն իրականացվում է հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից: Բաշխման իրականացման սկզբունքները և կանոնները ուղղակիորեն նախատեսված չեն: Ընդհանուր առմամբ զորակոչիկների բաշխումն իրականացվում է առանց հստակ որոշված նախապայմանների: Օրինակ՝ որպես ընդհանուր կանոն՝ զորակոչիկները զինվորական ծառայությունն անցնում են իրենց հաշվառման (իսկ հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրից առնվազն 100 կմ հեռավորության վրա գտնվող զորամասերում:

Այնուամենայնիվ, բաշխումն իրականացնելիս հաշվի են առնվում մի շարք չափանիշներ՝ զորակոչիկների ընտանեկան և սոցիալական դրությունը և այլ հանգամանքներ: Մասնավորապես՝ Օրենքը որոշ առանձնահատկություններ է նախատեսում որոշակի խմբերի զորակոչիկներին բաշխելիս: Այսպես՝ հետևյալ չափանիշներին համապատասխանող զորակոչիկներն օգտվում են բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնությունից.

ա) միայնակ և տարիքային կենսաթոշակի անցած կամ երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակը,

բ) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության, զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր) ունեցող զորակոչիկները,

գ) ամուսնացած և մեկ երեխա ունեցող զորակոչիկները,

դ) երկկողմ և միակողմ ծնողազուրկ զորակոչիկները,

ե) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ այլ զորակոչիկներ[7] :

Բացի այդ, Օրենքը նախատեսում է, որ զինված ուժեր կամ այլ զորքեր միաժամանակ զորակոչվող եղբայրները, իրենց ցանկությամբ, ծառայության են զորակոչվում միևնույն զորամաս[8] :

Այսպիսով, բաշխման գործընթացը հիմնականում հստակ կարգավորման չի ենթարկվում: Նման իրավիճակի հնարավոր և փաստացի հետևանքները քննարկվում են ստորև:

---

[5] Օրենքի 11-րդ հոդված, մաս 6 :
[6] ՀՀ կառավարության որոշում թիվ 846-Ն, 2002 թ. հուլիսի 13:
[7] Օրենքի 11-րդ հոդված, մաս 7:
[8] Օրենքի 11-րդ հոդված, մաս 8:

## II. Զորակոչից ազատման և տարկետման հիմքերը

### 3.1. Զորակոչից ազատման հիմքերը

Զորակոչից ազատման հիմքերի մասին խոսելիս անհրաժեշտ է տարբերակել ազատման պատճառները: Զորակոչի ենթակա չեն ինչպես այն անձինք, ովքեր օրենքով սահմանված կարգով ազատվում են պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պարտականությունից, այնպես էլ անձինք, ովքեր թեև զինապարտ են՝ ազատված չեն զինվորական ծառայություն անցնելու պարտականությունից, սակայն ենթակա չեն ընթացիկ զորակոչի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքը դրույթներ է պարունակում վերոնշյալ թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքերի վերաբերյալ:

Այսպես՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատման հիմքերը նախատեսված են Օրենքի 12-րդ հոդվածում: Համաձայն այս հոդվածի՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է՝

*«ա) հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվառումից.*

*բ) այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել) է ՀՀ պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է.*

*գ) քաղաքացին՝ կառավարության որոշմամբ.*

*դ) մինչև ՀՀ քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին.*

*ե) գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ»:*

Օրենքի 23-րդ հոդվածը նախատեսում է ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների՝ ժամկետից շուտ արձակման հնարավորությունը, եթե նրանք զինվորական ծառայության ընթացքում կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից հետագա զինվորական ծառայության համար ճանաչվում են ոչ պիտանի՝ առողջական վիճակի պատճառով:

Իսկ Օրենքի 11-րդ հոդվածը նախատեսում է այն դեպքերը, երբ զինապարտ քաղաքացիները, այնուամենայնիվ, ենթակա չեն պարտադիր զինվորական ծառայության զորակոչի: Մասնավորապես՝ զորակոչի ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն), կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատազրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար և ազատազրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս, ինչպես նաև, եթե կատարել են ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ գլխավոր դատախազի համատեղ հրամանով հաստատված ցանկում նշված հանցագործություն[9] : Ընդ որում, այս ցանկը ուսումնասիրելիս կարելի է եզրակացնել, որ հաշվի է առնվել ինչպես նշված որոշակի հանցավոր արարքների սոցիալական և բարոյական նշանակությունը և դրանք կատարած անձանց՝ զինված ուժերում հետագա ծառայության նպատակահարմարությունը, այնպես էլ զինված ուժերում նույն հանցավոր արարքը կատարելու օբյեկտիվ հնարավորությունը (այսպես՝ ցանկում ընդգրկված է սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու հանցագործությունը, սակայն բացակայում է բռնաբարության հոդվածը, չնայած որ այս երկուսի հասարակական վտանգավորության աստիճանը գրեթե նույնական է):

---

[9] ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ գլխավոր դատախազի 15.04.2008թ. համատեղ հրաման թիվ 477: Հետաքրքիր է նշել այդ ցանկում ընդգրկված հանցագործությունները: Դրանք ներառում են՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (ՀՀ քր. օր, հ. 139), անառակաբարո գործողությունները (ՀՀ քր. օր, հ. 142), թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր արտադրելու, ձեռք բերելու, պահելու, հաշվառելու ... կանոնները խախտելը (ՀՀ քր. օր, հ. 266), թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի գործածմանը հակելը կամ ներգրավելը (ՀՀ քր. օր., հ. 272), այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից խուսափելը (ՀՀ քր. օր., հ. $327^2$ և $327^3$), ազատազրկման ձևով պատիժը կելուց հետո պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը շարունակելուց խուսափելը կամ հրաժարվելը (ՀՀ քր. օր., հ. $327^5$), դասալքությունը (ՀՀ քր. օր., հ. 362), և իրեն անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթղթերի ... միջոցով կամ այլ ապօրինի եղանակով զին. ծառայությունից խուսափելը... (ՀՀ քր. օր., հ. 363-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

Պետք է նկատել, որ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու օրենքով նախատեսված ընդհանուր պայմանների (առողջական, սոցիալական, գիտակրթական, ընտանեկան) առանձնահատկությունները պայմանավորված են երկրում առկա քաղաքական-իրավական ռեժիմով, երկրի պաշտպանության գործընթացի ապահովման հիմնախնդիրներով և նույնիսկ այնպիսի գործոններով, ինչպիսին են ազգային ավանդույթները, սովորույթները և այլն:

3.2. Զորակոչից տարկետման հիմքերը

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքով նախատեսված են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու դեպքերը՝ պայմանավորված ընտանեկան, առողջական, կրթական և այլ կարգավիճակային հանգամանքներով:

Զորակոչից տարկետում տալու դեպքում զորակոչիկը հնարավորություն է ստանում հետաձգել զինվորական ծառայություն անցնելը որոշակի ժամկետով՝ բուժման, ուսումը անընդհատ շարունակելու, իր խնամքի տակ ունեցած անձանց խնամելու և այլ նպատակներով:

Պարտադիր զինվորական ծառայության տարկետումը կարող է տրվել 6 ամսով, 1 կամ 3 տարով՝ կախված դրա տրամադրման հիմքերից: Այն կարող է երկարաձգվել մինչև անձի ծննդյան 27 տարին լրանալը, և շատ հաճախ այդ անձինք պարտադիր զինծառայության են կանչվում մինչև 27 տարեկան դառնալը, բացառությամբ պետական պատվերով պետական գիտակրթական համակարգի, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների կամ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատությունների ասպիրանտուրայում սովորողների, ինչպես նաև դատական դպրոցի ունկնդիրների, որոնց տարկետում տրվում է մինչև ուսման ավարտը: Եթե նշված անձինք ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, ապա պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան ավարտելուն հաջորդող զորակոչի ընթացքում:

3.2.1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից *ընտանեկան դրության բերումով* տարկետման հիմքերը սահմանված են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով: Այսպես՝ զորակոչից տարկետում ստանալու ընտանեկան դրության բավարար հիմքեր են համարվում՝

ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր ունենալը, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ: Ըստ որում՝ անաշխատունակ են համարվում ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած, առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հանդիսացող կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը:

բ) առանց մոր մեծացող երեխա ունենալը.

գ) երկու և ավելի երեխա ունենալը, ինչպես նաև երկրորդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամսյա հղիության վիճակում կին ունենալը.

դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին ունենալը.

ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր ունենալը, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ:

Բացի նշված հիմքերից՝ նույն հոդվածը 2-րդ մասով տարկետման իրավունք է տալիս մինչև զորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի որդեգրված եղած, կամ առնվազն 5 տարի առաջ ամուսնալուծված ծնողների զավակ-զորակոչիկը, եթե առկա է վերը նշված նախատեսված պայմաններից որևէ մեկը:

Նշված դեպքերում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից զորակոչիկին տարկետում տրվում է մինչև նրա 27 տարեկան դառնալը: Եթե մինչև 27 տարեկան դառնալը նա չի կորցնում տարկետում ստանալու իրավունքը, ապա խաղաղ ժամանակ ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվում պահեստազորում: Միաժամանակ, համաձայն Օրենքի 23-րդ հոդվածի՝ եթե պահեստ արձակված անձանց ընտանեկան

դրության բերումով տարկետում ստանալու հիմքերը վերացել են, և նրանց չծառայած ժամկետը գերազանցում է 16 ամիսը, նրանք կարող են ժամկետային զինծառայության զորակոչվել մինչև 27 տարեկան դառնալը[10] :

Ի լրումն Օրենքով վերը թվարկված դեպքերի՝ նույն հոդվածը սահմանում է նաև, որ Օրենքով չնախատեսված դեպքերում ընտանեկան դրության բերումով տարկետում տալու մասին որոշումն ընդունում է պաշտպանության նախարարը՝ հանրապետական զորակոչային հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում[11]:

3.2.2. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից *ուսումը շարունակելու համար* տարկետման հիմքերը սահմանված են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով: Տվյալ հիմքով զորակոչից տարկետումը հիմնականում տրվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին, ինչպես նաև պետական, միջպետական պատվերով, ասպիրանտուրայում սովորողներին, դատական դպրոցի ունկնդիրներին[12]:

Կրթությունը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած անձինք պարտադիր զինվորական ծառայության են կանչվում մինչև 27 տարեկան դառնալը, բացառությամբ պետական պատվերով պետական գիտակրթական համակարգի, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների ասպիրանտուրայում սովորողների, ինչպես նաև դատական դպրոցի ունկնդիրների, որոնց տարկետում տրվում է մինչև ուսման ավարտը: Եթե նշված անձինք ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, ապա պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան ավարտելուն հաջորդող զորակոչի ընթացքում:

3.2.3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից *առողջական վիճակի պատճառով* տարկետում ստանալու հիմքերը սահմանված են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով:

Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել 3 անգամ՝ մինչև 1 տարի ժամանակով, իսկ զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի զորակոչիկներին՝ 1 անգամ՝ 3 տարի ժամանակով: Ասպիրանտուրայում կամ դատական դպրոցում սովորելու կապակցությամբ տարկետում ստացած և 27 տարեկանից բարձր տարիքում ուսումն ավարտած զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով բուժման նպատակով տարկետում կարող է տրվել 1 անգամ՝ մինչև 6 ամիս ժամկետով, իսկ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելու դեպքում՝ մինչև 1 տարի ժամկետով: Բոլոր նշված դեպքերում տարկետման առավելագույն թույլատրելի ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը բժշկական քննության արդյունքներով ճանաչվում է. կա՛մ ա) պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է զինվորական ծառայության, կա՛մ բ) խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստազորում, կա՛մ գ) զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից:

Տարկետումներ տալու մասին որոշումներն ընդունում է հանրապետական զորակոչային հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծված կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Ըստ որում, վերը նշված հիմքերով պահեստազորում հաշվառված քաղաքացիները ենթակա են բժշկական վերափորձաքննության՝ 5 տարին մեկ անգամ: Մինչև 27 տարին լրանալը բժշկական վերափորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի ճանաչված քաղաքացիները ենթակա են պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով[13]:

3.2.4. «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը նախատեսում է նաև պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալը *այլ հիմքե-*

---

[10] «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 23:
[11] «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 13:
[12] «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 14:
[13] «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 15:

*րով*՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին, իրենց լիազորությունների ողջ ժամկետում, ինչպես նաև՝ առանձին դեպքերում քաղաքացիների կատեգորիաներին և առանձին քաղաքացիներին՝ կառավարության որոշմամբ[14]:

## III. Օրենսդրական կարգավորման խնդիրները և թերկարգավորումը

Այսպիսով, վերը ներկայացված՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի օրենսդրական կարգավորման նորմերն ուսումնասիրելիս, ինչպես նաև հաշվի առնելով գործնականում զորակոչի ընթացքում առավել հաճախակի թույլ տրվող իրավախախտումների դիտարկումները, կարելի է որոշակի պատկերացում կազմել զորակոչը կարգավորող օրենսդրության հիմնական թերությունների մասին:

Հիմնականում կարելի է առանձնացնել զորակոչի ընթացքում իրավախախտումներ առաջացնող կամ դրանք հնարավոր դարձնող հետևյալ օրենսդրական թերությունները և իրավիճակները.

(i) Ինչպես «Զինապարտության մասին», այնպես էլ «Զորահավաքի նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքները նախատեսում են, որ զորակոչի մասին զորակոչիկը տեղեկացվում է ծանուցման միջոցով: Նախատեսվում է նաև, որ զորակոչիկը ծանուցագրում նշված ժամկետներում պարտավոր է ներկայանալ զինկոմիսարիատ: Այնուամենայնիվ, զորակոչի մասին օրենսդրությունը չի նախատեսում զորակոչիկների ծանուցման ձևը՝ միաժամանակ պատասխանատվություն նախատեսելով ծանուցագրով չներկայանալու համար:

Մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև պատշաճ ծանուցման պահանջների առումով (ինչպես նախատեսված է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքով) իրավախախտում կարելի է համարել բանավոր կերպով՝ հիմնականում հեռախոսազանգով, կատարվող նախնական ծանուցումը: Այսպես՝ զորակոչիկները, իսկ հաճախ նրանց ընտանիքի այլ անդամները տեղեկացվում են ներկայանալու պարտավորության մասին: Միևնույն ժամանակ անձը զգուշացվում է զորակոչիկի չներկայանալու պատասխանատվության մասին, ինչը կարելի է համարել մոլորեցում, քանի որ հեռախոսով հայտնված ծանուցման/տեղեկացման արդյունքում որևէ իրավական պատասխանատվություն չի նախատեսվում: Պատասխանատվությունը նախատեսվում է միայն զորակոչիկին հանձնված գրավոր ծանուցագրի պահանջները չկատարելու համար:

(ii) «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը նախատեսում է, որ տեղական և մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ[15]:

Բնականաբար, կասկածի տակ կարելի է դնել զորակոչային հանձնաժողովների որոշումների ընդունման կարգի անաչառությունը՝ հաշվի առնելով, որ հանձնաժողովների բոլոր անդամները զինծառայողներ են, իսկ զինված ուժերի համակարգը պաշտոնապես ուղղահայաց հիերարխիկ համակարգ է, որտեղ ավելի ցածր կոչում ունեցող զինծառայողները պարտավոր են ենթարկվել ավելի բարձր կոչում ունեցողներին: Իհարկե, խոսքը օրինական հրամանների մասին է, սակայն չի կարելի բացառել, իսկ դիտարկումների արդյունքում նույնիսկ կարելի է ենթադրել, որ ավելի բարձր կոչում ունեցող և վերադաս պաշտոն զբաղեցնող սպաների և այլ զինծառայողների կարծիքը և ոչ պաշտոնական հրամանները մեծապես ազդում են ստորադաս կազմի վրա:

(iii) Ինչպես արդեն նշվել է, ՀՀ օրենսդրությունը զինված ուժերի զորատեսակներում զորակոչիկների բաշխման իրականացման հստակ մեխանիզմները չի նախատեսում: Թեև զորակոչիկների առանձին խմբերի բաշխման որոշակի կանոններ են սահմանված, այնուամենայնիվ, Օրենքով նախատեսվող սահմանումների բովանդակությունը հիմնականում պարզաբանված չէ:

---

[14] «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 16:
[15] Օրենք, հոդված 17:

Այսպես՝ Օրենքի 11-րդ հոդվածը նախատեսում է, որ զինված ուժեր միաժամանակ զորակոչվող եղբայրները, իրենց ցանկությամբ, ծառայության են զորակոչվում միևնույն զորամաս: Միևնույն ժամանակ պարզ չէ, թե ինչպես կարելի է մեկնաբանել «միաժամանակյա զորակոչը» «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն իրավական ակտում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Այսինքն՝ տվյալ դեպքում կարելի է ենթադրել, որ «միաժամանակյա զորակոչը» միևնույն զորակոչին է վերաբերում և չի կարող ընդգրկել իրար հաջորդող զորակոչերը: Այնուամենայնիվ, դիտարկումների արդյունքում պարզվել է, որ զորակոչի հանձնաժողովները որոշ դեպքերում տարբեր զորակոչերի ընթացքում զորակոչվող եղբայրներին ծառայության են ուղարկում միևնույն զորամաս՝ հղում կատարելով Օրենքի վերոնշյալ դրույթով տրամադրվող իրավունքին, միևնույն ժամանակ նման «արտոնություն» տրամադրելով միայն սահմանամերձ զորամասերում ծառայող եղբայրներին:

Մանրամասն կարգավորված չեն նաև միայնակ և տարիքային կենսաթոշակի անցած կամ երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակ, ամուսնացած և մեկ երեխա ունեցող զորակոչիկների կապակցությամբ Օրենքով նախատեսված արտոնությունների[16] կիրարկման մեխանիզմները: Օրինակ՝ ՀՀ օրենսդրությունը սահմանում է, որ զորակոչից ազատվում են երկրորդ երեխայով 6-ամսյա հղիությամբ կին ունեցող զորակոչիկները: Սակայն չի պարզաբանվում, թե արդյոք 6-ամսյա հղիությունը պետք է գրանցված լինի զորակոչի հայտարարման պահին, թե զորակոչիկի բաշխման: Իսկ հաշվի առնելով, որ զորակոչը տևական գործընթաց է, քիչ չեն դեպքերը, երբ 6-ամսյա հղիությունը գրանցվում է զորակոչի վերջին շաբաթների ընթացքում կամ զորակոչիկի բաշխման ժամանակ: Վերջին դեպքում զորակոչիկներին հիմնականում զորակոչում են զինված ծառայության՝ թեկուզև կարճատև ժամանակահատվածով: Այդպիսի իրավիճակը կասկածի տակ է դնում նման զորակոչիկների զորակոչման նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով վերջիններիս համար կատարվող հանդերձավորման, սննդի և զինվորական պատրաստության ծախսերը և շուտով զորացրվելու հեռանկարը:

Բացի այդ, Օրենքի 11-րդ հոդվածի գ/ ենթակետը բնակության ծառայության մոտ զորամասում ծառայելու արտոնություն է սահմանում «ամուսնացած և մեկ երեխա ունեցող զորակոչիկների»: Հոդվածի տառացի մեկնաբանությունը նշանակում է, որ զորակոչի կամ զինվորական ծառայություն անցնելու ընթացքում ամուսնալուծվելու դեպքում այս արտոնության գործողությունը դադարում է: Սակայն օրենսդրությունը չի պարզաբանում այս, ինչպես նաև այլ արտոնությունների օրենսդրական հիմքերի դադարման դեպքում ձեռնարկվելիք գործողությունների կարգը: Նման պայմաններում, իհարկե, մեծանում է սուբյեկտիվիզմի դրսևորման և զորակոչիկների իրավունքների խախտման և պաշտոնեական դիրքի չարաշահման ռիսկը:

(iv) Զինվորական ծառայությունից ազատելու մասին խոսելիս հատկանշական է անդրադառնալ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի գ/ ենթակետով նախատեսված ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու հանգամանքին: Այս դրույթից պարզ չէ, թե ինչ չափանիշներով է առաջնորդվում ՀՀ կառավարությունը պարտադիր զինծառայությունից ազատելու վերաբերյալ որոշում կայացնելիս: Օրենքի այս նորմը չի պարունակում կոնկրետ չափանիշներ կամ հղում կոնկրետ չափանիշներ պարունակող որևէ իրավական ակտի, որոնց շրջանակներում պետք է գործի կառավարությունը՝ պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացիներին ազատելու որոշում կայացնելիս: ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինծառայությունից ազատելը համարվում է ոչ թե զինծառայությունից ազատման նյութաիրավական հիմք, այլ ընդամենը ընթացակարգային նորմ, որի իրագործումն անշուշտ պահանջում է կոնկրետ հիմնավորված նյութաիրավական հիմքեր:

(v) Համաձայն «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի՝ տեղական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի որոշման վերաբերյալ զորակոչիկի կամ այլ անձանց գանգատը, մինչև դրա վերանայումը, չի կասեցնում որոշման

[16] Օրենքի 11-րդ հոդված, մաս 7:

կատարումը: Գանգատների վերաբերյալ որոշումները հանրապետական զորակոչային հանձնաժողովն ընդունում է մեկամսյա ժամկետում՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Հանրապետական զորակոչային հանձնաժողովի որոշումները, դրանց ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում, կարող են գանգատարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով[17]:

Սույն դրույթը մասնավորապես խնդրահարույց է զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ որոշման գանգատարկման դեպքում, քանի որ մինչև վերջնական որոշում ընդունելը կամ դատական գանգատարկման քննարկումը զորակոչիկը կարող է ուղարկվել զինվորական ծառայության, որի ընթացքում հնարավոր է նրա առողջական վիճակի վատթարացում: Հատկապես նման իրավիճակները վտանգավոր են սրտանոթային, սուր ալերգիկ, դիաբետիկ և մի շարք այլ հիվանդությունների դեպքում, որոնց հանկարծահաս և սուր բարդացումները կարող են հանգեցնել մահվան:

(vi) Թեև սույն ուսումնասիրությունը վերաբերում է շարքային անձնակազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչին, և ասպիրանտուրա ավարտած կամ գիտական աստիճան ունեցող <u>պահեստազորի սպաների պարտադիր զինվորական ծառայության կանչելու հարցը</u> մանրամասն չի քննարկվել, այնուամենայնիվ, արդարության համար պետք է նշել, որ այս խնդիրը առավել հակասական կարգավորման է ենթարկվում և լայնածավալ խախտումների պատճառ է հանդիսանում:

Նախ և առաջ պետք է նշել, որ նման անձինք, հատկապես բժիշկները, զինվորական ծառայության են զորակոչվում որպես սպաներ, և նրանց նկատմամբ հենց զորակոչի սկզբից կիրառվում է սպաների նկատմամբ կիրառվող օրենսդրությունը, թեև ըստ էության նրանք սպայի կոչում են ձեռք բերում միայն զինվորական ծառայության անցնելուց հետո: Բացի այդ, պարզ չէ, թե ինչպիսի չափանիշներով և ինչպես է որոշվում յուրաքանչյուր տարի զորակոչվող բժիշկ-սպաների քանակը կամ մասնագիտական ուղղվածությունը:

Կարևորագույն խնդիր է նաև այն հանգամանքը, որ համաձայն Օրենքի՝ այս խմբի անձանց զորակոչը կարգավորվում է ՀՀ կառավարության որոշմամբ: Պաշտպանության նախարարը այս առումով գրեթե անսահմանափակ լիազորություններ է ստանում, որը մանրամասն կարգավորման չի ենթարկվում: Լիազորությունների նման անհստակ բաժանման արդյունք է վերջերս գրանցված մի դեպք, երբ 15 հոգուց բաղկացած «բժիշկ-սպաների» խումբը զորակոչվել է զինվորական ծառայության, սակայն մեկ տարի ծառայություն անցնելուց հետո՝ նոր ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով այս անձանց զորակոչելու մասին նախորդ նախարարի հրամանը չեղյալ է հայտարարվել, իսկ սպաները արձակվել են զինվորական ծառայությունից: Սակայն հաջորդ զորակոչի ընթացքում՝ կրկին փոփոխված պաշտպանության նախարարի հրամանով նշված խմբից մի քանի բժիշկներ վերստին զորակոչվել են զինվորական ծառայության, ընդ որում՝ երկու տարով: Այսպիսով անտեսվել է նրանց մեկ տարվա զինվորական ծառայությունը այն հիմնավորմամբ, որ առաջին հրամանը չեղյալ հայտարարելով՝ չեղյալ են հայտարարվել նաև դրա հետևանքները:

Ներկայումս սույն գործի կապակցությամբ նախապատրաստվում է վարչական բողոք՝ վերջին հրամանը վիճարկելու համար: Բողոքարկման ընթացքը և արդյունքները դիտարկվելու են:

## IV. <u>Ամփոփիչ եզրահանգումներ</u>

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի օրենսդրական կարգավորման աստիճանը ընդհանուր առմամբ դրական կարելի է համարել, քանի որ այն այս կամ այն մանրամասնությամբ անդրադառնում է զորակոչի կազմակերպման և անցկացման գրեթե բոլոր հարցերին: Այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ հարցերի կապակցությամբ առավել մանրամասն կարգավորման անհրաժեշտություն կա, ինչը թույլ կտա սահմանափակել պաշտոնատար անձանց ազատ հայեցողության շրջանակները, ուստի և նպաստել քաղաքացիների իրավունքների պաշտպանվածությանը՝ կանխելով հնարավոր իրավախախտումները:

---

[17] Օրենք, հոդված 18:

Նման խախտումների հիմնական պատճառը զորակոչի համար պատասխանատու պետական մարմինների կողմից օրենսդրական նորմերի անտեսումն է, իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարումը, ինչպես նաև համապատասխան պաշտոնատար անձանց հայեցողության սահմանների ընդարձակ բնույթը:

Իհարկե, նման խախտումները հնարավոր են նույնիսկ ամենաժողովրդական պետական կարգի պայմաններում, սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտ են այդ իրավախախտումների վերացման և անձի ու քաղաքացու իրավունքների պաշտպանության պետական և հասարակական երաշխիքներ, ինչպես նաև բողոքարկման համապատասխան մեխանիզմներ:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար կարևոր նշանակություն ունի նաև հասարակական վերահսկողության մեխանիզմների առկայությունը: Հասարակական վերահսկողությունը կարող է իրականացվել հասարակական կազմակերպությունների միջոցով, և պետք է նշել, որ այդ ինստիտուտը ներկայումս որոշ չափով գործում է նաև Հայաստանի Հանրապետությունում՝ չնայած որոշ դժվարությունների:

Այս առումով հիմնավոր չէ նաև տարածված այն պնդումը, թե քանի որ զինված ուժերի կազմակերպումը երկրի պաշտպանողունակության և սահմանների անվտանգության ապահովման գրավականն է, ապա այդ ոլորտի առանձնահատկությունը և հույժ կարևորությունը պայմանավորում են դրա թափանցիկության սահմանափակումը:

Այսպես՝ «Քաղաքացիական ծառայության մասին» և «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքների համաձայն՝ զինվորական ծառայությունը (հետևաբար նաև զինվորական կոմիսարիատների գործունեությունը) պետական ծառայության հատուկ տարատեսակ է: Այն ներառում է պետական հատուկ ծառայությանը բնորոշ համընդհանուր հատկանիշները[18]: Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը: Նույն օրենքը սահմանում է քաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքները, որոնց շարքում են նաև «քաղաքացիական ծառայության հրապարակայնությունը» և «քաղաքացիական ծառայողների գործունեության վերահսկելիությունը և հաշվետու լինելը»[19]: Հետևաբար, զինվորական ծառայության կազմակերպման հետ կապված գործունեությունը, այդ թվում՝ զինվորական կոմիսարիատների գործունեությունը և զորակոչի անցկացումը՝ ՀՀ օրենսդրության համաձայն գաղտնի չհամարվող ոլորտների մասով, պետք է թափանցիկ լինի հասարակության համար:

[18] «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, 2001թ. դեկտեմբերի 4, հոդված 1 և «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենք, հոդված 1:
[19] «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, 2001թ. դեկտեմբերի 4, հոդված 5:

## ՄԱՍ 2.
## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ 2009 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի հետ մշակված ծրագրի համաձայն՝ «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը 2009 թ. փետրվարի 1-ից 2009 թ. դեկտեմբերի 31-ը ՀՀ Արարատի և Կոտայքի մարզերում իրականացրել է մոնիթորինգ՝ զորակոչի ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտման փաստերի արձանագրման և հիշյալ գործընթացում առկա թերությունների վերհանման ուղղությամբ :

Մոնիթորինգի գործընթացը ներառում էր 4 հիմնական բաղադրիչ՝

ա/ զորակոչի ընթացքում զորակոչիկների, նրանց հարազատների դիմում/ գանգատների գրանցում,

բ/ դիտարկումների/մոնիթորինգի իրականացում զինկոմիսարիատներում,

գ/ նախապես մշակված հարցաթերթիկների գործածմամբ, պատահական ընտրանքի սկզբունքով հարցումների իրականացում զորակոչիկների, նրանց հարազատների, վերջին 2 տարվա ընթացքում բանակից զորացրվածների շրջանում,

դ/ հարցազրույցների անցկացում տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների, զինկոմիսարիատների, պոլիկլինիկաների/ հիվանդանոցների աշխատակիցների հետ՝ զորակոչի գործընթացում տեղ գտած թերությունները և դրանց պատճառները բացահայտելու նպատակով:

Նշված ուսումնասիրությունն իրականացվել է Արարատի մարզի Արտաշատ, Վեդի, Արարատ, Մասիս, Կոտայքի մարզի Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Բյուրեղավան, Ծաղկաձոր, Եղվարդ, Նոր-Հաճն քաղաքներում:

ՀԿ-ի առջև ծառացած առաջնահերթ խնդիրներից մեկը բնակչության իրազեկումն էր ԵԱՀԿ-ի կողմից առաջ քաշված նախաձեռնության շրջանակներում իրականացվող ծրագրի մասին, ինչն էլ կյանքի կոչվեց հիշյալ քաղաքների բնակչության շրջանում ծրագիրը լուսաբանող, ինչպես նաև զինծառայությունից տարկետման, ազատման հիմքերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող հայտարարություններ տարածելով: Արդյունքում՝ գարնանային զորակոչի ընթացքում «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ դիմեցին 96, աշնանային զորակոչի ընթացքում՝ 74 անձինք՝ պարզաբանում կամ անմիջական իրավական օգնություն խնդրելով զորակոչի վերաբերյալ իրենց հուզող հիմնախնդիրների վերաբերյալ:

Զինկոմիսարիատներում անցկացված դիտարկումները, ինչպես նաև 500 զորակոչիկների, 574 զորակոչիկների հարազատների, վերջին 2 տարվա ընթացքում բանակից զորացրված 550 անձանց շրջանում կատարված հարցման արդյունքները, զինկոմիսարիատների, տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների, պոլիկլինիկաների/հիվանդանոցների աշխատակիցների շրջանում իրականացված հարցազրույցները հնարավորություն ընձեռեցին վեր հանելու այն խախտումները, թերություններն ու բացթողումները, որոնք տեղ էին գտել 2009 թ. գարնանային և աշնանային զորակոչերի ընթացքում Կոտայքի և Արարատի մարզերում:

Հիշյալ բացթողումները, թերությունները պայմանականորեն կարելի է դասակարգել 5 խմբի՝

ա/ զորակոչիկների, նրանց հարազատների անտեղյակություն զինծառայությունից տարկետման, ազատման իրենց իրավունքների մասին,

բ/ զորակոչիկների առողջական վիճակին առնչվող խնդիրներ,

գ/ զինկոմիսարիատների և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների, պոլիկլինիկաների միջև համագործակցության թերացումներ՝ զորակոչիկների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության ստացման առումով,

դ/ զորակոչի գործընթացի կազմակերպական բնույթի թերացումներ,

ե/ այլ հիմնախնդիրներ:

### ա/ Զորակոչիկների, նրանց հարազատների անտեղյակությունը զինծառայությունից տարկետման, ազատման իրենց իրավունքների մասին

Կարևորագույն խնդիրը, որը նկատվեց զորակոչի գործընթացում, զորակոչիկների, նրանց հարազատների անտեղյակությունն է իրենց իրավունքների մասին:

Հարցման ենթարկված զորակոչիկների 39.1 %-ի (Կոտայքի մարզում հարցման մեջ ընդգրկված զորակոչվածների 52.4 %-ի, Արարատի մարզում հարցման մասնակիցների 32.6%-ի) պնդմամբ իրենք տեղյակ էին զորակոչի գործընթացում իրենց իրավունքների, այդ թվում՝ իրենց բնակավայրին մոտ ծառայելու, զորակոչից տարկետման և զինծառայությունից ազատման իրավունքների մասին: Այնուհանդերձ, այդ ցուցանիշները էապես տատանվում էին, երբ զորակոչիկներին առաջարկվում էր հստակեցնել իրենց պատասխանները ըստ օրենսդրորեն ամրագրում ստացած տարկետման կամ բնակավայրին մոտ ծառայելու հիմքերի:

**Գրաֆիկ 1. Բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի մասին տեղեկացվածության մակարդակը**



**Գրաֆիկ 2. Զորակոչից տարկետման իրավունքի մասին տեղեկացվածության մակարդակը**




Զորակոչի գործընթացում իրենց իրավունքների մասին տեղեկացվածության ավելի բարձր մակարդակ դրսևորած զորակոչիկների 24.6 %-ի պնդմամբ հիշյալ տեղեկություններն իրենք ստացել էին օրենքները կարդալով, 3.1 %-ը տեղեկացել էր զանգվածային լրատվամիջոցներից, 15.4 %-ին տեղեկացրել էին ընկերները/ ծանոթները, իսկ մնացած 56.9 %-ը նշել էր, որ տեղեկությունները ստացել է դպրոցում՝ դասերից մեկի ժամանակ:

Դպրոցներում զինղեկների, դասղեկների, ուսմասվարների, տնօրենների, ուսուցիչների հետ հարզացրույցներ անցկացնելիս պարզ դարձավ, որ դպրոցների մեծ մասում բարձր դասարանների աշակերտներին «Զինպատրաստություն» դասընթացի շրջանակներում բացատրվում են զորակոչի ժամանակ վերջիններիս իրավունքները: Սակայն դպրոցում ապագա զորակոչիկներին մատուցված գիտելիքները ոչ միշտ են բավարար մակարդակ ապահովում՝ իրենց իրավունքների մասին վերջիններիս իրազեկության առումով: Այդ մասին են վկայում թե՛ զինկոմիսարիատների աշխատակիցների, թե՛ հենց իրենց՝ ուսուցիչների պատասխանները՝ կապված զորակոչի ենթակա տղաների կողմից իրենց իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանի հետ: Մասնավորապես, «Ձեր կարծիքով, դպրոցում մատուցված և զորակոչիկի կողմից յուրացված գիտելիքները բավարա՞ր են արդյոք, որ զինակոչիկները և նրանց ծնողները ամբողջովին տեղեկացված լինեն զորակոչի վերաբերյալ՝ ներառյալ տարկետում ստանալու, զինծառայությունից ազատվելու, ծառայության վայրի ընտրության, բուժզննության կարգի և այլ իրավունքների մասին» հարցի համար պատասխանի «ոչ» տարբերակն են ընտրել զինկոմիսարիատների հարցման ենթարկված աշխատակիցների 35.7 %-ը, դպրոցներում հարցմանը մասնակցած աշխատակիցների 60 %-ը :

Ենթադրվում էր, որ զորակոչի վերաբերյալ դպրոցում մատուցված տեղեկատվության բացը պետք է լրացվեր զինկոմիսարիատում: Թեև մոնիթորինգի շրջանակներում ընդգրկված բոլոր զինկոմիսարիատների հարցման ենթարկված աշխատակիցները պնդում էին, որ զինկոմիսարիատներում տարվում են բացատրական աշխատանքներ՝ զորակոչիկների իրավունքները պարզաբանելու նպատակով, այնուհանդերձ զորակոչիկների շրջանում իրականացված

հարցման արդյունքները վկայում են, որ այդ պարտականությունը ոչ միշտ է իրականացվում պատշաճ մակարդակով:

Հարցման ենթարկված զորակոչիկների 70.8 %-ի պնդմամբ կցագրման ժամանակ իրենց չեն բացատրվել իրենց իրավունքները՝ որպես ապագա զորակոչիկի:

Ստորև ներկայացված գրաֆիկական պատկերում արտացոլված է, թե որքանով են զորակոչի ծանուցագրով ներկայացած զորակոչիկները զինկոմիսարիատում տեղեկացվել իրենց իրավունքների մասին:

**Գրաֆիկ 3. Զորակոչիկների իրավունքների պարզաբանման մակարդակը զինկոմիսարիատներում**




Նմանատիպ է պատկերը նաև զորակոչիկների հարազատների շրջանում կատարված հարցման արդյունքում :

Իրենց իրավունքների մասին տեղեկատվության պակասը իրական պայմաններ է ստեղծում զորակոչի գործընթացում խախտումների դրսևորման համար: Պատահական չէ, որ «Ըստ Ձեզ՝ որո՞նք են ներկայումս զորակոչի ընթացքում առավել հաճախ տեղ գտնող խախտումները» հարցին ի պատասխան դպրոցներում, հիվանդանոցներում, տեղական ինքնակառավարման մարմիններում հարցման մասնակիցների 40 %-ը նշել է՝ զորակոչից տարկետման/ազատման հիմքերի չկիրառումը՝ օգտվելով զորակոչիկների անտեղյակությունից: Հիշյալ բաշխումն առավել մանրամասն ներկայացված է ստորև տրված գրաֆիկական պատկերում:

**Գրաֆիկ 4. Զորակոչի ընթացքում առավել հաճախ հանդիպող խախտումները**




## բ/ Զորակոչիկների առողջական վիճակին առնչվող խնդիրներ

Զորակոչի գործընթացում առավել վիճահարույց հիմնախնդիրը կապված է զորակոչիկների առողջական վիճակի հետ: Առաջին հերթին, դա պայմանավորված է նրանով, որ ռազմաբժշկական փորձաքննության Կարգը (որի հիման վրա որոշվում է զորակոչիկի՝ զինծառայության համար պիտանի լինելու կամ չլինելու հանգամանքը) առավել հաճախ ներկայացվում է որպես «գաղտնի» տեղեկատվություն, որը չի կարող տրամադրվել շարքային քաղաքացուն: Ըստ այդմ էլ, որոշակի հիվանդություններով տառապող զորակոչիկը կամ նրա հարազատները, տեղյակ չլինելով Կարգում նշված հիվանդությունների ցանկին, կասկածներ են հայտնում բժշկական հանձնաժողովի եզրակացության օբյեկտիվության, հավաստիության վերաբերյալ:

Յաջորդ հիմնախնդիրը կապված է բժշկական հանձնաժողովի կողմից եզրակացության կայացման հետ: Տարբեր ոլորտների մասնագետների ներգրավումը մեկ հանձնաժողովում մի կողմից երաշխավորում է զորակոչիկի բազմակողմանի հետազոտումը, սակայն մյուս կողմից՝ վերջնական որոշման կայացմանը տարբեր ոլորտների նեղ մասնագիտացման բժիշկների կոլեգիալ մասնակցությունը խոչընդոտ կարող է լինել որոշակի կոնկրետ ոլորտում խոր մասնագիտական գիտելիքների կիրառմամբ ճիշտ ախտորոշման կայացման և ըստ այդմ էլ՝ զորակոչիկին ծառայության ուղարկելու կամ դրանից ազատ արձակելու առումով:

Զորակոչիկների շրջանում անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ նրանց 28.3 %-ը զորակոչային հանձնաժողով է ներկայացրել փաստաթղթեր առկա հիվանդության մասին: Հարկ է նշել, սակայն, որ հիվանդանոցներում/ պոլիկլինիկաներում անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ հենց բժիշկների վկայությամբ իրենց հաստատությունների նյութատեխնիկական կարողությունները ոչ միշտ են հնարավորություն ընձեռում հստակ պատկերացում կազմելու յուրաքանչյուր զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ:

Զորակոչիկների 93.5 %-ի կարծիքով ռազմաբժշկական հանձնաժողովում կատարվել են բոլոր անհրաժեշտ հետազոտությունները իրենց հիվանդությունների բացահայտման նպատակով, մինչդեռ 6.5 %-ը կարծում է, որ բժիշկներն անփույթ են վերաբերվել իրենց պարտականությունների կատարմանը և չեն պարզել իրենց (զորակոչիկների) մոտ առկա հիվանդությունը: Հարցման ենթարկված բոլոր զորակոչիկները նշեցին, որ իրենք անցել են սոնոգրաֆիա, հանձնել են արյան անալիզ, սակայն էլեկտրասրտագրության ենթարկվել էր նրանցից 95%-ը, էխոսրտագրության` 36 %-ը:

Զորակոչիկների 95.3 %-ը նշեց, որ ռազմաբժշկական հանձնաժողովում իրեն խանգարող հանգամանքներ չեն եղել, սակայն 4.7 %-ը որպես այդպիսին նշեց այլ անձանց առկայությունը: Միաժամանակ, հարցման ենթարկված զորակոչիկների միայն 78.5 %-ը նշեց, որ բժշկական հետազոտման ժամանակ ներկայացրել է իր մոտ առկա բոլոր գանգատները :

Հիվանդանոցներում/պոլիկլինիկաներում, զինկոմիսարիատներում, դպրոցներում անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ որպես զինծառայության համար ոչ պիտանի զորակոչիկների` բանակ զորակոչվելու հիմնական պատճառներ դիտվում են զորակոչիկի կողմից գանգատների քողարկումը` հիվանդոտ չթվալու համար կամ դրանք թաքցնելը` ամոթի զգացումից ելնելով:

**Գրաֆիկ 5. Բանակում զինծառայության համար ոչ պիտանի զորակոչիկների հայտնվելու պատճառները**



Սրանց, թերևս, պետք է ավելացնել նաև այն, որ զորակոչիկը հաճախ չի գիտակցում, թե իր մոտ առկա ո՞ր գանգատներն են այնքան լուրջ, որ ներկայացվեն բժշկական հանձնաժողովին: Ենթադրվում է, որ մինչ զորակոչային հանձնաժողով հասնելը պոլիկլինիկաներում արված ստուգումների ընթացքում զորակոչիկը պետք է արդեն իսկ որոշակի գաղափար կազմի իր առողջական վիճակի մասին և իր մոտ առկա հիվանդության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը, մասնավորապես գանգատները հայտնի հանձնաժողովին: Այդ հարցում զորակոչիկին պետք է կողմնորոշեն պոլիկլինիկայի բժիշկները, սակայն պոլիկլինիկաների աշխատակիցների շրջանում անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ վերջիններս հաճախ բավարարվում են իրենց դիմած զորակոչիկներին առկա հիվանդության բնույթը և պրոգնոզը բացատրելով և դա հիմնավորող փաստաթղթերի ցանկը պարզաբանելով: Մասնավորապես, այն հարցին, թե «Զորակոչիկներին բացատրու՞մ եք, թե ինչ տեղեկություններ պետք է հայտնվեն բժշկական հանձնաժողովին, որ հիվանդության մասին ամբողջական պատկեր կազմվի», դրական է պատասխանել պոլիկլինիկաներում հարցման ենթարկվածների 75 %-ը :

Զորակոչային ռազմաբժշկական հանձնաժողովում ներկայացված գանգատների հիման վրա, հարցման ենթարկված զորակոչիկների 24.6 %-ը ուղարկվել էր լրացուցիչ բուժհետազոտման, 4.6 %-ը ստացել էր տարկետման իրավունք:

Մոնիթորինգի ընթացքում գրանցված, ինչպես նաև «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ-ում ստացված բողոքները վկայում են, որ քաղաքացիների շրջանում արժանահավատության կտրվածքով կասկած են հարուցում այն բուժհաստատությունների տված եզրակացությունների արդյունքները, ուր զորակոչիկներն ուղարկվում են լրացուցիչ բուժհետազոտման: Նախ, ինքնին պարզ չէ, թե ինչ որակավորման տեր մասնագետ է իրականացնում հետազոտությունը, արդյոք տվյալ ոլորտում հասանելի ժամանակակից բոլոր հետազոտություններն են իրականացվում, եթե հիվանդությունը հնարավոր է պարզել միայն թանկարժեք հետազոտության իրականացման պարագայում, որքանով է դա իրականում տեղի ունենում:

Թեև հարցման ենթարկված բոլոր զորակոչիկները նշեցին, որ բժշկական հետազոտությունը իրականացվել է անվճար, սակայն հանրապետական ռազմաբժշկական հանձնաժողով հետազոտման ուղարկված զորակոչիկների պատասխանները լիովին նույնական չէին:

**Գրաֆիկ 6. Ո՞վ է վճարել հանրապետական ռազմաբժշկական հանձնաժողովում հետազոտման հետ կապված ծախսերը**




Ինչ վերաբերում է զորակոչիկներին ռազմաբժշկական հետազոտության համար ուղեկցած հարազատներին, ապա նրանց ընդհանրապես որևէ նյութական օժանդակություն չի ցուցաբերվել:

**գ/ Զինկոմիսարիատների և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների, պոլիկլինիկաների միջև համագործակցության թերացումներ՝ զորակոչիկների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության ստացման առումով**

Զորակոչի գործընթացի ապահովման գործում իրենց անմիջական ներդրումն ունեն ոչ միայն զինկոմիսարիատները, այլև վերջիններիս՝ զորակոչիկի վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովող օղակները, այդ թվում՝ դպրոցները, տեղական ինքնակառավարման մարմինները, պոլիկլինիկաները: Իրականացված մոնիթորինգը պարզորոշ կերպով ցույց տվեց,

որ հիշյալ կապի իրականացումը հստակեցման և բարելավման կարիք ունի, ինչի վկայությունն են, առաջին հերթին, զինկոմիսարիատների աշխատակիցների շրջանում անցկացված հարցումների արդյունքները: Նշված արդյունքների վերլուծությունը վկայում է, որ առանձնահատուկ ուշադրության կարիք ունի հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների հետ տեղեկատվության փոխանակման մեխանիզմը: Մասնավորապես, պատասխանելով այն հարցին, թե «Ինչպե՞ս եք գնահատում դպրոցների, տեղական ինքնակառավարման մարմինների, պոլիկլինիկաների հետ կապի արդյունավետությունը», զինկոմիսարիատների՝ հարցման ենթարկված աշխատակիցների 50 %-ից ավելին այն գոհացուցիչ չհամարեց :

**Գրաֆիկ 7. Զինկոմիսարիատների աշխատակիցների գնահատականը ՏԻՄ-երի, պոլիկլինիկաների, դպրոցների հետ կապի արդյունավետությանը**




Ընդ որում, հիշյալ գործոնի առումով առավել մեծ դժգոհություն են հայտնել հատկապես Կոտայքի մարզում հարցման ենթարկված զինկոմիսարիատների աշխատակիցները: Հարցման մասնակիցների 66.7 %-ը թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների, թե՛ դպրոցի հետ կապը համարել է բավարար, բայց ոչ գոհացնող: Արարատի մարզում տեղական ինքնակառավարման մարմինների հետ կապի առումով նման տեսակետ արտահայտվել է հարցվածների 50 %-ի, իսկ դպրոցի հետ կապի արդյունավետության մակարդակի կտրվածքով՝ 16.7 %-ի կողմից:

Տեղական ինքնակառավարման մարմիններում հարցման ենթարկված անձինք ևս դժգոհում են զինկոմիսարիատների հետ կապի ոչ հստակ կանոնակարգումից: Մասնավորապես, այն հարցին, թե «Ինչպե՞ս է իրականացվում Ձեր կապը զինկոմիսարիատի հետ», տեղական ինքնակառավարման մարմինների՝ հարցման ենթարկված աշխատակիցները տվեցին հետևյալ պատասխանները:

**Գրաֆիկ 8. ՏԻՄ-երի աշխատակիցների պատասխանները զինկոմիսարիատի հետ կապի իրագործման տեսանկյունով**



Պոլիկլինիկաներում հարցման ենթարկված անձանց պատասխանների համադրումը զինկոմիսարիատների աշխատակիցների պատասխանների հետ ցույց տվեց, որ այդ ոլորտում առավել արդյունավետ է իրականացվում կապը զինկոմիսարիատների հետ: Մասնավորապես, հարցվածների 91.7 %-ը նշեց, որ զորակոչից 1 ամիս առաջ զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հայտնում են զինկոմիսարիատ: Միայն 8.3 %-ը նշեց, որ տեղեկությունների փոխանցման առումով հստակ կանոնակարգում առկա չէ :

Այլ հարց է, թե որքանով են հստակ պոլիկլինիկաներից զինկոմիսարիատ փոխանցված տվյալները, եթե նկատի ունենանք, որ հիշյալ հաստատությունների աշխատակիցների մեծ մասը՝ 75 %-ը, նշում է այն հանգամանքը, որ զորակոչիկի լիարժեք հետազոտությունն իրենց հաստատություններում հնարավոր չէ հետազոտման գործիքների, նյութերի բացակայության կամ սակավության պատճառով:

Կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ զինկոմիսարիտների աշխատակիցները առավել գոհունակություն են հայտնել դպրոցների հետ համագործակցությունից՝ զորակոչի ենթակա անձանց վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու առումով: Պարզելու համար, թե ինչպես է իրականացվում դպրոցի կապը զինկոմիսարիատի հետ, դպրոցի ուսուցիչներին առաջարկվեց հստակեցնել, թե աշակերտների վերաբերյալ տեղեկատվությունը ինչ ուղիներով, ինչ հաճախականությամբ է հաղորդվում զինկոմիսարիատ: Ստացված պատասխանները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 1. Դպրոցի կապը զինկոմիսարիատի հետ

| | |
|---|---|
| Հստակ կանոնակարգում առկա չէ | 3.1% |
| Կցագրումից մեկ ամիս առաջ նախազորակոչիկների վերաբերյալ տեղեկատվությունը հաղորդվում է զինկոմիսարիատ | 75% |
| Զորակոչից մեկ ամիս առաջ զորակոչիկների վերաբերյալ տեղեկատվությունը հաղորդվում է զինկոմիսարիատ | 9.4% |
| Զորակոչիկների կամ նրանց ծնողների միջոցով տեղեկատվությունը հաղորդվում է զինկոմիսարիատ | 15.6% |
| Անձնական գործի պատճենն է ուղարկվում զինկոմիսարիատ | 62.5% |
| Անձնական հանդիպում է տեղի ունենում զինկոմի հետ | 21.9% |
| Պատրաստվում է պաշտոնական դիմում | 78.1% |

Ակնհայտ է, որ դպրոցի կողմից տրամադրվող տեղեկատվությունը սպառիչ լինելու հավակնություն ունենալ չի կարող: Հիմնականում տեղեկատվությունը տրամադրվում է կցագրումից մեկ ամիս առաջ, պաշտոնական դիմում կազմելով, որին հարցման արդյունքների հիման վրա 62.5 % դեպքերում կցվում է աշակերտի անձնական գործը: Այնուհանդերձ, չպետք է մոռանալ, որ աշակերտի վերաբերյալ տեղեկատվությունը թարմացման կարիք ունի, հատկապես նկատի ունենալով այն հանգամանքը, որ կցագրումից մինչև զորակոչը փաստացի անցնում է 2 տարի:

Հետևաբար, զորակոչի գործընթացի բարելավման նպատակով անհրաժեշտ է ստեղծել զորակոչիկի վերաբերյալ հնարավորինս սպառիչ տեղեկատվության ստացման գործուն մեխանիզմ, որում իրենց կարևորագույն դերը կխաղան ինչպես դպրոցներն ու պոլիկլինիկաները, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինները: Բացի այդ, թե՛ դպրոցներում, թե՛ տեղական ինքնակառավարման մարմիններում, թե՛ պոլիկլինիկաներում պետք է միջոցառումներ իրականացվեն զորակոչի գործընթացի, զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի իրականացման հիմքերի վերաբերյալ հիշյալ հաստատությունների աշխատակիցներին իրազեկելու ուղղությամբ, ինչն էլ

հնարավորություն կտա վերջիններիս առավել հստակ տեղեկատվություն հաղորդելու զինկոմիսարիատ:

**դ/ Զորակոչի գործընթացի՝ կազմակերպական բնույթի թերացումներ**

Զորակոչի գործընթացին վերաբերող առաջնահերթ հիմնախնդիրներից մեկը նաև զորակոչի գործընթացի կազմակերպման ժամանակ տեղ գտած խախտումներն են: Զորակոչի ենթակա անձանց՝ պատահականության սկզբունքով ընտրված շրջանում իրականացված հարցման արդյունքները վկայում են, որ նրանց 21 %-ի պնդմամբ ծանուցագիրը ստանալու պահին իրենց 18 տարին դեռ լրացած չի եղել:

Հարցման ենթարկվածների 32.8 %-ը նշել է, որ իրենք զինկոմիսարիատ են կանչվել ոչ թե գրավոր ծանուցագրի հիման վրա, այլ բանավոր ծանուցվելով: Ծանուցագիրը ստանալիս անձամբ ստորագրել են զինակոչիկների 81.5 %-ը :

Զինկոմիսարիատում աշխատանքների կազմակերպման թերություններից է նաև այն, որ զորակոչիկները ստիպված են լինում անհարկի սպասել մինչև իրենց հարցի քննարկումը: Մասնավորապես, հարցման ենթարկվածների 58.5 %-ի պնդմամբ իրենք ստիպված չեն եղել սպասել, մինչդեռ 23.1 %-ը նշել է, որ ստիպված է եղել անհարկի սպասել 1 ժամ, իսկ 18.5 %-ը՝ 2-4 ժամ:

Կարևոր է նաև զորակոչիկների և նրանց հարազատների նկատմամբ զինկոմիսարիատների աշխատակիցների վերաբերմունքի գնահատումը: Ծանուցման պահին զինկոմիսարիատի աշխատակիցների վերաբերմունքը դրական են գնահատել հարցման ենթարկված զինակոչիկների և նրանց հարազատների 68.7 %-ը, չեզոք/անտարբեր դիտարկել՝ 31.3 %-ը :

Զինկոմիսարիատում գտնվելու ժամանակ զորակոչիկների նկատմամբ դրսևորված մոտեցումը «քաղաքավարի, հոգատար» է գնահատել հարցման մասնակիցների 53.9 %-ը, մինչդեռ 46.1 %-ը այն համարել է «անտարբեր»: Զորակոչիկներին ուղեկցող ծնողների, հարազատների հանդեպ վերաբերմունքը դրական արձագանքի է արժանացել հարցման մասնակիցների 90.8 %-ի կողմից, և միայն 9.2 %-ն է այն համարել անտարբեր :

Պետք է նշել, սակայն, որ նշված թերությունները պայմանավորված են ոչ միայն սուբյեկտիվ, այլև օբյեկտիվ գործոններով: Մասնավորապես, խոսքը վերաբերում է զինկոմիսարիատներում զորակոչի գործընթացում ներգրավված աշխատակիցների թվին, որը ոչ միշտ է համաչափ զորակոչի շրջանակներում ընդգրկված անձանց թվային համամասնությանը, ինչն էլ օբյեկտիվորեն ժամանակային ձգձգումների, զորակոչիկներին անհարկի սպասեցնելու պատճառ է դառնում (նման վիճակ նկատվել է Արարատում):

## Առաջարկություններ

1. Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել զորակոչիկներին իրենց իրավունքների մասին տեղեկատվության մատուցմանը: Այդ նպատակով առաջարկվում է ծանուցագիրը զորակոչիկին հանձնելիս, որպես պարտադիր փաստաթուղթ, վերջինիս նաև հանձնել զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու հիմքերը պարզաբանող հուշաթերթ:
2. Հստակեցման կարիք ունի զորակոչիկների բժշկական հետազոտման հարցը: Ցանկալի կլիներ, որ զորակոչիկի մոտ հիվանդության կոնկրետ տեսակի գանգատների առկայության պարագայում վերջնական եզրակացությունը տրվեր ոչ թե տարբեր ոլորտներում նեղ մասնագիտացման տեր բժիշկներից, այլ համապատասխան ոլորտի մասնագետներից բաղկացած խմբի կողմից:
3. Առանձին հիվանդություններ պահանջում են լրացուցիչ հետազոտություններ, որոնք երբեմն չեն անցկացվում դրանց բավականին թանկ լինելու կամ համապատասխան սարքավորումների բացակայության պայմաններում: Անհրաժեշտ է մշակել գործուն մեխանիզմ (օ-

րինակ՝ մասնագիտացված և անհրաժեշտ տեխնիկական հագեցվածություն ունեցող հիվանդանոցների հետ համապատասխան ծառայությունների մատուցման վերաբերյալ արտոնյալ/զեղչային պայմանների ապահովմամբ պայմանագրերի կնքմամբ), որը հնարավորություն կտա զերծ մնալու նման թերացումներից:

4. Առավել հստակեցման կարիք ունեն օրենսդրական ակտերում տեղ գտած առանձին հիվանդությունների բնութագրերը/հատկանիշները, որոնց առկայության դեպքում զինապարտը կարող է ձեռք բերել տարկետում: Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել ոչ որոշակիությունից և գնահատման սպեկտրը հասցնել նվազագույնի, ընդ որում՝ կասկածների առկայության դեպքում վերջնական եզրահանգումը կատարել հօգուտ հիվանդ-զորակոչիկի:
5. Վերանայման կարիք ունի առանձին զինկոմիսարիատներում աշխատակիցների թվային բաշխման հարցը՝ ելնելով սպասարկվող տարածքի մեծությունից և զորակոչիկների թվային համամասնությունից:
6. Քննարկման կարիք ունի զինկոմիսարիատների աշխատակիցներին քաղաքացիականացման գործընթացում ներգրավելու հարցի նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով, որ վերջիններս, որպես կանոն, հիմնականում առնչվում են քաղաքացիական անձ հանդիսացող զորակոչիկների կամ պահեստային զինծառայողների հետ:
7. Բարելավման և հստակ կանոնակարգման կարիք ունի զինկոմիսարիատների և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների, պոլիկլինիկաների միջև զորակոչի ենթակա անձանց վերաբերյալ տեղեկատվության փոխանցման մեխանիզմը: Պետք է սահմանել տեղեկատվության փոխանցման/բաշխման մեխանիզմներ, որոնք կհիմնվեն պրոակտիվ գործելաոճի վրա: Օրինակ՝ դպրոցի տնօրեններն իրենց նախաձեռնությամբ պետք է զինկոմիսարիատներին տրամադրեն այն ողջ տեղեկատվությունը (հատկապես զորակոչիկների ընտանեկան վիճակի մասին), որն անհրաժեշտ է զորակոչիկին տարկետում տրամադրելու կամ զինծառայությունից ազատելու հարցի լուծման համար, և ոչ թե սպասեն, մինչև իրենցից համապատախան տեղեկատվությունը պահանջի/խնդրի որևէ մարմին:
8. Հիվանդանոցներում, պոլիկլինիկաներում ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի հիվանդ զորակոչիկների ռազմաբժշկական հանձնաժողովի ստուգմանը նախապատրաստելու գործընթացին: Վերջիններիս պետք է ցուցումներ տրվեն, թե իրենց մոտ առկա ո՞ր գանգատներն անպայման պետք է ներկայացվեն բժշկական հանձնաժողովին:
9. Դպրոցներում, տեղական ինքնակառավարման մարմիններում, պոլիկլինիկաներում պետք է իրականացվեն զորակոչի գործընթացի, զորակոչից տարկետման, զինծառայությունից ազատման, բնակավայրին մոտ ծառայելու իրավունքի հիմքերի վերաբերյալ հիշյալ հաստատությունների աշխատակիցներին իրազեկելուն ուղղված միջոցառումներ, ինչն էլ հնարավորություն կտա վերջիններիս առավել հստակ տեղեկատվություն հաղորդելու զինկոմիսարիատ: